ՄԱՍԻՍ

Լրագիր ազգային, քաղաքական, տնտեսական և բանասիրական

Խմբ. Կարապետ Ս. ՈՒթուջյան

1852թ., ապրիլի 19, N 12

«Նոր ժամանակներս՝ ազգային դպրոցները սկսան ազգին հասարակութենեն կազմված ընկերությանց միջոցով խնամվել: Այս ազնվական խորհուրդին առաջին ծնողքը Զմյուռնիո Սյունյաց ընկերությունը կազմող մեծարգո աղաները եղան 1841-ին, որ հետզհետե վեց դպրոց բացին Զմյուռնիոյ շրջակայքը, այսինքն՝ Մելեմենի, Մանիսայի, Պայենտերի, Այտընի, Նազիլիի և Դարդանյան կիրճի (Չանագ կալեսի) մեջ, ու Զմյուռնիո մեջ արդեն հաստատված Մեսրոպյան դպրոցն ալ իրենց մասնավոր պաշտպանության տակը առին: Այս ընկերության անմիջապես հետևող եղան Խասգյուղի Սուրբ Ներսիսյան ընկերությունը կազմող հարգի աղաները 1844-ին ու անկե ետև ընկերությամբ դպրոցները նայելու բարի սովորությունը ազգին ամեն հատվածներուն մեջ մտավ»:

Օ. Բ.

1852 թ., մայիսի 7, N 15

«Կայսերական կառավարությունը այս օրերս ծանուցագիր մը խրկեց օտար տերությանց դեսպաններուն և կը խնդրե, որ տերության հողին մեջ գտնվող իրենց ազգայիններեն և հպատակներեն, որոնց որ կվերաբերի նե՝ իմացընեն.

> Մայրաքաղաքիս մեջ տպագրության արհեստին զբաղյալ օտարազգիները Կայսերական կառավարության սահմանադրությանցը հակառակ ժամանակե մը ի վեր տաճկերեն և ուրիշ լեզվով գիրքեր ու տետրակներ կը տպեն: Տպագրությունը վերջին աստիճան փափուկ (նազիք) արհեստ մը ըլլալով, օտարազգի տպագրապետներուն այս ընթացքը խիստ գեշ հետևանքներ կրնա ունենալ: ՈՒստի տպագրության արհեստը բանցընելու համար մինակ իրենց կամքին հաճությունը բավական չէ:
>
> Ասոր համար խստիվ արգիլյալ է տերության հրամայածեն դուրս տաճկերեն գրով գիրքեր և տետերակներ տպելը, և ուրիշ լեզվով ալ գիրք չեն կրնար տպել օտարազգի տպագրիչները, մինչև որ Բարձրագույն դռնեն հրաման առած չըլլան»:

1852թ., սեպտեմբերի 17, N 34

«Արժանահարգ Պ.Խաչատուր Պարտիզպանյանը, որ քանի մը տարիե ի վեր Փարիզ կը գտնվեր, անցյալ շաբթու մայրաքաղաքս հասավ Գաղղիական ԼԵՈՆԻՏԱՍ շոգենավով»:

(Այսպիսիների մասին գրում էին, իսկ Ոսկանյանի մասին՝ ոչինչ)

Փարիզի գլխավոր լրագիրները.

Քոնսդիդուսիոնել	23,000 բաժանորդ	Ասամպլե նասիոնալ	6500
Սիեքլ	19,500	Ժուռնալ դե Ֆե	5500
Բռես	19,500	ՌԻնիվեր	5000
Բադռի	14,000	ՌԻնիոն	4000
Տեպա	10,500	Կազեթ դը Ֆրանս	3500
Բեյի	9,500	Տռռա	3500
Իսդաֆեդ	8000	Կազեթ դը Դռիպյունն	2200

1853թ., հունվարի 21, N 3

Զմյուռնիայից ստացված նամակ է, որից տեղեկացվում է, որ Սյունյաց ընկերությունն արդեն գոյություն չունի։

«Նախ՝ թե որ կենդանի է՝ ինչո՞ւ համար տարվե տարի իր հաշվեցուցակը չի դներ «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ» մեջ, ընկերության երեքտասաներորդ կանոնին համեմատ։

Երկրորդ՝ ինչո՞ւ համար ընկերության հոգաբարձուն, երեք տարի առաջ յուր հրաժարականը տալեն ետքը, անոր տեղը ուրիշը չէ դրված։

Երրորդ՝ ինչո՞ւ համար յուր այս ցուցցած հաշվեցուցակին մեջ ուսումնականության վերաբերյալ ծախքեն դուրս քանի մը ծախքեր կը դնե երկուտասաներորդ կանոնին հակառակ։

Չորրորդ՝ ո՞ւր են բաժանորդները։

Հինգերորդ՝ ո՞ւր կը մնա ընկերության 19,000 դուրուշը, որ չորս տարվան տոկոսովը 35,000 դուրուշի չափ պետք է ընել»։

1853թ., հունվարի 28, N4 (53)

«Փարիզի մեջ քաղաքական օրագիրներուն թիվը անցյալ տարիեն ի վեր պակսելով, հիմա 12 հատ մնացած է։ Այս լրագիրներն են ՄՈՆԻԹԵՌՌ, ԲԵԻ, ԲԱԹՌԻ, ԻՆԻՈՆ, ԿԱԶԵԹ ԴԸ ՖՐԱՆՍ, ԱՍԱՄՊԼԵ-ՆԱՍԻՈՆԱԼ, ՏԵՊԱ, ԷՍԹԱՖԵԹ, ՔՈՆՍԹԻԹՈՒՍԻՈՆԵԼ, ԲՌԵՍ, ՍԻԵՔԼ և ԻՆԻՎԵՌ։

1848-ին և 1849-ին օրագիրներուն թիվը 30-են ավելի էր, ետքը հետզհետե պակսեցավ։ Գավառներուն մեջ ալ տարիե մը ի վեր՝ լրագիրներուն թիվը գրեթե կիսով պակսեցավ»։

1853թ., փետրվարի 18, N 7(56)

«Զմյուռնիո Ս.Ստեփաննոս եկեղեցվույն շինությունը լմննալու վրա ըլլալով» տալիս է չափերը։

Ճարտարապետն էր Մինաս աղան, գործը անում էր Մելքոն Երամյանը, որը «վեմափայլ արքունի ճարտարապետ Պալյան Նիկողոս աղային գլխավոր գործակալներեն մեկն է»: Մինաս աղան շատ զբաղված լինելով՝ գործը հիմնականում անում էր Մելքոն Երամյանը:

1853թ., մարտի 4, N 9 (58)

«Լրագրույս տպված ժամանակը լուր կառնենք, որ Կայսերական բարեխնամ կառավարությունը Հռոմեական հայոց մեջ այս օրերս բորբոքած խռովությանց առաջքը առնելու համար հրաման ըրեր է այսօր, որ Գերապայծառ Հասունյան արքեպիսկոպոսը, տեր Պողոս Մաղաքյան և Ամբրոսիոս Մաղաքյան քահանաները առժամանակ մը եկեղեցի չերթան, մինչև որ Բ դռան կողմեն հարկավոր եղած քննությունններն ըլլալով, արդարության համաձայն այս վեճերուն վախճան տրվի»:

1853 թ., մայիսի 13, N 19 (68)

Ազդարարում է Զմյուռնիայում Աղաբեկյան վարժարանի գոյության մասին: Վարժարանը բացվել է 1851-ին:

«Այս նոր վարժարանին հիմնարկու և տնօրենները Աղաբեկյան Մարկոս և Մամուռյան Մատթեոս պարոնայք են: Ասոնք իրենց կրթության սկզբնավորությունը Զմյուռնիո մեջ Մեսրոպյան բարեհամբավ վարժարանը ըրած են:

1845-ին հիշյալ քաղաքին աղետալի հրդեհեն ետքը Վ.Հ. Պետրոս Մանասյան վարդապետին ընտրությամբը Փարիզի Մուրատյան վարժատանը խրկվեցան իրենց ծնողացը հավանությամբը, որպեսզի հոն իրենց կրթությունը զանազան ուսմունքներով կատարելագործեն: Ուստի 3-4 տարի Մուրատյան վարժարանին մեջ իրենց ազգին օգտակար ըլլալու դիտավորությամբ զանազան ուսման մեջ կրթվելեն ետև հայրենիքնին դառնալով իրենց դիտավորությունը ի գործ դնելու ըզբաղյալ են»:

Նամակ խմբագրությանը. «Քանի մը ատենե ի վեր մեր ազգին մեջ տեսակ տեսակ գրվածքներ ի լույս կընծայվին այլևայլ նյութերու վրա, գլխավորապես հավատո վերաբերյալ խնդիրներու վրա: Ասոնց հեղինակները անշուշտ ազգին երախտագիտությանը արժանի են, վասն զի նպատակնին ազգը լուսավորել է, ճշմարտությունը երևան հանելով ան նսեմ ամպերուն մեջեն, որոնցմով կեղծավորներն ու խաբեբաները կը ծածկվեին մինչև այս օրս:...

Բայց կը ցավինք ըսելու, որ աս բարի նախանձը հավասարապես ամենուն ազդելով, ամենքն ալ գրիչը ձեռքերնին կառնուն բան մը հորինելու բաղձանքով, առանց որոշ նպատակ մը ունենալու, առանց իրենց արժանավորությունը կամ կարողությունը կշռելու, առանց հետևանքները մտածելու, այլ մի միայն հեղինակ ըլլալու դիտավորությամբ, և՝ ոմանք իրենց վրա անանկ մեծ վստահություն ունին, այնպես կը գոռոզանան, որ ուրիշի խորհուրդը ու իրավացի դիտողությունները կարհամարհեն ու միայն իրենց տկար մտքին խորհուրդներուն կուրաբար կը հետևին: Ասանկով լի պակասությամբ ու անճոռնի գրվածքներ երևան կելլեն ամեն օր մեր ազգին մեջ: Եթե անպակասությունները միմյայն հեղինակին վերաբերեին, ան ատենը մեզի լռել կը վայելեր, բայց

այնպես չէ՛: Աս գրվածքներուն մեծ մասը ամենափափուկ խնդիրներու վրա ըլլալով, ամեն մեկ պակասությունը մեր ազգին դեմ չարախոսաց մեյ մեկ զենք կըլլան զմեզ խոցելու:

Բայց աս ալ կը փութանք ծանուցանելու, թե մեր խոսքը հավասարապես ամեն գրվածքներու վրա չէ: Վասն զի այնպիսիններ ալ կան, որոնք ազգին պատիվ ու հեղինակին պարծանք են և ընդհանուր ազգին հավանության դրոշմը կը կրեն իրենց վրա:

Մեր խոսքը քանի մը իմաստակներու համար է, որոնք ուղիղ գրելը անգամ չի գիտնալով, հեղինակ ըլլալ կուզեն, իբր թե հեղինակ ըլլալու համար քանի մը քերականական հոլովունքներն ու քանի մը բայերու խոնարհմունքը գիտնալը (երանի՜ թե ան ալ կատարյալ գիտնային) բավական ըլլար:

Ի վերջ բանիս կը հորդորենք մեր բարենախանձ իմաստակները, որ հեղինակության բաղձանքը թողուն ու զիրենք ուղիղ գրելու ու լավ տրամաբանելու վարժեն: Ան ժամանակը ազգային երախտագիտությանը ավելի արժանի կըլլան: Իսկ թե որ մտքերնին բերեն, թե իրենց գրվածքը փոխանակ ազգին պատիվ ընելու, անարգանք կը բերե, թե ազգը առանց պաշտպանի չէ մնացած ու իրենց փափուկ պաշտոնը կատարելու համար արժանավոր անձինք ունի, ան ժամանակը հարկավ, իրենց գովելի, բայց կանխահաս բաղձանքեն ետ կը քաշվին:

Կը խնդրեմ, արգո բարեկամ, որ մեր աս քանի մը տող խորհրդածությունները ձեր պատվական լրագրույն մեջ հրատարակելու բարեհաճիք, ի ըզգաստություն իմաստակաց»:

Խմբագրության կողմից. «...Ի սրտե շնորհակալ ըլլալու կպարտավորինք, ամեն հին ու նոր այսպիսի չնչին կամ անճոռնի գրվածոց հեղինակներուն, որ անուղղակի ճամբով ազգերնուս հասարակության ախորժակը կրթելու, աղեկը գեշեն, պիտանին անպիտանեն, օգտակարը վնասակարեն որոշելու համար անսպառ նյութ պատրաստած են մեզի՝ իրենց բուն բաղձանքին երբեք չի հասնելով:

ՌԻստի կը հուսանք և մանավանդ կ'աղաչենք, որ այնպիսինները իրենց աշխատության անհաջող վախճանը կամ հակառակ արդյունքը ճանչնալով, անհամ, ափեղցփեղ և անճոռնի գրվածներու հեղինակ ըլլալու հիմար փառասիրութենեն ավելի՝ ընտիր գիրքեր կարդալու դատումնին ուղղելու, գրիչնին վարժելու և մանավանդ իրենց կարողությանը չափը ճանչնալու ազնիվ փառասիրությունը ընտրեն: Այն ժամանակը՝ ազգին ավելի օգտակար ծառայություններ ընելու և անշուշտ ամենուն առջև հարգ ու համարում ստանալու կարողություն և իրավունք կունենան»:

1853թ., հոկտեմբերի 7, N 40 (89)

«Վենետիկու սուրբ Ղազարու Մխիթարյան» (իտալերեն պարսավագիրը)

Հռոմի Սուրբ Ժողովը արգելել է և դատապարտել 1852 թ. սեպտեմբերի 6-ին «ընդդեմ անանուն հեղինակի պարսավագրքին ... համառոտ պատասխանի»: Հեղ.՝ Հովսեփ Կապյուլետտի, դատապարտվել է 1853 թ. սեպտեմբերի 5-ին:

1854թ., հուլիսի 8, N 128

«Փարիզի Օսմանյան դեսպան վսեմափայլ Վելի փաշային միջնորդությամբը Փարիզի մեջ հայկական մատուռը մը հաստատությանը հրաման եղեր է:

Ահավասիկ այս հրամանը ծանուցանող գրությունը, որ Վելի փաշան խրկած է Փարիզ գտնվող Շահնազարյան Տ.Կարապետ վարդապետին:

Փարիզ, 6 հունիսի, 1854 թ.

Առ արժանապատիվ Կարապետ վարդապետ Շահնազարյան

Տեր.

Իմ կառավարութենես առած պատվերներուս համաձայն, որ իր ամեն հպատակներուն օգուտը միշտ մտածելով, ինծի հրամայեց Գաղղիո կառավարութենեն թույլտվություն խնդրելու մեր Օգոստափառ Ինքնակալին հայազգի հպատակներուն համար մատուռ մը հաստատելու, պետք եղած ջանքը ըրի, և պատիվ կը համարիմ ինծի ծանուցանել ձեզ, թե Գաղղիո արտաքին գործոց պաշտոնեն իմացա, որ հայկական մատուռ մը հաստատելու հրամանը եղած է և այս մասին հարկավոր եղած պատվերները տրված են Փարիզի տեսչության վերակացուին:

Ռիստի կրնաք Սուրբ Մատուռը բանալ և ըստ օրինի օրհնել և հույս ունիմ, որ ձեր քահանայական պաշտոնը վարած ժամանակնիդ կայսերական կառավարության վստահությանը արժանի կը հանդիսանաք և ձեր հայրենակիցներուն փափազները կը լեցնեք:

Ընդունեցեք, տեր, իմ խոր հարգանացս հավաստիքը:

Դեսպան Տաճկաստանի

Վելի փաշա

Այս անգամ Փարիզեն եկած նամակներեն կ'իմանանք, որ մատուռը արդեն բացվեր է Փարիզի Թուռնոն փողոցի մեջ, թիվ 20 և հունիս 13-ին, կիրակի օրը Արժանապատիվ Կարապետ վարդապետը առաջին Սուրբ պատարագը մատուցեր է, որուն ներկա գտնվեր են Փարիզ եղող բոլոր հայազգիները»:

1855թ., օգոստոսի 18, N 186

«Ցավալի սրտիվ կը ծանուցանեմք, թե պատվելի Հովհաննես վարժապետը Շահինյան վանեցի, Զմյուռնիո Հռիփսիմյանց դպրատան հայերենի դասատուն, ամսույս 7-ին առ Աստված փոխեցավ 8 օր ծանր հիվանդություն մը քաշելեն ետքը»:

1855թ., նոյեմբերի 17, N 199

«Վենետիկի Մխիթարյան միաբանության Աբբահայր գերապայծառ Գևորգ Հյուրմյուզյան Արքեպիսկոպոսը այս օրերս Փարիզի մեջ գաղղիերեն լեզվով տետրակ մը հրատարակեց. «Պատմություն ի վերա Մուրատյան վարժարանին և խորհրդածությունք ի վերա հիմանց և երաշխավորությանց այսր հաստատության» անունով:

Այս տետրակը՝ անցյալները Արժանապատիվ Հ.Գաբրիել Այվազովսկի վարդապետին «Հայտարարություն անցից Մուրատյան վարժարանին» անունով հրատարակած գրքին բոլորովին հակառակն ըլլալով...»

(Բերված է Հյուրմյուզյանի գրքից մի ընդարձակ հատված)

(Հաջորդ համարում էլ անդրադարձված է այս հարցին)

1855թ., դեկտեմբերի 1, N 201

Հիշատակում է Ոսկանյանի «Արևելքը»՝ առանց հրատարակչի անունը տալու և այն էլ՝ հիշատակվում է Հյուրմյուզյանի հետ բանավիճելու պատճառով:

1856թ., հունվարի 5, N 206

«Ջոհալ»-ը հանդես է եկել Հյուրմյուզյանի ֆրանսերեն գրքի պաշտպանությամբ: Հոդվածը ջախջախում են:

1856թ., հունվարի 10, N 208

Տպագրված է բժիշկ Քենարի նամակը Ստեփան Ոսկանյանին, Քլոքեի մահվան առթիվ: Քենարը հին բարեկամի նման է խոսում Ոսկանյանի հետ: Հոդվածն արտատպված է «Արևելքից»:

«Մասիսը» գովասանք է ասում «Արևելքի» և նրա խմբագրի հասցեին:

1856թ., մարտի 15, N 216

Փարիզի «Յունիվեր» կրոնական ամսագիրը հայերի դեմ հոդված է գրել: «Արշալույս Արարատյանը» պատասխանել է, «Մասիսը»՝ արտատպել է:

«Մեր ազգային կռիվներուն վերաբերյալ հոդված մը, զոր Փարիզը «Իւնիվեռ» ըսված կրոնական լրագրույն հունվարի 6-18 թիվեն թարգմանեցինք, ճիզվիթության վրայոք մեր ունեցած <u>ներքին համոզումները</u> կապացուցանեն բարեմիտ հասարակության առջև»:

... «Առայժմ հայերը երեք կուսակցության կը բաժնվին: Առաջին կուսակցությունը, որուն գլուխ կը գտնվի Տատյան Պողոս աղան, բաղկացյալ է անշուշտ այս ազգի ամենեն լուսավորյալ և երևելի մարդիկներե, բայց դժբախտությամբ բազմաթիվ չըլլալով, չեն կրնար առաջ տանել իրենց սրտին մեջ պահված ներքին համոզումը»:

(Ակնարկվում է Ոսկանյանի «Ներքին համոզումն» աշխատությունը: Այս հոդվածը կարող է Ոսկանյանինը լինել): Ընդգծումները իմն են:

1856 թ., մայիսի 23, N 226

«Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր Գևորգ Հյուրմյուզյանը այս օրերս երկրորդ տետրակ մըն ալ հրատարակեց Փարիզի մեջ գաղղիերեն լեզվավ»: (Այս տետրակին «Մասյաց աղավնին» պատասխանում է, «Մասիսն» էլ արտատպել է):

1856 թ., հունիսի 13, N 229

«Նորին մեծապատվության հետ (Խորասանճյան Գևորգ աղայի. Ս.Շ.) Փարիզ գացին նաև Նորատունկյան մեծապատիվ Հակոբ աղային երկու որդիքը՝ ազնվաշուք Պաղտիկ և Յարություն աղաները»:

1856թ., օգոստոսի 29, N 240

Խաչատուր Ոսկանյանի՝ Նյու-Յորքում ծավալած գրական-մշակութային գործունեության դրվատանքն է, արտատպված անգլիական ամսագրից:

1856 թ., հոկտեմբերի 31, N 249

Կարապետ Շահնազարյանի՝ Ղևոնդ վարդապետի թարգմանությունն է գովում, նշում է նրա «Նկարագիր հայոց պատմության» (Էսքիս ըը լ'իսթուառ ա'Առմենի) ֆրանսերեն գիրքը: Տալիս է այն պատմիչների ցանկը, որը Շահնազարյանը մտադիր է ֆրանսերեն թարգմանել ու հրատարակել: (14 անուն «Շար հայ պատմագրաց» խորագրաց ներքո):

1857թ., հունվարի 17, N 260

«Փարիզ նստող Խապարաճի Կարապետյան Գրիգոր վարդապետը ԸՆԾԱՅ անվամբ անճոռնի ոճով ու ափեղ-ցփեղ լեզվով, խենդ ու խելառ խոսքերու և մտածություններու ժողովածու մը շինած էր Հայաստանյայց ազգին, կրոնին, եկեղեցականացը և Փարիզի երեք գերարգո վարդապետացը դեմ»:

Սրան Թ.Կըկռիկյան ստորագրությամբ և «Ընդունելություն ընծայի» խորագրով պատասխան է հրատարակվել: Սրան էլի պատասխանում է Խապարաճյանը: Այս հարցն է քննարկված:

Խաչատուր Միսաքյանը իր և Աստվածատուր Ջունդի կողմից հայտնում է, որ Թ.Կըկռիկյան ստորագրության ներքո իրենք չեն թաքնված: (Լրիվը կա Մատենադարանում)

1857 թ., հունվարի 24, N 261

Աստվածատուր Ջունդը հավաստում է, որ ինքը չէ թաքնված «Թ. Կըկռիկյան» ստորագրության ներքո և հավելում է, որ այդ գրողը պոլսեցի չէ:

1857 թ., մարտի 7, N 267

Խաչատուր Միսաքյանը նորից է հավաստում, որ «Թ.Կըկրիկյանը» Զունդը չէ:

1858 թ., հունվարի 23, N 313

(Ստացել էին մի նամակ «Ազգային ոմն Վանեցի» ստորագրությամբ)

«Հիշյալ նամակին հեղինակը կամ բերողը ով որ է նե՝ կը խնդրենք, որ լրագրույս գրասենյակը գա և խմբագիր-տնօրենին հետ տեսնվելով՝ ինքզինքը անոր ճանչցունե: Հեղինակը մեզի անծանոթ եղած նամակ կամ հոդված չկրնար հրատարակիլ լրագրույս մեջ, թեև առանց ստորագրության հրատարակել արժան դատվի»:

1858 թ., հուլիսի 31, N 340

Քննադատում է «Մեղվին», որը բանավիճել է «Մասիսի» հետ: Նաև N 348-ում:

1858 թ., նոյեմբերի 20, N 356

«Նորատիպ մատյանք» խորագրի ներքո պրոպագանդում է Մարկոս Աղաբեգյանի «Հայտարարություն կանոնաց Ս. Մեսրոպյան ազգային վարժարանին որ ի Զմյուռնիա» գիրքը: Դրվատված է Մարկոս Աղաբեկյանի գործունեությունը:

1859 թ., մարտի 12, N 372

Նորատիպ մատյան

«Այբբենարան զաղղիերեն-հայերեն, հայոց դպրատանց համար»: Հորինեաց Է.Մ. Ռօսսի, Զմյուռնիո Ս.Մեսրոպյան դպրոցին մեջ զաղղիերեն լեզուի դասատու:

1859 թ., հունիսի 25, N 387

Եվրոպական լուսավորության վրա որոշ գաղափար չունեցող բարեմիտ անձինք, զարմանք չէ, որ գայթակղած ըլլան ժամանակե մը ի վեր Փարիզեն մայրաքաղաքս եկած ԱՐԵՒՄՈՒՏՔ անուն կիսամսյա տետրակի մը խայտառակ և նողկալի բարբաջանքները կարդալով կամ լսելով: Հիշյալ տետրակը գռեհիկ գաղափարներու և զազիր խոսքերու հյուսվածք մը նե. իր ամեն էջերեն թշնամանք ու հայհոյություն կը ժայթքե. ժահահոտությունը կը բուրե, բայց փութանք ըսելու, թե փոխարեն իր արժանավոր վարձքն ալ կընդունի, որ է ընդհանուր ազգի մը զզվանքը: Սակավաթիվ ընթերցող և անթիվ արհամարհող ունի:

Դժբախտաբար հիշյալ խայտառակ տետրակն իր ճակատը «ԱՐՁԱԳԱՆԳ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆ* տիտղոսով զարդարած և Քաղաքակրթություն ու Լուսավորություն բառերը իրեն պժգալի դարախոսությանցը գործիք ըրած ըլլալով, հասարակության մեջեն շատերը խիստ գեշ ու անհաճո գաղափար մը ստացած են այս բառերուն վրա: Կը ցավինք ըսելու, բայց չենք կրնար ժխտել, որ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ բառը այսօրվան օրս ծաղրու նշավակ եղած է, ատելի եղած է շատերին:...

Այս սխալ կարծիքները կուզենք և պարտք կը համարինք այս անգամ ցրել, ճշմարիտ լուսավորության ու քաղաքակրթության էությունը և ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ ու անոր խմբագրին ասոնցմե ո՛րչափ հեռի և զուրկ ըլլալը համառոտիվ բացատրելով:

Քաղաքակրթություն ըսելով կիմացվի բարեկրթություն կամ մարդավարություն, լուսավորություն ըսելով ալ կիմացվի խելքի և մտաց կրթություն և զանազան օգտակար տեղեկություններով ու հմտություններով մշակում: Քաղաքակրթյալ ու լուսավորյալ մարդ ըսելով, կիմացվի՝ իր պարտքն ու իրավունքը ճանչցող, մտացի, խոհական, պարկեշտ, քաղաքավար ու բարեբարո անձ մը:

Հիմա գանք Արևմուտքի խմբագրին ինչպես մարդ ըլլալը հասկընալու: Այս մարդուն համար կըսեն, թե Զմյուռնիայի պարկեշտ ընտանյաց մը որդի է: Մանկության ժամանակը բավական ուշիմ ըլլալով, բարերարներու ձեռնտվությամբ Փարիզ կրթության խցկվեր է, բայց մեկ-երկու տարիե ետև հիշյալ բարերարները չենք գիտեր ինչ պատճառավ իրենց պաշտպանությունը վերուցեր են վրայեն: Ասոր վրա Փարիզի Սենթ Պարպ անուն երևելի դպրոցին տնօրենը՝ Մ.Լամբրուստ, որ հազվագյուտ բարի անձ մըն է, ամեն Փարիզ գացող հայազգյաց ծանոթ, այս լքյալ պատանիին վրա գթալով՝ մարդասիրաբար իր պաշտպանությանը ներքև առեր և իր զավկին պես կը խնամեր:

Ասանկ քանի մը տարի հիշյալ ազնվամիտ գաղղիացին Ստեփան Ոսկանյանը (ԱՐԵՒՄՈՒՏՔԻ խմբագրին անունն է) Սենթ-Պարպի դպրոցին մեջ խնամելեն ետև, 1848-ին հեղափոխությունը կը ծագի և անոր հետ՝ հավասարականության (քոմյունիզմ) ու ընկերականության (սոսիալիզմ) աշխարհակործան սկզբունքները երևան կելլեն Գաղղիո մեջ: Ս.Ոսկան՝ այս վնասակար սկզբունքները քարոզող լրագիրներ ու գիրքեր կարդալով, կաշակերտի անոնց ու ջերմեռանդ ջատագով մը կըլլա նույն սկզբունքներուն, որոնք 1848-ին ու 49-ին այնչափ արյունահեղություններու պատճառ ըլլալով, հասարակապետությունը ատելի ըրին գաղղիացվոց ազգին: Ս.Ոսկան յուր ստացած գեշ սկզբունքները Սենթ-Պարպի դպրոցին աշակերտացը քարոզելու ելլելով և անոնց շատին գաղափարը ավրելով, աշակերտաց ծնողները բողոք վերցուցին, դպրոցին անունը կոտրեցավ, չարյաց պատճառը փնտռվեցավ ու վերջապես Ս.Ոսկանն ըլլալը հայտնվեցավ: Ամենքը մեկեն տնօրենին վրա վազեցին. քու պաշտպանած պանդուխտ հայազգիդ դպրոցիս տղայքը թունավորեր է, գոչեցին, դպրոցիս համբավը կոտրեցավ. հինգ-վեց հարյուր աշակերտեն երեք հարյուր աշակերտ մնաց. դպրոցս կործանման վտանգի մեջ է. ընկերության սնտուկը այսչափ բաց ունի: Շուտ ըրե, կամ այդ վնասակար հայազգին հիմա վռնտե, կամ եթե չես վռնտեր նե՝ դպրոցիս տնօրինութենեն հրաժարե ու դուն ալ հետը գնա: Խեղճ Մ. Լաբրուստ իր ըրած մարդասիրությանը փոխարեն այս անպատվությունն ու վիշտերը կրելեն ետև, կանչեց Ս.Ոսկանը և

* ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ մինչև հիմա ելած թիվերը տեսնող ու կարդացողները ամենքն ալ կը վկայեն, որ իր այս նշանաբանին պատասխանելիք և ոչ մեկ հոդված մը տեսնված է մեջը, այլ անոր հեղինակը միայն կռվո թշնամանաց և անձնական կրից ասպարեզ մը ըրած է զայն՝ ճշմարտասեր դատաքննության պատրվակով, որպես թե առանց թշնամանքի և զազիր խոսքերու ճշմարտություն չկրնար խոսվիլ:

չարաչար կշտամբելով անոր ապերախտությունը և իրեն՝ երեսին աղտ ըլլալը՝ վռնտեց դպրոցեն:[**] Ս.Ոսկան այնուհետև բոլորովին ինքնագլուխ ու ամեն նկատմունքե ազատ մնալով, փողոցներու ատենաբաչ (օրաթեռո տը քառֆուռ) մը եղավ, գռեհիկ ընկերականաց ժողովներու (քլուպ) անդամ եղավ. փողոցներուն մեջ ընկերականություն ու տերության դեմ ապստամբություն քարոզել սկսավ: 1849-ին, հունիսի մեջերը Փարիզի ստորին կարգի ժողովրդյան մեկ մասը ապստամբական շարժում մը ընելով, Ս.Ոսկան դրոշակակիր հանդիսացավ անոնց: Խռովարարները քանի մը հազար հոգի խառնաձայն աղաղակներով Փարիզի ծառազարդ մեծ փողոցեն անցած ժամանակնին, Շանկառնիե զորապետին ձիավորները անոնց վրա եկան, խաժամուժ ամբոխը ցիրուցան ըրին, խռովարարաց գլխավորներն ու խիստ կատաղիները բռնեցին Ս.Ոսկանն ալ հետը և տարին բանտը: Ս. Ոսկան վեցե յոթ ամիս բանտը մնալեն ետև՝ պանդուխտ և արևելքցի ըլլալուն համար հանցանքը ներվեցավ և տեսչության հսկողությանը ներքև մնալու պայմանավ արձակվեցավ: Այս թշվառությունները չկրցան զինքը զգաստացնել: 1852-ին նորեն ապստամբական դավակցություններու մեջ բռնվելով՝ Գաղղիայեն աքսորվեցավ և ետքը ներողություն ըլլալով՝ նորեն Փարիզ դարձավ՝ տեսչության հսկողությանը ներքև մնալու պայմանով և կը կարծենք, որ մինչև այսօր նույն հսկողության ներքև է, իբրև վտանգավոր ու խռովարար մարդ մը:

Ահա այսպիսի նշանավոր մեկ մըն է Ս.Ոսկանը, օտար ազգի ու երկնքի մեջ հայ անվանը նախատինք ու ամոթ բերող: Իր գաղափարներն ու սկզբունքները եվրոպական ճշմարիտ լուսավորության ոչ միայն հակառակ են, այլև ատելի ու զզվելի: Ասկե քանի մը տարի առաջ ԱՐԵՎԵԼՔ անունով կիսամսյա տետրակ մը հրատարակելու ձեռք զարկավ: Հիշյալ տետրակին մեջ Փարիզի երեք արժանապատիվ վարդապետները կը գովեր իբրև ազգասեր և իրավասեր: Հիմա, քանի որ երեսը արևմուտք դարձուց, յուր ամեն թիվերուն մեջ անպատկառ լրբությամբ կը նախատե ու կը թշնամանե հիշյալ բազմարդյուն եկեղեցականները: ԱՐԵՎԵԼՔՆ հրատարակած ժամանակը քանի մը հարգի անձինք դրամական նպաստներ խրկեցին իրեն: Ստակները ձեռքը հասնելուն պես՝ ԱՐԵՎԵԼՔԸ դադրեցուց այս կամ այն անձը պատճառ բռնելով և ԱՐԵՎԵԼՔԻՆ շարունակությանը համար խրկված ստակները կլլեց: Քանի մը տարի առաջ ալ ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱ անունով վիպասանությունը թարգմանելու ձեռք զարկավ և կանխիկ ստորագրություններ հավաքելե ետև՝ ան ալ գլուխ չհանեց դադրեցնելու իրավունք գտնելու համար ամենաչնչին պատճառներ մեջ բերելով: Հիմա ելեր այսպիսի անձ մը աղա Խալիպյանի պես ազգասեր բարերարե մը հաշիվ կը փնտռե, առանց ամաչելու ինքզինքը ճշմարտության, ուղղության, անկեղծության ու անշահասիրության ախոյան կը քարոզե ու իրմե շատ բարձր և ազգին ու աշխարհի առջև համարում ու պատիվ ունեցող անձինքը կը թշնամացնե: Այս վերջիններուն մեջ անանկ անձինք կը ճանչնանք, որ դրամական օգնություն ալ ըրած են իրեն: Բայց Ս.Լաբրուստին բարերարությանցը նախատինք բերող անձի մը դյուրին է իր ուրիշ բարերարներուն ալ ապերախտ գտնվիլ և զանոնք ալ նախատել:

... Ս.Ոսկանը բարոյականի դաս տալու ելեր է հայոց ազգին: Բայց «քաղաքավարությունը բարոյականին ծաղիկն է» կըսե Ճոյա: Իր վարքն ու գրչեն թափած աղտեղի խոսքերը կը ցուցնեն, որ ինքը գռեհիկ, կոշտ և վերջին ծայր անքաղաքավար մարդ մըն է: Քանի մը տարի առաջ Փարիզեն Կ.Պոլիս եկած ժամանակը երևելի անձի մը տուն այցելության գնաց և սիկառան բերանը հիշյալ երևելի անձին ներկայացավ ընտանյացը մեջ՝ առանց գլխարկը վար առնելու: Գաղղիո մեջ այսպիսի անձ մը վայրենի հոթանթոներուն կարգը կը դասեն և անմիջապես դռնեն դուրս կը վռնտեն: Մեզի համար ալ նույն արժեքն ունենալով Ս.Ոսկանյանը, հայոց ազգին եվրոպական լուսավորություն

[**] Մ. Լամբրուստը լալով կը հիշեր Ս.Ոսկանին երեսեն կրած նախատինքը: Հիրավի, մտածելն անգամ դառն է: Պանդուխտ օտարական մը երեք տարի շարունակ խնամե, ամեն ծախք և զոհ ընե զինքը ապրեցնելու և կրթելու համար, ու անոնց փոխարեն այս օրինակ նախատինք ու անպատվություն կրե...

քարոզելու պայմաններեն ու արժանավորութենեն այնչափ հեռու կը համարինք զինքը, որչափ Արևելքը արևմուտքեն: Արդեն այս վճիռը տված են իրեն համար ազգիս մեծագույն ողջամիտ մասը և նույն իսկ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ հրատարակմանը համար բարեմտությամբ դրամական ձեռնտվություն ընողներն ալ, որոնք ցավելով կը հայտնեն իրենց սխալած ըլլալը:

Այս համառոտագիծ և վեր ի վերո տեղեկությունը բավական կը կարծենք բարեմիտ հասարակությունը համոզելու, թե ԱՐԵՎՄՈՒՏՔ-ին խմբագիրը կենդանի օրինակ մըն է անցյալ տարի մայրաքաղաքիս մեջ հրատարակված ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼՆԵՐԸ անուն տետրակին նկարագրած լուսավորյալներուն: Մեր միտքը, նորեն կըսենք, սուտ լուսավորությունն ու ճշմարիտ լուսավորությունը մեկ-մեկե որոշելով՝ հասարակության մեջ տարածված սխալ կարծիքներն ուղղել է, և ոչ թե ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ գռեհիկ շաղակրատությունները դատաքննել կամ հերքել:

Այնպիսի անարժան գրվածքներու մենք ալ արհամարհոտ լռութենե զատ ուրիշ պատասխան չենք կրնար վայելցընել»:

1859 թ., օգոստոսի 20, N 395

Տրված է Մեսրոպյան վարժարանի դիրեկտոր Ղուկաս Մամուռյանի ճառը:

1859 թ., սեպտեմբերի 17, N 399

«Արևմուտքի» մասին

Արձագանք Եվրոպայի լուսավորության (Ա մաս)

(Նշում է, որ յուրաքանչյուր գործ երեք ճակատագիր է ունենում՝ համակրանք, հակակրանք կամ անտարբերություն)

«Ահ ձայնը Արևմուտքի տետրակներուն վրա ... առջի ավուր իրիկունեն հնչեց և թերթը՝ գրվածոց նախասահմանյալ հատուցմանց իրեքեն երկուքն ընկալավ, այսինքն՝ գրչին կծանող, թշնամանող սարտուցիչ դառնությամբը՝ եռանդոտ ճշմարտասիրաց կողմեն հակակրություն, իր նյութոց և մտածությանց սնոտի ունայնության պատճառավն ալ ծանրակաց և խաղաղասեր անձանց կողմեն անտարբերություն»:

... «Բայց Արևմուտքի գրչին աշխարհական մասնավոր անձ մը և իր գրվածներուն ինք միայն պատասխանատու ըլլալը գիտնալով, և դարձյալ իր գրվածքներուն պատասխանեն ոչ իրեն, ոչ իր ձեռնակալուացը նյութական վնաս մը չծագելիքն ալ հայտնի ըլլալով, ճշմարտասերներն աղաղակել սկսան քանի մը պատճառավ: Նախ՝ իր բամբասած անձանց ամմենուն ալ հանցանքներն ու վնասները չպատմելով, չապացուցանելով, բացարձակաբար պոռալ կանչվըռտելուն համար, վասն զի առանց ցուցմանց լոկ ամբաստանությունը զրպարտության դեմք կառներ կոր գրվածներուն մեջ: Երկրորդ՝ իր խոսքին նյութ եղած-չեղած մարդոց ուղղակի անձնական պատվույն թշնամանք հաճախելուն համար: Երրորդ՝ ասանկ խեղճ գրվածքի մը ազգայնոց մեջ տարաձայնություն ձգելու կարողություն ենթադրելով»:

... «Իսկ այս թերթին ազգայնոց մեջ ձգելիք երկպառակությանը մասին, ճշմարտասերները Պոլսո մեջ յոթանասունհինգ հատ հազիվ ապառիկ տրվիլը հիշելով, որ ձրին ու զրոյին հավասար ըսել է, կրնային ապահով ըլլալ»:

... «Իրար բռնող ժողովրդոց մեջ ԻՒՆԻՎԵՌԻ, ԻՆԻՌՆԻ և ԿԱԶԵԹ ԴԸ ՖՐԱՆՍԻ պես օրագիրներն անգամ տարաձայնություն չի ձգելեն զատ, վեց ամիս է, որ ամեն առտու միաձայն խաղք կըլլան կոր բոլոր Գաղղիո և Իտալիո մեջ»:

... «Եվ մենք ալ, որ ոչ ոսկերիչ ենք և ոչ դարբին, այլ բանասիրության նվիրյալ և ազգայնոց մտավորական զարգացմանը ջանադիր, պարտավորություն ունինք, որովհետև նյութը մեր սեպհականությունը կը վերաբերեր, այս ձայներուն սփոփարար պատասխան մը տալ»:

1859 թ., հոկտեմբերի 1, N 401

Մեր ազգը ծանր պայմաններում իր գոյությունը պահպանած ազգ է, և այսօր բուժման կարիք ունի: Բուժողները կամ կցկտուր, խեղճ ու կրակ ձև են վերցրել, և կամ էլ գոռալով ու աղմկելով են կամենում բուժել: Երկու ձևն էլ անկարելի է և անօգտակար: Առհասարակ, ազգն էլ՝ պետք է ամեն մեկի սածին կարևորություն չտալը սովորի: Իսկ ազգին սովորացնելու համար ասպարեզ ելած մարդիկ պետք է ի վերուստ այդ կարողությունն ունենան:

1859 թ., հոկտեմբերի 8, N 402

(Բ շարունակություն)

«Արդ՝ երբ որ հասարակաց դաստիարակ մը, բարոյախոս մը իր թերթերուն մեջ մեկուն վեղարը գլխեն կհափշտակե, մեկուն ճակտին կնտությունը երգ կընե, մեկուն մորուքն այծի կորուսց հետ կը բաղդատե, մեկուն երեսը կը թուքնե, մեկուն տիոցն անպատվությամբ խենեշ օրիորդի կատակաբանություն կընե, մեկուն քիթը, բերանը աղբով կը ծեփե, մեկուն անվանն ԱԻԵՏԻՔ բառը կը փոխանակե, մեկուն ամուսնական պատվույն ալ ակնածություն չընելով ԹՈՐՈՍ մակակոչություն կընե, մեկուն հինգ տարի առաջ ըրած պակասությունը հինգ տարի ետև ուրիշեն վրեժ առնելու համար նորոգելով՝ թշնամանքը մինչև գերդաստանին կանանոցը կը հասցունե: Երբոր իր սկսած օրեն իր հակառակորդներուն հայտնապես անհաշտ ատելություն և ոխ ուխտելով անհիշաչարությունը կը ժխտե, ... երբոր, վերջապես, բովանդակ ազգն ալ ԿՈՒՅՐ ՀԱՅԵՐ կոչելով կարհամարհե, ասանկ բարոյախոս մը, ասանկ դաստիարակ մը Սիկարյան սրիկաներեն ինչո՞վ կտարբերի»:

«Գրվածք մը («Արևմուտքը». Ս.Շ.), որուն մեջ ազգին ամեն մեկ անդամներն իր բերնին ծամոց են եղեր և առաջին թիվեն մինչև վերջինին մեջն ուսման հմտության դատման և ուղղախոսության հետք չիկա, գրվածք մը, որուն ամեն երեսներուն մեջ ուրիշ բան չտեսնվիր, եթե ոչ շոշափելի տգիտության, աղտելի ծուլության, ուղեղի հիվանդության, անձնապաշտ սնապարծության, մարդատյաց մեկուսության, վայրենամիտ ոխակալության և վատթար յուրախնդրության անձկությունները, թախծությունները, հառաչանքներն ու մռնչյունները, գրողին սրտին արյունովը նշանադրած, արդարև ասանկ գրվածք մը Սադայելի ներշնչություն, և ամենայն անարգանաց և արհամարհաց արժանի է»:

1859թ., հոկտեմբերի 22, N 404

«Ելավ ԱՐԵՒԵԼՔԻ առաջին թիվը, այլ ավա՜ղ, ԵՐԿՆՈՂ ԼԵՐԻՆ ՉՆՉԻՆ ՋԱՎԱԿ և կամ ԳԵՐԱՆ մըն էր անիկա, որ ՇԱՌԱՉՄԱՄԲ ՋՈՒՐՆ ԸՆԿԱՒ, որ հավիտյան ԱՐԾՈՒՈՅ փոխվելիք չուներ, որ փոքրիկ բանասիրաց ծաղր եղավ, որ մեծերուն ակնարկության ալ արժանի չեղավ, որ զինետանց դուռները պառկողներուն աղոթագիրք կրնար ըլլալ, որ, վերջապես, մեծ ու պզտիկ շչեցին, և ՇԱՐՆԳՐԻՆ ջերմեռանդներն ալ պատրանքնին տեսնալով, ընտրություններուն վրա խպնեցան»:

«Արևելքը» դադարելու հիմնական պատճառը համարում է 1859-ի ֆրանսիական դեպքերը և ամենից կարևորը՝ Ոսկանյանի անգրագիտությունն ու ազգին վիրավորելը:

«Ո՞վ եղած կըլլա ԱՐԵՎԵԼՔԻՆ խափանողը: Գաղղիական օրենքը չէր, ասիկա ԱՐԵՒԵԼՔԻ ՇԱՐԱԳԻՐՆ ալ կը վկայե: Գաղղիական օրենքը տպագրություն մը չի խափանելեն ետև, Փարիզի մեջ եկեղեցական մը կամ դերադեսպան մը չէ, այլ և նույն ինքն Բաբը, այլ և դեսպանին ինքնակալն անգամ չի կրնար իր հաճոյիցը համար ինք իր գլխուն օրագիր խափանել: Եվ սակայն ԱՐԵՒԵԼՔԸ խափանեցավ վերջապես. ո՞վ խափանեց: ԱՐԵՒԵԼՔԻ գրիչը նախ՝ օրինաց պահանջած պայմաններուն անփույթ ըլլալով, և երկրորդ, ըստ իր ըսածին (Տես Արևմուտք, Է) իր ոտխներն իր տպագրիչը որսալով:

Վասն զի ինքն առաջուց իր տպագրիչին հետ ամեն բան առանց ընդդիմության տպելու օրինավոր պայմանագրություն ըրած չըլլալուն, օր մըն ալ, իր մատուցած մեկ հոդվածին համար տպագրիչն «Ես ատանկ բան չեմ կրնար տպել» ըսեր լմնցեր է: Ինք ալ կամ հոդվածը փոխելու, կամ ուրիշ ատենի սպասելու տեղը, տպագրիչին հետ կռվեր, սրդողեր գացեր, ալ անկե ետև ուրիշ հոդված չէր տվել: Ահա ԱՐԵՒԵԼՔԻՆ խափանումը»:

Գտնում է, որ թշնամիները պետք է որ հալածեին Ոսկանյանին ու նրա թերթը, քանի որ նրանց ինքը՝ Ոսկանյանն է թշնամացրել:

« «ԱՐԵՒԵԼՔԻ» գրիչն անանկ անձինք (Նշանավոր հարուստները. Ս.Շ.) անխորհրդաբար խածարել ուզելով, ազգին բոլոր կուսակցությանց արհամարհանացը նշավակ եղավ»:

1859 թ., նոյեմբերի 1

Դրամական օգնություններ «Անշուշտ եղան. ինք (Ոսկանյանը. Ս.Շ.) կրնա ուրանալ, բայց չկրնար հաստատել, թե չեղան: ՈՒրիշներն ալ կրնան հաստատել, որ ոտքը տարված ըստակն ինք չընդունեցավ: Բայց ո՞վ կրնա հաստատել թե չընդունածը չեղած է, և չընդունիլն ալ անշահասիրություն և ոչ խղճի խայթ մըն էր իրեն: Որո՞ւ կրնա ատացունել, թե ԱՐԵՒՄՈՒՏՔԻ շահուն կեսն իրեն ըլլալու պայման եղած չէր. բայց ինք հայոց ազգին իծի և քարբի լեզու ցցունելով, ամեն մարդ հեռացան իր գրվածներեն, և թերթերը չի ծախվեցան»:

«... Մենք, ուղիղ տրամախոսության, ուղիղ դատման և արդարության սիրահար ըլլալնուս՝ հանձն առած ենք առանց խրոխտության և առանց զձձության իր թերթերը քննաբանել, և իր գրվածքներեն ժողովելով, մանկանց աչքին առջև դնել իր արտառոց գրականության անհեթեթ մոլորությունները. իր հայերենի տգիտությունը, գաղղիերեն չհասկընալը, փիլիսոփայության հետ բարև-աստուծո-բարին ըրած չըլլալը, օրինակով ցցուցած բարոյականը, իր մտաց, իր դարմանց, իր դիտմանց, իր ըզգացմանց և իր զնացից պատկերը»:

«Անցած տեղներիս յիշելով որ ՌԸՎԻԻ ՖՐԱՆՍԵԶ ըսված ողորմելի բանասիրականը զաղղիացվոցմե ՄԻԱԿԱՆԻ (պոռնեը) մակակոչությամբ պատվյալ է...»

Փարիզի Շառիվառիի գրանոցը:

1859 թ., նոյեմբերի 12, N 407

(Դ)

Խոսում է «Ասկե չորս տարի առաջ Փարիզ տպված դավանաբանական տետրակի» մասին, որի դեմ բազմիցս կրքոտ հոդվածներով հանդես է եկել «Արևելքը»:

«Ի՞նչ ըսել կուզե այս արյունկզակ կարմիր հասարակապետականի բարբաջանքը»:

«Մեկը պահպանելու համար մյուսը կորուսանելը ոչ քրիստոնեական, ոչ բարոյական, ոչ մարդկային, այլ կարմիր հասարակապետականի սկզբունք է, և հայոց եկեղեցին, Վիեննայի վերապատվելիներուն վկայությանն ալ հակառակ ուրիշի հավատքին դեմ ոչ պատերազմ բացած է երբեք, և ոչ հալանք հարուցած»:

1859 թ., նոյեմբերի 19, N 408

ԱԶԴ

«Պարոն Ս.Ոսկանյանը, տաս ամիս ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ձրի շարադրելե ետև, կը հրաժարի իր պաշտոնե, զոր հանձն առեր էր որոշ թեությունններով: Անշուշտ այս չպիտի արգելե Պոլսի տեսակ մը հայերը տակավին նոր ստություն և զրպարտություն հնարել, բարդել զանոնք, և ավելցընել թե «իրեն դրամական նպաստներ չեղան». ինչպես իր անողոքությունը չարգիլեց, որ վատության զենքը թողուն և բացերես ԱՐԵՒՄՈՒՏՔԸ հերքեն: Մեր բարեկամին ներելի է ամեն պատվով ասպարեզը թողուլ, իզուր հոն տաս ամիս սպասելեն ետքը իր թշնամիներուն, որք դեռ մութի մեջ կը խլրտին և չեն գիտեր, որ գռեհիկներու կոկորդը զրգռել հաղթություն պոռալու համար: Կռճիկյան և Շահնազարյան, Այվազովսկի և Ամբրոսիոս պարոնները պիտի խոսին, երգ հավաստի պիտի ըլլան, որ ալ պատասխան առնելու չեն: Այս արիությունը Պոլսի մեջ միայն կը տեսնվի...

Պ. Ս. Ոսկանյանը կաղերսե, որ ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ համարատվությունը պահենք քանի մը ատեն ևս: Փառք կը սեպենք, մենք՝ ինչպես իր բոլոր օտարազգի բարեկամները, այս թեթև ծառայությունը հայերուն ընել իրեն համար: Կը հրավիրենք ուրեմն ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ հիմնադիրները հաջորդ մը փնտռել մեզ:

Օգյուստ Տըլեդրը

(«Ռըվիւ Ֆրանսեզ»)»:

1859 թ., դեկտեմբերի 3, N 410

«Ո՛չ. ոչ հռովմեականությունը և ոչ բողոքականությունը չեն կրնար ասկե ետև հայոց կղոպուտին սպասել. վասն զի ազգն զգացած է և գիտե, որ իր հոգվույն փրկությանը բավական

կրոնք մ'ունի, իր անհատներն աշխարհորեն պահպանելու կարիք կա: ... օր մը ձկները կրնան ծառն ելլալ, հայերն ամենևին, մինչև աշխարհիս վերջը չեն կրնար, չեն ուզեր և բնավ հանձն չպիտի առնեն Քրիստոսի տեղը պապ դնել իրենց հավատքին գլուխ կամ քրիստոս ձգելով պապին երթալ ապավինել. վերջապես, հայերն Աստուծո տեղ մարդ չեն պաշտեր»:

«... Իր ոսոխներն իր թե՛րթը խափաներ են եղեր. այսինքն՝ իր հոդվածն այս ինչ տպարանին խանութը չի տպվելու նենգ գործեր են: Արդյոք իր տպարանն իր հոդվածը մերժելով աշխարհքիս տպարաններն իր դեմը գոցե՞ր էին: Չէր կրնար իր անօրինակ ճառերը դուրս տալու համար կայսերական տպարանը դիմել կամ Ֆիռմեն Տիտոյի տպարանն երթալ: ...Կարծեմ թե, Փարիզեն դուրս ձրի տպագրելու հոժար տպարաններ ալ կային»:

«... Այս սպառնալիքն ընողն իր ըսածը կատարելու կարող էր, վասն զի անտարակույս, ՔՈԼՓՈԹԵՈՌ (պոխչաճի) օրագիրն ու ՌԸՎԻՒ ՖՐԱՆՍԵԶԸ ձեռքե ձեռք կը քաշեին իր հոդվածները, թե որ ՄՈՆԻԹԵՈՒՐ այն փառքի ուրիշ օրագրի թողելու ըլլար»:

1862 թ., դեկտեմբերի 8, N 565

«Փարիզի Սենթ-Պարպ անուն երևելի դպրոցին վաղեմի աշակերտները, որոնց մեջ բազմաթիվ ականավոր և բարձրաստիճան անձինք կան, սովորություն ունին ամեն տարի կոչունք մը ընելով դպրոցին տարեդարձը տոնելու: Այս տարի դարձյալ դեկտեմբերի 4-ին նույն տարեդարձի կոչունքը կատարելով, Փարիզու Օսմանյան դեսպանատան առաջին քարտուղար, մեծապատիվ Տատյան Գ. Հարություն էֆենդին, որ նույն վարժարանին վաղեմի հայ աշակերտներեն մեկն է, կոչունքին հրավիրվելով, նախագահելու մեծ պատիվն ալ իրեն առաջարկվեր է, 200-են ավելի կոչնականաց հատուկ խնդրանոքը, պատիվ մը, որ՝ առաջին անգամն էր հային տրվում:

Տատյանի ճառը. «Սիրելի ուսումնակիցք իմ.

Ներեցեք ինձի, որ անկեղծաբար շնորհակալ ըլլամ Ձեզ՝ այս պատվույն համար, որ ինձի ըրիք և որուն արժանի չէի: Ձեր բարեսրտությանը վրա ունեցած լիակատար վստահությունս է միայն, որ զիս համարձակեցուց այս աթոռին վրա նստելու, ուր այնչափ հոյակապ մարդիկ նստած են: Նմանապես քիչ շարժած չէ սիրտս և քիչ երջանկություն մը չէ ինձի բազմամյա տարակայութենե ետև վերստին ուսումնակցացս մեջ գտնվիլ և մեր սիրելի Սենթ-Պարպը տոնախմբել, որուն հիշատակը հավիտյան անմոռանալի պիտի մնա սրտիս մեջ:

Բայց ինձի համար ուրիշ պարտավորություն մ'ալ կա կատարելիք. այն է Արևելք գտնվող մեր Պարպյաններուն՝ իրենց հին դպրոցին վրա ունեցած երախտագիտության և սիրո զգացումներուն թարգման ըլլալ:

Եվ դուք, պարոնայք Լաբրուստ, Կեռառ և Պլանշե, դուք, որ այնչափ հազվագյուտ անձնուրացությամբ և գովելի հարատևությամբ Ձեր կյանքը նվիրած եք մատաղ մտքերը կրթելու, մատաղ սրտերը դաստիարակելու ազնիվ պաշտոնին, դուք, որ մեծապես ձեռնտու եղաք այս դպրոցին իմ Պարպյան հայրենակիցներու այս երկրորդ հայրենիքին զարգացմանն ու պայծառությանը, ընդունեցեք իմ միջոցավս ձեր Արևելքի աշակերտներուն խորին հարգանաց և եռանդուն համակրության հավաստիքը: Իրենց գտնված հեռավոր երկիրներեն բերկրությամբ պիտի լսեն՝ կենացս ամենեն գեղեցիկ օրերեն մեկն եղող այս ավուր ուրախությունննիս, իրենց սրտովն ընկերակցին պիտի այս ուրախության և մեզի հետ միաձայն պիտի կրկնին. կեցցե՛ Գաղղիա, կեցցե՛ Սենթ-Պարպ»:

1863թ., օգոստոս, N 600

Նամակ Իզմիրից. «... Ազգային դպրոցներն ի՞նչ կացության մեջ են. – հետաղեմ: Ազգային գործիչներն ի՞նչպես կը տեսնվին. – խառն ի խուռն կերպով: Ազգային կալվածներն ի՞նչ վիճակի մեջ են. – անհայտ և ամուլ: Ահա այն հարցումները, զորս յուրաքանչյուր ոք կընե հոս ամեն օր, և որոնց տրված կամ տրվելիք պատասխաններն ալ արդեն իմ տվածներս են: Մինչդեռ իրերու այս դառն կերպարանքը ցավ կուտա ամենուն, ահա անդիեն ԱՐՇԱԼՈՒՅՍԸ յուր անհիմն հոդվածներու մեջ ծափ կը զարնե, օվսաննա կը կարդա և բազմավանկածականներով կոդոքե նոցա, որոնք որ ազգային այս աղետից ուղղակի կամ անուղղակի պայծառ են և միտքերը ավելի կը զգռե քան թե կը հանդարտե յուր ԱՆԿՈՂՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՄԲԸ:

... Կը լսեմ, թե քանի մը շաբաթե ետքը երեք քահանա պիտի ձեռնադրվին եղեր մեր Ս.Առաջնորդին ընտրությամբը և այլոց հավանությամբը: Այս նորընծա քահանայացուներուն գլխավոր կատարելությանց մին այն է, որ իրենց արժանավորությունը կը կազմի, իրենց ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ է: Բռնության նեցուկը տգիտությունն է. ասկե կրնա հասկըցվիլ, թե ինչու այսպիսի ընտրություն մը կըլլա լուսավորյալ Զմյուռնիո մեջ»:

Վահե

4 օգոստոս 1863 թ.

1863 թ. սեպտեմբեր, N 606, հոկտեմբեր, N 608

Պ. Դը Կավուր և իտալական միությունը

«Մեր օրերը Քավուր մը ավելի գործ կը տեսնե, ավելի փառք ու պատիվ կունենա, քան թե կարմիր շապիկով Կարիպալտին, որուն խիզախ հանդգնությանը դեմ գնտակ մը բավական է անդամալույծի պես մահիճը ձգելու համար:

... Եվրոպացիներից շատերը Քավուրի վրա գրեցին, անոր վարքը, հիշատակարանները, ատենաբանությունները, թղթակցությունները հատոր-հատոր հրատարակեցին և պիտի հրատարակեն. իսկ մեր ազգայնոց միտքեն ելած չէ: Պ. Խ. Միսաքյանի այն հմտալից հոդվածները Փարիզ լրագրին էջերուն մեջ:

... Քավուր անձամբ ըսած է, թե իր մեռնելեն հիսուն տարի ետքը հազիվ թե աղեկ մը պիտի ճանչնան զինքը և վրան դատաստան ընեն:

... Հռոմ տակնուվրա եղած, եպիսկոպոսները կրակ կտրած էին իրեն դեմ, դեպքերը մոտալուտ փոթորիկ մը կը սպառնային, Գըրըմեն ժանդախտը Բիեմոնթեյի զորքերն հնձելուն տխուր գույժը կառնվեր:

... Իտալական միության վրա այս կարճառոտ ուսմունքն ընելեն ետքը, մեր ջանքը պսակված կը համարինք, եթե մեր ազգայինք ալ սթափին իրենց թմրութենեն, որուն մեջ ինկած են կրոնական երկպառակության հետևանքեն. թոթափեն կղերական աններողության լուծը և ... միանան առանց խտրության կրոնից ամենայն ոք *ներքին համոզմամբ* իր խղճմտանաց նախամեծար համարածին հետևել: Այս կարևոր նյութը մեր առաջադրութենեն դուրս, և «Խնդիր միության հայոց» տետրակին հեղինակն արդեն գեղեցիկ կերպով ճառած ըլլալուն, մեք կլռենք»:

Պողոս Պառնասյան

1863 թ., հոկտեմբեր, N 609

«Իզմիրի Էնբարսիալ անուն զաղիերեն լրագիրը կը ծանուցանե, թե արտաքին գործոց պաշտոնյա բարձրապատիվ Աալի փաշային հրամանին համեմատ՝ Իզմիրի բոլոր տպագրապետները (բացի Էնբարսիալ, Ամալթեա և Արշալույս Արարատյանի տպարանապետներն, որոնց տպարանը կայսերական հրամանագիր ունի) տեղական իշխանության առջև հրավիրվելով, խոստումնագիր տվեր են, որ առանց տեղական կառավարության ցույց տալու, բան մը չհրատարակեն: Ասկեց զատ, Իզմիրի մեջ գրոց քննիչ դրված անձը իրավունք պիտի ունենա ամեն ժամանակ հիշյալ տպարանները մտնելու և եղած տպագրությունները քննելու:

Այս խոստումնագրին հակառակ վարվողներուն տպարանները պիտի գոցվին»:

1863 թ., նոյեմբերի 2, N 612

«Երկար ժամանակե ի վեր Ամերիկա գտնվող արգո Խաչատուր աղա Ոսկանյան բարեկամնիս՝ Նյու-Յորք Հերալտ լրագրին հոկտեմբերի 3 թիվը ղրկած է մեզ: ... Այժմյան ընդհանուր ծովապետ Մեհմետ փաշան Ամերիկա եղած ժամանակը Պ. Խ. Ոսկանյանին հետ բարեկամացած ըլլալով, Պ. Ոսկանյան Արևելքի վերաբերյալ խել մը բարակ նկարներ կամ պատկերներ ղրկեր էր անոր: Վեհափառ Սուլթանը նույն նկարները ծովակալության պալատին մեջ տեսնելով, անոնց գեղեցկությանն ու ճշտությանը հավնեցավ, և ամենն ալ առավ, կայսերական պալատը ղրկեց»:

1864թ., հոկտեմբեր, N 662

«Ազգային վարչությունը, նկատելով, որ Իզմիրի Տ. Հակոբ Պալապանյան և Տ. Յոհաննես Չիվիճյան քահանայից պատճառավ տեղվույն ժողովրդյան մեջ տիրած ողբալի երկպառակությունը պիտի երկարի, արժան դատեցավ խռովության առաջքն առնելու համար կուսակցության պարագլուխ ճանչված հիշյալ երկու քահանաներն Իզմիրեն հեռացնելով Կ. Պոլիս կոչել»:

1864 թ., նոյեմբեր, N 666

«Մասիս խղճի և կարծյաց ազատության կողմնակից է, իսկ Մեճմուա միջնադարյան աններողության, խղճի և մտաց գերության դրոշակակիր մ'է:

Մասիսը քննադատության սահման չճանչեր ազգին այս կամ այն մասին կարծիքը, այս կամ այն մասին քաղաքականությունը, հետևաբար ազգը բաժնող կրոնական և աշխարհական մասանց կամ կողմանց ոչ մեկին և ոչ մյուսին բացառիկ դիտմանցը կույր գործիք կամ ջատագով ըլլալու բարոյական ստրկությունը չընդունիր: Այլ որչափ իր խղճմտանքը, մտավորական կարողությունը, պատշաճից օրենքը և տերության քաղաքականությունը կը ներեն իր խորհուրդն ու կարծիքը կը հայտնե անխտրաբար, ազգային թե՛ բարոյական, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական խնդրոց վրա, ինչպես այն ամեն հրապարակային թերթերը՝ որ առանց մասնավոր կողմնակցության մը շահուն գործիք ըլլալու՝ հանրության օգտին ծառայելու ազնիվ պաշտոնին նվիրյալ են»:

1864 թ., մայիս, N 640

«... Վեճին նյութն Իզմիրի Ս. Ստեփաննոս եկեղեցվո խաչկալին շինությանը վերաբերելով, և անոր պիտոյից հայթայթման աղբյուրն ալ հայ հասարակությունն ըլլալով, եթե տրված պատասխանին բովանդակությունը ստույգ է, այսինքն՝ եթե միայն խաչկալներու շինության համար 3600 լիրայի ծախք պիտի ըլլա, հուսանք որ պատվարժան թաղական խորհուրդն հասարակաց ընդհանուր ձայնին զիջանելով, այդ մեծագումար ծախքին որոշումը ձայնից առավելության կը թողու, եթե արդեն ժողովրդյան մեծ մասին հավանությունն ստացած չէ»:

1864 թ., դեկտեմբերի 12, N 670

«Պ. Ղուկաս Պալղազարյանը անցյալ տարի Իզմիրի գրաքննության տեսչին ստորագրություն տված էր՝ յուր թերթեն ի զատ որևէ գրություն չտպել յուր տպարանին մեջ առանց յուր գիտության:

Հայ խմբագիրը հակառակ յուր ստորագրությանը անցյալները, «Լուսափայլ» անուն թռուցիկ թերթը յուր տպարանին մեջ գաղտնի տպել տալուն համար, նախանգիս կուսակալ Գապուլի փաշան զինքը բերել տվավ յուր ներկայությանը և յուր ընթացքին ապօրինավորությունը առաջ բերելով՝ իբր փոխարեն յուր առ Օսմանյան տերությունն ըրած անհավատարմության ընթացքին հրաման ըրավ, որ անիկա այսուհետև զրկվի տերության կողմե իրեն սահմանված ամսականեն:

Պ. Ղուկաս Պալղազարյանին անձին դեմ մասնավոր թշնամություն մը չունենալով՝ եթե կը ցավինք իր պարտազանցության վրա, ոչ նվազ պիտի ցավինք, եթե իրոք զրկվի անիկա յուր ամսականեն:

... Բարոյական օրենքը, որու կը հնազանդինք մենք, մեր վրա սրբազան պարտք մը կը դնե այսպիսի փափագ մը հայտնել, և խնդիր մ'ընել նորին վսեմության ի նպաստ Պ. Ղ. Պալղազարյանի, որուն անձնական թշնամություն չունինք, և որուն սակայն, ազգային իրերու մեջ բարեկամ չենք»:

1864 թ., դեկտեմբերի 19, N 671

Թուրքական կառավարության օրինագիծը՝ լրագրերի հրատարակության գործը կարգավորելու, հրատարակիչների պարտավորությունների մասին:

1865թ., հունվարի 23, N 676

«Արևմուտքը» սկսավ հրատարակվիլ ի Փարիզ ներկա տարվույս սկիզբեն: Գործակալն է մեծարգո Տոքթոր Կարապետ Աղաբեկյան՝ Բերա, Մեծ փողոց, թիվ 287, բայց ուզողը կրնա նաև բաժանորդ գրվիլ Ջինճիրլի խանը, թիվ 3, Կիլիկիայի գրատունը և Վարագճը խանը, թիվ 8, Վարագայի գրատունը:

1865 թ., հունվարի 30, N 677

«Հուզմունք մը, որուն նմանը երբեք տեսնված չէր Իզմիրի մեջ, ամսույս 21-ին տեղի ունեցավ հայ հասարակության մեջ: Խաչկալներու շինությունը լմննալու վրա է, 3500 լիրայով: Թաղական խորհուրդը միշտ իր կամքը առաջ տարած է այս շինության մեջ: Ընդհանուր ժողով, մասնաժողով, ամեն բան առաջարկված և մերժված էր, հետևաբար հակառակ կողման զայրույթը վերջին ծայրը հասած էր, երբ երկու խոշոր արձաններուն խնդիրը ելավ: Հիրավի, այս վերջի երկու խոշոր արձանները ցուրտ և տձև կերպարանք մը կուտային խաչկալին»:

(Դնում են, գիշերով ջարդում են, Պալասանյան Ստեփան աղան առաջարկում է չդնել, լսող չի լինում)

«... Այս ամեն անկարգության պատճառը կիրք է և անաչառ խոսելով՝ երկու կողմն ալ հակառակությամբ կը շարժին, մանավանդ եռապետականք: Ազգին օգուտը մտածող չկա: Մեսրոպյան դպրոցը խեղճ վիճակի մեջ է, նամանավանդ աղքատանոցը. ազգը օտարաց առջև խայտառակ կըլլա. բոլոր Իզմիր այս դեպքին վրա կը խոսին. հույնք ծաղրելով՝ ծախեցեք մեզի, կըսեն, ձեր եկեղեցին, որ թատրոն շինենք, քանզի չունենք: Ըստ իս՝ խռովությունը տեղի չէր ունենար, եթե ատենապետը մեկ-երկու երիտասարդաց խոսքին մտիկ չընելով՝ խոշոր արձանները չդներ:

Թաղական խորհրդո անդամներեն Ստեփան աղա Ճշմարտախոսյանը և Նուպարյան Հովհաննես աղան հրաժարվեր են: Ընտրողական ժողովը բան մը ըրած չունի»:

1865 թ., փետրվար, N 678

«Զմյուռնիո ազգային խռովությունները» հոդվածը, ուր քննվում են նախորդ համարում պատմված դեպքերը:

«Բայց դժբախտաբար, քանի մ' ատենե ի վեր, կարծես թե զմյուռնիացիք ընտանեկան պառակտման օրինակ մ' եղած են և իրենց վրա ամենևին ուրախառիթ լուր մը լսելու բարեբախտություն ունեցած չենք:

... Ցավալին այն է, որ, ինչպես ուրիշ անգամներ, անանկ ալ այս անգամ կռիվը կրից և ատելության արդյունք է, որն որ առավել անարգանք կը բերե մեր ազգայնոց, վասն զի իրենց կռվույն առարկան ոչ մեծ սկզբունքի մը և ոչ ալ ուրիշ ազգօգուտ բանի մը վրա կը կայանա: Կռիվ՝ անձնական ատելության համար, կռիվ՝ սնափառություն մը վիրավորելու համար, կռիվ՝ ոխակալության ու վրեժխնդրության համար, ահա այս է, որ հայ ազգին տունը կավրե, և որուն վրա, բազմադարյան թշվառութենե մ' ետև ալ, տակավին յուր աչքը բանալով զգաստանալ չուզեր»:

(Հաջորդ համարում էլ է խոսվում այս մասին):

1865 թ., հոկտեմբերի 30, N 713

Կենսագրություն հանգուցյալ Հակոբ Էֆենդի Կրճիկյան

«Կրճիկյան Հակոբ Էֆենդին, Հովհաննես Կրճիկյան անուն աննշան արհեստավորի մը անդրանիկ որդին էր, ծնյալ 1806-ին, ի Բերա Կոստանդնուպոլսո: Յոթը կամ ութը տարեկան ծնողքը

զինքը Բերայի Ս.Երրորդություն եկեղեցվույն ազգային դպրոցը կը ղրկեն, ուր աչքի է ընկնում: Ապա աշակերտում է Չոլախ Ստեփանին, Փեշտմալճյան Գրիգորին, ֆիզիկոս Պողոսին:

1822 թ. տալիս են Պողոս Պատրիարքի մոտ աշակերտության, որպեսզի վարդապետություն սովորելով, հետ կանգնի գաղղիերեն ուսանելու ձգտումից: Սակայն Պողոս Սրբազանը ոչ միայն թույլ է տալիս, այլև մարդ է հատկացնում (Հովհաննես Եզեկյան), որի մոտ Կրճիկյանը ֆրանսերեն է պարապում:

1829 թ. սկսում է ուսուցչություն անել Պոլսի հարուստ տներում: (Կելկելյաններ, Խոնչեկյոզյաններ, Մամիկոնյաններ)

1836-ի շրջանում Րեշիդ փաշայի հետ մեկտեղ գնում է Փարիզ, որպես փաշայի երրորդ թարգման:

1839 թ. Րեշիդ փաշան Կրճիկյանին նշանակում է Փարիզի Օսմանյան դեսպանատան տեղապահ (Փաշան վերադառնում է Պոլիս):

1840 թ. Սարիմ փաշայի հետ միասին գնում է Լոնդոն, որպես խորհրդական, ապա գալիս է Պոլիս:

1842 թ. երկրորդ անգամ Րեշիդ փաշայի հետ գնում է Փարիզ, որպես երկրորդ քարտուղար:

Էֆենդին (Կրճիկյանը) ի բնե եռանդուն ազգասիրությամբ վառյալ, ազգին անբարեկարգ և խառնաշփոթ վիճակին դարման մ' ընելուն միջոցներուն կ' զբաղեր. ուստի կսկսի ամեն առիթով ազգին վրա խոսակցիլ յուր բարերար Րեշիդ փաշային հետ, և պետք եղած դարմանը խորհիլ: Փաշան տեսնելով Էֆենդիին առ Օսմանյան տերությունն և առ ազգն ունեցած հավատարիմ սերն և ազգային գործոց ցավալի վիճակը բարվոքելու գովելի բաղձանքը, կը խոստանա, որ Պոլիս վերադառնալուն, երբոր բարձր պաշտոնի մը հասնի, Էֆենտիին հայոց ազգին գործերուն գլուխը դնե Լողոթիեթի պաշտոնով, որպեսզի կարենա ըստ բաղձանաց սրտին պարտուպատշաճ տնօրինել hօգուտ Ազգին:

1845 թ. ? Րեշիդ փաշան նշանակում է Կրճիկյանին Լողոթիեթ:

Էֆենդին ազգային վարչությունը հնար եղածին չափ կանոնավոր փութով պատրիարքական միապետությունը և ամիրայական ազնվապետությունը չափավորելու և ազգային վարչական իշխանությունը ժողովրդյան իրավանց վրա հաստատելու դրությունը կը հիմնե, ընտրությամբ կազմված հոգևոր և գերագույն ըսված ժողովներ հաստատելու արտոնությունը ձեռք բերելով 1847-ին կայսերական բարեխնամ կառավարութենեն, և այսպես, Ազգային սահմանադրության առաջին հիմնադիրը կըլլար:

1847 թ. գալիս է Պոլիս:

1854 թ. Րեշիդ փաշայի որդին Մեհմեդ-Ջեմալ փաշան նշանակվում է Փարիզում դեսպան, և Կրճիկյանին տանում է հետը: Կրճիկյանը շուտով դառնում է տեղապահ:

1861 թ. հրաժարվում է պետական գործերից և սկսում է գրական գործունեությամբ զբաղվել:

1865 թ. մայիսին գալիս է Պոլիս:

1865 թ. հոկտեմբերի 14-ին մահանում է Պոլսում:

Վարքով պարկեշտ, բարքով խոնարհ և հեզ, սրտով բարի, ազգին բարօրության ու առաջադիմությանը եռանդուն փափագող և անձնվեր . ասոնք են իր գլխավոր բարեմասնությունները: Շատեր վայելած են իր բարերարությունները, և իրեն դիմողը ձեռնունայն ելած չէ: Բայց հայտնի և ի ցույցս մարդկան չէր բարերարեր և այս զգուշությունն այն աստիճանի հասուցած էր, մանավանդ ազգային և քաղաքական գործոց մեջ, որ մինչև անգամ ինքզինք բամբասել կուտար իբրև թույլ, տկար և ապարդյուն անձ մը, մինչդեռ գիտցողները գիտեն, թե ի՞նչ ծանր և դժվարին գործեր գլուխ հանած է լռելյայն, առանց ինքզինք ցուցընելու, այնպես, որ շատ անգամ իր ըրած գործին ինքզինք անգետ կը ձևացներ այլոց առջև: ... Փառքե, համբավե, պերճութենե կը փախչեր և իր վարած բարձր և փափուկ պաշտոններուն մեջ նույն էր, ինչ որ էր իր առջի անշուք վիճակին մեջ, այսինքն՝ համեստ, խոնարհ և հեզ:

«Մետաքսաբանությունը» հրատարակել է:

«Փիլիսոփայություն» մը հորինած էր գաղղիերեն և հայերեն լեզվավ, զոր նույնպես հրատարակելու միտք ուներ,» սակայն մահացավ:

Եղբայրը՝ Անդրանիկ Կրճիկյան:

1865 թ., մարտ, N 685

«Այս առաջին անգամն է, որ պարահանդեսի մը նկարագրության համար հայ օրագրի մը՝ Ծաղկին խմբագիրը 28 օր բանտարկության կը դատապարտվի և այս փառքն ալ լուսավորությամբ պարծող Զմյուռնիա պիտի վայելե եղեր: Չենք գիտեր տակավին, թե Ծաղկի խմբագրին մեղապարտությունը նկարագրին ո՞ր կետին համար է, և զայն հաստատող անձինք ի՞նչ հիմանց վրա իրենց հայտագիրը Վսեմ. կուսակալին մատուցեր են, կամ դատապարտությանց վճիռը լրագրական օրինաց ո՞ր հոդվածին համեմատ տրված է: Անշուշտ, անվանարկության և վատահամբավության հոդվածը ձեռք առնելով հաստատել ուզած են, թե Ծաղիկը Ժեռն- Ժաններուն պարահանդեսը վատահամբաված է, բայց հասարակաց պարահանդեսի մը վրա եղած ընդհանուր քննադատություն մը կրնա՞ վատահամբավություն համարվիլ, և օրենքը կարգիլո՞ւ արդյոք, որ լրագիրներն այնպիսի հանդիսներու նկարագրությունը չընեն. ահա ասոնք մտածելով զարմանք կուգա մեզ, որ Ծաղիկը Ժեռն-Ժաններուն պարահանդիսին նկարագրության համար բանտարկության ենթակա կըլլա, և ավելի կը մեծնա զարմանքնիս, երբ կը մտածենք, որ հասարակաց պարահանդեսն ուրախությամբ ընդունողներն անոր կենդանի նկարեն կը զարշին իբրև անբարոյականությունե մը»:

1866թ., օգոստոսի 6, N 757

(Զբաղված էր Երևակ կարդալով) - «Տեսեք, թե հեղինակն ի՞նչ սքանչելի փիլիսոփայություններ կընե, ինչպես պատմության, աստվածաբանության, կրոնագիտության, բառագիտության, լեզվագիտության, հնագիտության, նորագիտության, բարոյականության, քաղաքականության, օրենսդրության, ընկերական գիտության և այլն, և այլն, և այլն գիտությանց խորերը կը մտնե կելնե՝ ճարտար լողորդի մը պես:

- Բայց տես ինչպե՞ս Նալբանդյանցի հիշատակը կը վատահամբավե և հետո փարիսեական կեղծավորությամբ Աստված հոգին լուսավորե կըսե, ինչպես ազգին ծաղկահաս

ուսումնականության դեմ նախատինք կը տեղա, ինչպես Պալաժենիան կը պանծացնե, ինչպե՜ս ազգին իրավունքը մի առ մի կը ցրե...»

ՎԱՂԱՐՇ

(«Տրամախոսությունք» Է)

1866 թ., դեկտեմբեր, N 74

ԱԶԳԱՅԻՆ

«Կը լսենք, թե Մանչեսթեր գտնվող մերազնյա հարգի վաճառականք՝ իրենց առևտրական զբաղմանց և հեռավոր պանդխտության հոգերուն մեջ նաև ազգին առաջադիմության նպաստելու ազնիվ պարտականություննին չմոռնալով՝ հանգուցյալ արժանահիշատակ Շահնազարյան Կարապետ Վարդապետին տպարանը ծախու առեր, հայերեն լրագիր մը հրատարակել տալու դիտավորություն ունին և այս նպատակավ հաջողակ գրիչ մը կը փնտռեն, որպեսզի Մանչեսթեր երթա և լրագրույն խմբագրությանն ու հրատարակությանը ձեռնարկե, աջակցությամբ արժանապատիվ Տ. Խորեն ուսումնական քահանային, որ ինչպես շատերուն հայտնի է, Շահնազարյանի վախճանեն ի վեր Մանչեսթեր գացած է հոգևոր հովվության պաշտոնիվ»:

Մասիս (օրաթերթ), 1866 թ., դեկտեմբերի 29, N 82

Իզմիրի ազգային գործերը խիստ անկարգ վիճակի մեջ են, ամսի 18-ին հավաքվելով ազգային առաջնորդարանում, որոշում են ընտրել ֆինանսական գործերը ստուգող հանձնաժողով: Սրանք պետք է քննեին և զեկուցեին: Կազմը՝

Պողոս Վարպետյան	Ստեփան Չելիքյան
Խաչատուր Էքիզյանց	Ստեփան Հովհ. Տետեյան

1866թ., դեկտեմբեր, N 778, շաբաթ

«Բազմաթիվ ընթերցասեր ազգայինք, մանավանդ երիտասարդք՝ լրագրույս մանր թերթերուն մեջ քանի տարիե ի վեր ձեռնարկված թարգմանությանց հաջողությամբ գլուխ ելնելը գոհունակությամբ տեսնելով, խնդրեցին մեզնե, որ այսչափ տարիներե ի վեր սպասված և երկու անգամ սկսվելե ետև կիսակատար թողված Թափառական հրեայի հոչակավոր վեպն ալ հետզհետե թարգմանելով ամբողջապես հրատարակելու ձեռնարկենք»:

1867 թ., փետրվար, N 782, շաբաթ

«Հայն ամեն բան կորուսեր է և միայն իր նախահարց եկեղեցին ունի, որո պայծառությունն իր ջերմ փափաքներեն մեկն է: Ասոր համար կըղձա Հայաստանյայց եկեղեցվո մշտջյան հիշատակաց արժանի և երջանկաշնորհ վարդապետաց սրբազան շավղին հետևող եկեղեցականներ ունենալ: Ամեն ազգ իր փառասիրությունն ունի, մեր ալ մեծ փառասիրությունն այս է, ուստի ազգը կը գովե, կը գզվե, կը մեծարե, կը հարգե և, որ ավելի մեծ է, կը սիրե այն

եկեղեցականը, որ հույս կուտա Մեծն Ներսեսի, Սահակ Պարթևի, Մեսրոպա, Խորենացիի, Շնորհալիի և այլն լուսապայծառ օրինակին հետևիլ: Իսկ ընդհակառակն կը պարսավե, կը մեղադրե, կը բամբասե, կարհամարհե և, որ ավելի վատ է քան զամենայն, կատե այն եկեղեցականը, որ նախնյաց ավանդությունները մոռանալով՝ Երքիշոյի, Շմուելի, Սուրմակա և նմանյաց չարաշուք օրինակներուն կը հետևի»:

1867 թ., փետրվար, N 782

«Փարիզի Ֆիռմեն Տիտո եղբարց գրավաճառության տունը հայկական պատմագրաց գաղղիերեն թարգմանությունը հրատարակել սկսած է:

Պ. Վիկտոր Լանկլուա հայագետ գաղղիացին հիշյալ մեծ հրատարակության տնօրեն եղեր է՝ Վենետիկի Մխիթարյան հարց և Եվրոպայի երևելի հայագիտաց գործակցությամբ:

Վսեմ. Նուպար փաշան, որ իր պաշտպանության ներքև առած է այս գործը, բազմաթիվ օրինակներ ստորագրվել է հայ վարժարաններու և գրատանց նվիրելու համար: Բոլոր գործը տասննիհնգ դարերու հայ պատմագրաց բովանդակությունը պիտի ըլլա, և ութածալ մեծ հատորներե պիտի բաղկանա, որոց առաջին արդեն մամուլի ներքև է և Դ դարեն մինչև Է դարուն պատմագիրները կը պարունակե»:

Մասիս (օրաթերթ), 1867, մայիսի 2, երեքշաբթի, N 31

Զմյուռնիա, 28 ապրիլ, 1867

«Ուսումնասեր ընկերությունն այս օրերս հրատարակած հայտարարության մը մեջ (ի՛նչ հայտարարություն) փոխանակ յուր ընթացից վրա ազգայնոց մանրամասն տեղեկություններ տալու, փոխանակ յուր հաշմված էությանը վրա խոսելու, նամանավանդ, փոխանակ Մեսրոպյան դպրոցին բարեկարգ հառաջադիմությանը վրայոք հուզված միտքերը հանդարտեցնելու, կելլե ծամածուռ բառերով և երկդիմի ձևերով կը նշավակե զիս հրապարակավ խոսքի մը նկատմամբ, զոր ժողովքի մը մեջ արտասաներ եմ, և որու ուղիղ միտքը չի հասկնալով կամ չհասկընալու զարնելով՝ աջ և ահյակ կը քաշկըռտե: Հիշյալ ընկերությունը կերևի թե զիս մրոտել փորձելով, յուր ջատագովությունը գտնե՞լ կերազե. այսպե՛ս ուրեմն կըմբռնե եղեր պատիվը, պատիվը, զոր այնչափ անգամ կը հեղեղե իր հայտարարությանը մեջ... (կրճատած չէ. Ս.Շ.)

«Ազգը կործանողը դպրոցն է» այսպես խոսեր եմ եղեր ժողովքի մը մեջ, թեև խոսքերուս ձևը փոփոխված և դիտմամբ աղավաղված ըլլա, սակայն ենթադրելով իսկ թե նույնը եղած է, կընդունիմ զայն իբրև այնպիսի խոսք մը, որուն բացատրությունը ամենուն մտքին ու սրտին մեջն է այսօրվան պարագաներուն մեջ: Ազգը կործանողը դպրոցն է այն օրեն ի վեր, որ նույն հաստատությունը ՈՒսումնասեր անունով ընկերության մը և անոր ատենապետ գտնվող Պ. Ոսկանյանի տեսչության ներքև ինկավ. ըստ որում, այն օրեն ի վեր, զժտությունը և երկպառակությունը անպակաս եղավ ու կըլլա ազգին մեջ, այն չարաչար օձտելով և հոշոտելով: Այո՛, ազգը կործանողը դպրոցն է, ըստ որում գացած ծախքը ազգին զանձային վիճակին համար անտանելի բեռ մը եղած է: Ազգին ելումտից վրա հարևանցի տեսություն մը բավական է ըսածիս անժխտելի ստուգությունը հաստատելու: Կը հուսամ, թե այս իմ բացատրություններս, որք հարկադրեցին զիս սույն առաջին և միանգամայն վերջին պատասխանս տալու, գոհ ըրին ոչ թե ՈՒսումնասեր ընկերությունը, այլ արգո

հասարակությունը, որ անշուշտ հասկցավ, թե ինչ մտքով գրուցած եմ «Ազգը կործանողը դպրոցն է» խոսքս»:

Ստեփան Պալասանյան

Մասիս (օրաթերթ), 1867 թ., հունիսի 20, N 44

Սուեզի ջրանցքի շինարարության գործին մասնակցում էին նաև 100-ի չափ հայեր: Սրանք հիմնականում մշեցիներ էին և բնակվում էին Շաղլուֆում, որը Սուեզից 4 ժամվա չափ հեռու էր:

Մասիս (օրաթերթ), 1867 թ., օգոստոսի 3, N 55

«Տատյան մեծապատիվ Մկրտիչ Պեյին «Ռըվյու դը լը Մոնդ» լրագրին մեջ հայոց ներկա ընկերական վիճակին վրա հրատարակված ընտիր հոդվածը Գաղղիո մեծամեծ գիտուններուն գովությանցն արժանի ըլլալե զատ՝ Վեհ. Նապոլեոն կայսեր ալ հավանությանն արժանի ըլլալով, Նորին Վեհափառության քարտուղարն հետևյալ նամակը գրած է հիշյալ ազնիվ պեյին.

Պալատ Թյուիլրի, 17 հուլիս

Պարոն իշխանազուն Մկրտիչ Պեյ

Տատյան

Պարոն

Կայսրը հաճեցավ ընդունիլ հայկական արդի ընկերության Ձեր շարադրած գիրքը, զոր իրեն նվիրեցիք: Նորին Վեհափառությունն ինձ հայտն հանձնարարեց, որ իրեն շնորհակալությունը ձեզ հաղորդեմ:

Ընդունեցեք, պարոն, իմ խորին հարգանացս հավաստիքները

ՍԱՔԱԼԵ»

1867 թ., սեպտեմբերի 30, շաբաթ, N 816

Վաղարշի տրամախոսությունն է՝ ուղղված «Առ պ. Վարաժ ի Զմյուռնիա»: (Վաղարշը՝ Պ.Պառնասյանն է): Վարաժի՝ «Ազգային քանի մը հանելուկներ» վերնագրով հոդվածի դեմ է («Ծաղիկ» N 143)

«Եթե ոչ՝ Մասիսի հետ ձախորդ վիճաբանություն մ'ունեցած և տակավին փափուկ սրտերնուդ առած վերքը բուժված չէ՞: Ո՞վ ատենօք Լյուքսենբուրգի պանդոկը ճաշող և «բուն» հայեր տեսնել կարծելով «անբան հայեր» գտնող պարոն, որո սիրելի են այնչափ բանաստեղծական անուններ փոխել: ...Եթե հրամանքնիդ Եվրոպայի ազատամիտներն ալ զարմացնելիք նոր ազատամտություն մը գտած եք, շնորհ ըրել ըսելու, որ գանք ձեզ աշակերտինք և բաց թողունք Ժյուլ Սիմոն և Սթուարթ Միլ»:

(Հավանորեն Վարաժը Ստ.Ոսկանյանն է,, որովհետև արվող ակնարկները դա են նշանակում):

1867 թ., նոյեմբեր, շաբաթ, N 823

Վաղարշի բանավեճն է «Ծաղիկ» N 145-ում տպագրված Վարաժի հոդվածի դեմ: Վարաժը հավանորեն Ոսկանյանն է: Վաղարշն առհասարակ խոսում է իր բարեկամ Պարույրի հետ: Բոլորը զետեղվում է «Տրամախոսություն» խորագրի ներքո, որը «Մասիսում» նոր բաժին է:

1867 թ., դեկտեմբերի 2, N 825

Ազդարարում է Իզմիրի «Ծաղիկ» հանդեսի դադարումը:

Մասիս (օրաթերթ), 1868 թ.,հունվարի 3, N 96

Իզմիրից՝ 29 դեկտեմբերի 1867 թ. ամսաթվով մի նամակ, ուր որոշված է մահարձան կանգնեցնել Ռուբեն Անդրեաս Փափազյանի շիրմին: Գործը հանձն են առնում կատարել Փափազյանի աշակերտները: Ընտրվել է հանձնաժողով.

Գևորգ Սուլթանյան	Մեսրոպ Նուպարյան
Ստեփան Յ. Տետեյան	Հովհաննես Փափազյան (բացակա)

Մասիս (օրաթերթ), 1868 թ., հունվար, N 105

«Ֆիրմեն Տիտո» եղբայրների հայտարարությունը. (հայ պատմիչների գործերի հրատարակման մասին)

«Մեր հրատարակած հավաքածույն հայոց փութաջանության արդյունքն եղող բոլոր պատմական գրությանց բովանդակությունը պիտի ներկայացնե: Այդ հավաքածույն դարերու վրա բաժնեցինք ամեն մեկ հեղինակաց ժամանակագրական կարգին հետևելով:

<u>Առաջին հատորին</u> մեջ, որ արդեն հրատարակվեցավ, այն ամեն հույն և ասորի պատմագրաց գործերն հավաքեցինք, որոց բնագիրները կորսված են իրենց լեզուին մեջ, բայց Հայք անոնց թարգմանությունները պահած են: Այս գործերն են. հույներեն Ագաթանգեղոս և Փավստոս Բուզանդացի, ասորիներեն ալ՝ Մար-Աբաս-Կատինա, Բարդածան, Ղերուբնա Եդեսացի, Զենոբ Գլակ և իր շարունակիչ Հովհան Մամիկոնյան:

<u>Երկրորդ հատորը</u>, որ մամլո տակ է, հայ գրականության ոսկեղեն դարը կը պարունակե, այսինքն՝ Կորյունի, Մովսեսի Խորենացվո, Եղիշեի, Ղազար Փարպեցվո գործերը, որք Սասանյանց օրոք կատարված անցից ժամանակակից պատմիչներ են:

<u>Երրորդ հատոր</u> կը պարունակե այն պատմագիրները, որ արաբաց աշխարհակալության և տիրապետության ժամանակները գրած են, այսինքն են. Սեբեոս, որ Հերակլիտոս կայսեր

պատերազմներուն պատմությունը գրած է, Ղևոնդ երեց, որ Արաբաց Հայաստան արշավելուն պատմությունը գրած է. Մովսես Կաղանկատվացի, որ Աղվանից պատմությունը գրած է, Հովհաննես կաթողիկոս և Ստեփաննոս Ասողիկ, որք ազգային և օտար ժամանակագրություններ շինած են, Թովմա Արծրունի, որ Արծրունյաց տան պատմությունը գրած է:

Չորրորդ հատորը կը պարունակե այն պատմագիրները, որք Սելճուկյանց հարձակումներուն միջոցին գրեցին, Մատթեոս Եդեսիացի և իր շարունակիչը Գրիգոր, Ներսես Շնորհալի, Սամուել Անեցի, Արիստակես Լաստիվերցի:

Հինգերորդ հատորը չորրորդին շարունակությունն է և կը պարունակե Կիրակոս պատմագիր, Վարդան Մեծն, Մաղաքիա, Վահրամ Եդեսիացի, Մխիթար Այրիվանեցի, Ստեփաննոս Ուրպելյան, Սմբատ Գունդստաբլ և Թովմա Մեծոփեցի: Կլինի նաև Առաքել Դավրիժեցի»:

Ֆինանսապես օժանդակելու գործը հանձն է առել Նուպար փաշան:

«Ասկե զատ, Վենետիկի Մխիթարյան հարց մեզ ըրած օգնականությունն ու փութաջան գործակցությունը, գաղղիացի և օտար հայագիտաց և գլխավորապես Պ.Պրուսեի և Պ. Էմինի բանասեր սատարությունը կը ներեն մեզ հավաստել, թե մեր այս հավաքածույն, որի ծրագիրը պ. Վիկտոր Լանկլուա երկնած է, և տպագրությունն ալ կառաջնորդե, ըստ արժանվույն պիտի ոչ միայն բազմահմուտ գիտնականներեն այլև» ուրիշներից:

Մասիս (օրաթերթ), 1868 թ., մայիսի 22, N 169

ՈՒղերձ առ հայրն իմ հոգեհատոր

Տէր Մարգար Միրզա Վանանդեցի

որ Հուդին.

Մարգար Միրզա Վանանդեցին վախճանվել էր 1868 թ. մայիսի 8-ին Զմյուռնիայում:

Նշան Միրզա Վանանդեցին որդին էր, և հորը կորցրել էր երիտասարդ հասակում:

Մասիս (օրաթերթ), 1869 թ., փետրվարի 12, N 310

Արտատպել է «La Peforme»-ի հրատարակության մասին «Արշալույս Արարատյանի» ազդարարությունը:

Մասիս (օրաթերթ), 1869 թ., հուլիսի 3, N 385

Գահիրե, 14 հունիս, 1869 թ.

«Եգիպտական կառավարությունը մեծամեծ պատրաստություններ կը տեսնե արտաքո կարգի շքեղությամբ տոնախմբելու համար Շուեզի ջրանցքին բացվելուն հանդեսը, որ ներկա տարվույս հոկտեմբերի 4-16-ին պիտի կատարվի:

Բարձրապատիվ Փոխարքային կառավարությունը, Եվրոպիո վեհապետները այս մեծաշուք հանդիսին հրավիրելէ զատ, Եգիպտոսի ամեն ազգաց հոգևոր Առաջնորդներն ևս, այսինքն՝ պատրիարքներն ու եպիսկոպոսերն հրավիրելու վրա է մարդասիրաբար: Այս պատիվը, կը լսեմք, թե արդեն եղած է Հունաց, Կաթոլիկ հայոց և Խըփթիներուն առաջնորդացը»:

Մասիս (օրաթերթ), 1869 թ., սեպտեմբերի 25, N 427

Իզմիրեն կը գրեն. «Աղաթոն էֆենդին այս շաբթու իր պաշտոնին գլուխ անցավ, և այժմեն գոհացուցիչ հույսեր կտա: Ամեն բանե առաջ իր հետի մարդիկը ճանչել ուզելով հետազոտություններ կընե, որք անոնց ինչ ըլլալը կը հայտնեն իրեն: Այս կերպիվ հասկըցավ, որ Առևտրական ատենին փոխնախագահը մեծ հարստություն մ' ունենալե գոհ չըլլալով, օր քան զօր ավելի մեծըցընել կուզե: Մնայուն դատավորը, որ ատենադպրի պաշտոն կը վարե, իր հորն առևտրական գործողությունները դյուրացնելու համար մտած է այս դատավորական պաշտոնին մեջ: Ատյանին գրագիրները կամ գործակալները իրենց ամսականներն հնգապատկելու տաղանդն ունին» և այլն:

Մասիս (օրաթերթ), 1869 թ, հոկտեմբերի 2, N 430

«Լա Բրես կը ծանուցանե, թե Ավստրիո կայսրը հոկտեմբերի 24-ին ճանապարհ պիտի ելնե Կ.Պոլիս երթալու, ուր 6 օր պիտի կենա ու հետո Եաֆայի ճանբով Սուեիշ պիտի երթա»:

Մասիս (օրաթերթ), 1869 թ., նոյեմբերի 17, N 455

«Աղեքսանդրիայեն Նոյեմբեր 4/16-ին ընդունած նամակնես կը տեղեկանամք, թե Գեր. Մեսրոպ եպիսկոպոսը փառավոր հանդիսիվ ի Գահիրե մտնելով և վսեմ. Նուպար փաշային հետ տեսնվելե ետև, ըստ հրավիրանաց Բարձր ... փութացեր է ի Սուեիշ երթալ ջրանցքին բացման հանդիսին ներկա գտնվելու իբրև հոգևոր հովվ և ներկայացուցիչ Հայոց ազգին:

... Եգիպտոսի առաջնորդ, Գեր. Մեսրոպ սրբազանը խիստ հավանականաբար ներկայանալու պատիվը ունեցած պիտի ըլլա այժմ ոչ միայն փոխարքային, այլ Գաղղիո կայսրուհվույն և Ավստրիո կայսեր»:

1868 թ., մարտի 2, շաբաթ, N 838

Զմյուռնիա, 24 փետրվար, 1868 թ.

«Երկու տարիե ի վեր, տեղվույս թե՛ ազգային վարչությունն, և թե՛ դպրոցական մատակարարությունն այլևայլ կերպարանք առին, և նույն միջոցին ազգային շահերն մեծապես վնասվեցան: Քաղաքական ժողով մը կազմվեցավ, որ զուտ «Դիկտատորություն» էր, և որն որ «Ուսումնասեր ընկերություն» անունով ակումբի մը հանձնեց տեղվույս երկսեռ վարժարաններուն տեսչությունը և մատակարարությունը, չէ թե բարեկարգության և առաջադիմության նկատառումներով, այլ միայն հակառակության ոգվով, Պ. Ոսկանյանը պաշտպանելու համար: Գրեթե 1300 ոսկի եկամուտ՝ դպրոցներուն նյութական պիտոյից հատկացած էր: Ուսումնասեր

ընկերությունն առաջին տարին կաղն ի կաղ վարեց իր պաշտոնը, իսկ այս տարին բոլորովին անդամալույծ դառավ: Դասատուները ի բաց առյալ Պ. Ոսկանյան, իրենց ամսականաց առ հաշիվ հազիվ թե փոքր գումարներ ուր ուրեմն կընդունին, և չքավորության ճանկին տակ տառապելով՝ քանիցս կը բողոքեն, այլ իզուր: Վերջապես խմբովին դասատուներն գիր մը կուղղեն առ «Ուսումնասեր ընկերությունն» և ստակ կը պահանջեն: Ուսումնասեր ընկերությունն իր հրաժարականը կուտա, և Քաղաքական ժողովին կը դիմեն: Քաղաքականն ալ կը հրաժարի, և կը ստիպվին միահամուռ շարժելու դիտմամբ իրենց դասերը դադրեցընել և ուղղակի Երեսփոխանական ժողովին ներկայացնել իրենց վիճակը»: (Սրան էլ՝ իրենք՝Դիկտատորները, չեն ճանաչում):

«Դասատուներն, որ ավուր պարենի կարոտ մնացեր են, թեև ոմանք մեկ տարվան, ոմանք յոթն ամիսվան, ոմանք առ նուազն վեց ամիսվան առնելիք ունին ազգային սնտուկեն, տակավին վերջնական տնօրենության մը կը սպասեն որպես զի իրենց պաշտոնը շարունակեն: Սակայն այս միջոցին ինչպես կը կառավարվին դպրոցները, մի՛ հարցըներ: Պ. Ոսկանյան դասատուներուն միության կապը խզելու համար բավականին աշխատելե ետև կը ստիպվի քանի մը ներքին աշակերտներով վարել դպրոցներն, ուր գրասեղաններն թափուր կը մնան, ուր դռնապաններն կառավարության պաշտոն կը վարեն, ուր լոկ Գաղղիերեն դաս կը տրվի քանի մը ժամ օրը քանի չափ աշակերտներու, ուր բանտն ու բռնությունը կը տիրապետեն: Մեսրոպյան դպրոցին աշակերտներեն՝ որ 400 կը հասնին, հազիվ 70 տղաք դպրոց կը հաճախեն, իսկ Հռիփսիմյանց դպրոցին 250 աշակերտուհիներեն այժմ հազիվ 30 հոգի, որոնք խաղալու համար կերթան:

Ահա մեր հռչակավոր վարժարաններուն վիճակն այս աստիճանի հասած է ի շնորհս Պ. Ոսկանյանի, որ կանգուն կը կենա իր պաշտոնին մեջ, ըստ որում իր ամսականներն արդեն առած է, նման այն զորապետին, որ իր զորքը սուրի, կրակի և սովի մատնելեն ետև՝ կը պատժի, որ հաղթանակը տարած է, թեև չորս կողմը մինակ ավերակներ ու դիակներ կը տեսնվին:

... Տեղվույս ազգային ելմտից վիճակին վրա խոսիլն ուրիշ առթի թողլով, այսչափս մինակ կըսեմ, որ 1300 ոսկիեն 500 ոսկին Պ. Ոսկանյանին գրպանը մտած է, մնացածին մեկ մասը «Ուսումնասեր ընկերությունն» իր առնելիքին տեղ վար դրած է, մաս մ'ալ վարժարաններու տասնուրի չափ պաշտոնեից տրված է, մաս մ'ալ տակավին պիտի հավաքվի: Ասկեց ի՞նչ կիետևի, սա կիետևի, որ «Ուսումնասեր ընկերությունն» ոչ միայն իր «ուսմանց ծրագիրն» անգործադրելի թողուց, ոչ միայն իր գրավոր խոստումներն չկատարեց, ոչ միայն «իր ուսումնասիրության» նշանավոր փորձեր չի ցուցուց, այլև իր մատակարարության գործը անկանոն, խառն, ազգակործան կերպով կատարեց, այլև մինչդեռ Պ.Ոսկանյանին մինակ ազգային սնտուկեն 20 հազար դուրուշ պիտի վճարեր, և մնացածը հասարակութենեն պիտի հավաքվեր, 50 հազար դուրուշ ազգային սնտուկեն ամբողջապես վճարեց, օրը 1 ½ ժամ գաղղիերեն դասատուության համար, այլև իր մատակարարության հաշիվն ազգին չներկայացուց և վարժապետներուն օրինավոր շարժումեն ինկավ մեռավ:

Այսչափ բավական է այն Ուսումնասեր ընկերության վրա, որ վարժարաններուն հսկողությունն իր վրա առնելու համար Ազգն իրար անցուց, հայտարարություններ հրատարակեց, ամեն օրինավոր ընդդիմություն տգիտության շարժում համարեց, ամեն դիտողություն՝ թշնամանք, և երկու տարի կուռք մը իր գլխի վրա կրելեն, իր կիրքը հագեցնելեն, իր արիությունն երևան հանելեն ետև ակնկոր և հուսահատ հետ քաշվեցավ դպրոցները գոցվելու վիճակի մեջ թողլով... (Բազմակետը իմը չի. Ս.Շ.): Եթե այս անկարգության ներքին պատճառը փնտռվի՝ Սահմանադրության դադարման առիթը պիտի գտնվի, դադարում, որը շատ վնաս պատճառեց մեզ, ինչպես նաև բոլոր ազգին»:

1868 թ., մարտի 23, շաբաթ, N 841

Զմյուռնիա, 16 մարտ, 1868 թ.

«Քաղքիս դպրոցներուն դասատուաց պաշտոնեն կամովին դադարումը և «Անգոյ» երեսփոխանական ժողովի մը կողմեն անպատասխանի մնալով՝ իրենց հանած «հայտարարությունը», վարժարաններուն անկարգ վիճակը, ազգային մանկտվո փողոցները և օտար դպրոցներու մեջ դեգերիլը, ԵՂՈՒՄՏԻՑ ՅՈՌԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և վերջապես՝ այս անիշխանության ժամանակ քանի մը հին «բռնավորներու» խլրտումն ու օձտումը, Պ. Ոսկանյանը իր պաշտոնին մեջ պահելու և ազգային կառավարության սանձը ըստ նախորդ սովորության վարագուրին ետևեն վարելու, պատասխանատվութենե զերծ մնալու և խմորյալ զեղծումներ պարտկելու նպատակով այնչափ ցավ, վրդով, այլայլություն պատճառեցին քաղքիս հասարակության (հասարակություն մը, որ թեև արթուն, ազատասեր, սակայն ստեպ զանազան նյութական նկատումներու համար իր գլուխը քանի մը մարմնով մեծամեծներու լախտին տակ ծռելու վարժեր էր), որ ամեն կողմեն գանգատ, աղաղակ կը բառնան, կը շարժին, կերթան կուգան, մասնավոր գումարումներ կը կազմեն:...

Եվ այդ ժողովրդային շարժման հոգին, պարագլուխը մեծապատիվ Կարապետ էֆենդի Ամիրայանն էր, արքունի մաքսատան ընդհանուր արկղապետ, որ շատ տարիներե ի վեր այս ծանր ու փափուկ պաշտոնը հավատարմությամբ վարելուն, տերության համարումը կը վայելե»:

<u>Մարտի 1-ին</u> «6-7 հարյուրի չափ ազգայինք Ս.Ստեփաննոս եկեղեցին կը գումարվին և միաձայն կը պահանջեն, որ իսկույն հաշվետումարները կնքվին, ազգային կիքը որու քովն է նե՝ առնվի, վարժարաններու դասատուներն իրենց պաշտոնին մեջ հաստատվին և առժամանակյա հանձնաժողով մը կազմվի ազգային եկամտից, հաշիվներու քննության և վարչության պաշտոնով»:

Ընտրվում են 40 երեսփոխաններ, որոնք ընտրում են գործերը քննող խորհուրդ:

Մարտի 3-ին խորհուրդն անցնում է գործի: Կազմը՝

Սուլեյման պեյ	Ս. Միրզա
Գևորգ Սուլթանյան	Գևորգ Ակասյան
Հովհ. Ճելեպյան	Սարգիս Թագվորյան
Ստեփան Տետեյան	Թագվոր Պարծանքյան
Ստեփան Չելիք	Ս. Պալասանճյան
Պողոս Վարպետյան	

« «Ազգային թափան» (կնիք), որ տարիներով լույս տեսած չէր, երևան ելած և հանձնաժողովին տրված էր, ազգային դասատուները ազգովին դպրոցները առաջնորդված և հարգո Պ. Մ. Մամուռյան առժամանակյա տեսուչ կարգված էր, Պ. Ոսկանյանը ամսույս առջի օրը դպրոցեն ելած ըլլալով»:

Չնայած աջ ու ձախ լուրեր էին շրջում, թե սա ժողովրդական ապստամբություն է, և անգամ կառավարության ականջը հասցրին, բայց այդպիսի բան չկար:

«Ժողովուրդը հանդարտ սրտով և իր տնական մեկ գործը կարգի դնելու պես անհրաժեշտ պարտավորության մը կատարման համոզումով, իր անձնական գործերուն կ'զբաղի, և երկու օրվան մեջ քաղքիս հայ տարեգրություններու մեջ չի տեսնված այս հեղափոխությունը հօգուտ ազգային շահերու կը կատարվի, առանց շփոթի, առանց աղմուկի, առանց մեկուն քիթն արյունելու»:

***

(Սա հավանորեն Ստեփան Պալասանյանն է)

Մասիս (օրաթերթ), 1868 թ., մարտի 19, երեքշաբթի, N 136

«Առանց ցավելու չկարդացինք հետևյալ հատվածը, զոր Իզմիրի Էնբառախալը կը հրատարակե հիշյալ քաղաքի հայոց վրա (թեև ճիշտ խոսելով՝ ուրիշ տեղերի հայոց վիճակն ալ Իզմիրցիներուն վիճակեն խիստ առաջ չէ):

Իզմիրի հայոց ներկա վիճակը նախանձելու արժանի չէ: Այս հասարակությունը 400.000 ղուրուշի հաստատուն եկամուտ մ' ուներ, բայց հիմա իր բոլոր անշարժ ստացվածքը գրավի դրված են, քանզի պարտքի մեջ խղդված է, բազմաթիվ աղքատներ կը կերակրեր, բայց հիմա աղքատին ողորմություն զլանալու տխուր հարկին մեջ կը գտնվի, երկու դպրոց ուներ, որք լավ և գեղեցիկ համբավ մը կը վայելեին և ուսմանց լույսը կը ծավալեին, բայց ստիպվեցան զանոնք գոցելու և հետևապես խոստովանելու թե ոչ ևս կրնա վարձք տալ ուսուցիչներու, որք մինչև հիմա բարին, ճշմարիտը, գեղեցիկն և օգտակարը կը սովորեցնեին իրեն:

Դյուրին է մակաբերել թե այս վիճակը ո՛րչափ անտանելի եղած է: Իբրև հասարակաց կարծյաց բերան՝ պարտք կը համարիմք այս տխուր կացությանց վրա Բ. Դրան ուշադրությունը հրավիրել, որ միայն կրնա հայոց պես շատ կողմանե համակրության արժանի հասարակության մը մեջ երևան ելած դժվարությանց լուծում տալ»:

1868 թ., ապրիլի 20, շաբաթ, N 845

Իզմիրցիները 3000 օսմանյան լիրայի փոխառություն են որոշել վերցնել, հինգ տարում վճարելու պայմանով՝ հարյուրին 6 տոկոսով:

Մասիս (օրաթերթ), 1868 թ., հոկտեմբերի 1, N 239

Տպագրություն Տետեյան. «Քանզի անուրանալի ճշմարտություն մի է, հուսալի և տխուր ճշմարտություն մի, որ մեր ազգին արդի վիճակին մեջ տպարան մի հաստատել, լրագիր կամ գիրք հրատարակել մեծ զոհողություն ըսել է. մեկ խոսքով, գրավորական որ և իցե ձեռնարկություններու մեջ բաղդ փնտռելը տեսակ մը հիմարություն համարված է, գոնե մեր ազգին մեջ»:

«Մեծապատիվ Հ. Տետեյան (նաև՝ Տիգրան Հարություն Տետեյան. Ս.Շ.) յուր՝ Եվրոպայի հետ ունեցած առևտրական ծանր զբաղմանց հետ, յուր տպարանի հոգերն ալ ունի»:

« «Թշվառք» վիպասանության համար մինչև հիմա հազիվ հազ 80 բաժանորդ ստորագրված են»:

1869 թ., փետրվարի 8, N 897

Օրվան խնդիրը (դաստիարակություն)

«Նուպար-Շահնազարյան վարժարանի «Ռիսման Բրոկրամը» Սենթ-Պարպի բարեհռչակ դպրոցին Բրոկրամին հետևությունն է, գործադրիլ սկսած է, արդյունքներն ակներեւ են: Ռիսման ընթացքը 8 տարի որոշեր են, և քաղաքական տնտեսությունը, համազգային իրավունքը, ինչպես անոնցմէ առաջ ալ ֆիզիկա, քիմիաբանություն և այլն, ըստ ժամանակին և ըստ կարգին կավանդին աշակերտաց»:

1869 թ., մարտի 1, N 908 (կամ՝ 890, այս տարվա համարները խառն են)

Տրամախոսությունք

«Իզմիրի «Արշալույս Արարատյան» լրագիրը կը ծանուցաներ, թե հայերու խմբագրությամբ Իզմիրի մեջ գաղղիերեն «Անդրանիկ» թերթ մը հրատարակել սկսեր է Լա Ռեֆորմ (վերանորոգում) բարձր տիտղոսով, և կը հրավիրեր լուսավորյալները որպես զի այս թերթին բաժանորդ գրվին: Մեք այս թերթը տեսանք, չենք գիտեր, թե քանի «լուսավորյալ» այն հորդորը լսեցին, բայց այս գիտենք միայն որ հայերու խմբագրությամբ եղած գաղղիերեն «անդրանիկ» թերթը հայերուն վրա բան մը չգրեց, ոչ լավ, ոչ վատ: Մխիթարյանց վրա չափազանց գովասանական հոդված մը կը պարունակեր անցյալները, բայց այն ալ գաղղիական լրագրէ մ' օրինակված: Ռիստի լուսավորյալներն իրավ լուսավորյալ եղած կըլլան, եթե կեղծ լույսերեն չխաբվելով՝ Լա Ռաֆորմի բաժանորդ գրվելու համար ի քաջալերություն հայերու խմբագրությամբ ելած գաղղիերեն թերթի մը, սպասեն, որ ան ալ հայոց վրա ճշմարտապես անոնց ազգային շահերուն ծառայող հոդվածներ գրե: Ապա թե ոչ՝ Լա Ռեֆորմի բաժանորդ գրվիլ միմիայն ուրիշ լրագիրներէ օրինակություններ կամ ծանոթ քաղաքական խնդիրներու վրա առավել կամ նվազ ճարտասանական հոդվածներ կարդալու համար, որոնցմով լի են ամեն գաղղիական թերթեր, կարծեք նշանակություն չունի: Գուցե Լա Ռեֆորմի աշխույժ խմբագիրը մեր այս անմեղ դիտողություններուն դեմ զայրանալով՝ Պերանժեներն ու հազար և մեկ հեղինակներ իրար անցնէ, մեր հոգը չէ, մենք ալ զինքը «Մեղուի» Մեչուխեչային կղրկենք, որ իր Արևելքեն Արևմուտք ճանապարհորդած ժամանակ քարիքաթուրան կը գծեր, որ, ստույգը խոստովանելով, այն ատեն երբ տեսանք, քիչ չխնդացինք»:

ՎԱՂԱՐՇ (Պողոս Պառնասյան)

1869 թ., մարտի 8, շաբաթ, N 909

<u>Լամարթին</u>. «Մահը տարավ դարուս նշանավոր հանճարներեն մեկը, որ միանգամայն մեծ բանաստեղծ, մեծ ճարտասան, մեծ պատմաբան ըսվելու արժանի, և քաղաքականության մեջ ալ անվանի եղած էր: ... Լամարթին իր գրվածոց մեջ հայոց ազգին վրա միշտ համակրությամբ խոսած է, և այսպիսի անձի մը կարծիքն ալ անշուշտ անգին է, վասն զի հազարավոր չարախոսներու պարսավներն ու զրպարտությունները կը նվազին անոր քով:

1790-1792-ին ծնած է: Իր հայրը դժբաղդ Լուդովիկ ԺԶ թագավորին հեծելազոր պահապանաց հրամանատար էր, և 1792-ին օգոստոսին ապստամբները Թյուիլրիի պալատը կոխած ժամանակ, Զվիցերիայի պահապանաց հետ ի միասին անոնց դեմ կենալով՝ բանտարկվեցավ: Իր դաստեարակությունը կղերական խնամոց հանձնվեցավ և իր մատաղ հասակին մեջ «հուզմանց, սիրո և երևակայության աշխարհի մը մեջ կապրեր»:

1811-ին զնում է Իտալիա ճանապարհորդության:

1820-ին հրատարակում է առաջին ժողովածուն:

1825 ? նշանակվում է Աթենքի դեսպան:

1830 հետ է կանչվում Ֆրանսիա: Լամարթին 1830-ի դեպքերեն սկսավ զգալ, որ ընկերային շենքն առանց ժողովրդական իրավանց հիմնել անկարելի է, ուստի բոլորովին ազատական գաղափարաց կուսակից կեցավ խորհրդարանին մեջ, որ երեսփոխան ընտրված էր:

1847 թ. Ժիրոնտյանց պատմությունը հրատարակեց, ուր գաղղիական մեծ հեղափոխության ամենեն գլխավոր դրվագներն սքանչելի ոճով գծագրված են: Այս գիրքը 1848-ին հեղափոխության վրա նույն ազդեցությունն ունեցավ, ինչ որ Ռուսսոյի գրվածքներն ըրած էին 1789-ի հեղափոխության վրա:

1848-ը զինքը մինչև իշխանության գագաթը հասուց, բայց երկար չկրծավ կենալ հոն: Այն միջոցին էր, երբ Փարիզի ամբոխը քաղաքապետական պալատին առջև լցվելով, Ժաքոպենյան Կարմիր դրոշը պարզել և Գաղղիո դրոշակ ընդունել տալ կուզեր, Լամարթին իր կյանքը վտանգի մեջ դրավ և ճարտարխոսության ուժով զայրույթները ցածույց: «Կարմիր դրոշն, – ըսավ, – Արեսյան դաշտեն անդին չէ անցած, բայց եռագույն դրոշը բոլոր աշխարհ պտըտած է:

Հետագայում քաշված կյանք էր վարում»:

1869 թ., հուլիսի 19, N 910

Ազդարարվում է Իզմիրի «Իրավունքի» (շաբաթաթերթ) դադարեցման մասին:

Մասիս (օրաթերթ), 1869 թ., օգոստոս, N 412

«Ահավասիկ Նապոլեոն կայսեր հրատարակված ընդհանուր ներողության վրա գաղղիացի գլխավոր աքսորելոց հայտարարությունները, որովք կը ծանուցանեն, թե ներողությունը չեն ընդունիր և կամավ իրենց աքսորը կը շարունակեն»:

(Բերված է Հյուգոյի, Լուի Բլանի, Ֆելիքս Բիայի, Էդգար Քինեի խոսքերը):

1870 թ., փետրվարի 4, չորեքշաբթի, N 944

Հայ լրագրության վիճակը

«Հայ լրագրությունը ժամանակե մը ի վեր տնտեսական օրինաց ամեն պայմաններեն դուրս տարօրինակ տեսարան մը կընծայե: Աշխատության բազմապատկություն, վնասու բազմապատկությամբ փոխարինյալ:

Ազգին մեջ ժամանակե մ' ի վեր տեսնված մտավորական դույզն շարժումը ոմանք չափազանցորեն նկատելով՝ կարծեցին, թե լրագիր առնող կարդացողներուն նվազության պատճառը լրագրաց սղությունն էր, ամենօրյա թերթեր հանելու ձեռնարկեցին աժան գնով: Կարծեցին, թե որչափ գինն աժան ըլլա, այնչափ շատ ընթերցող կը գտնվի: Ճանբա ելան, աշխատեցան, ճգնեցան, իրենց կարողութենեն վեր զոհողություններ ըրին և փոխանակ քանի մը հազար ընթերցողի, ինչպես որ կը հուսային, հազիվ քանի մը հարյուր գնող կրցան գտնել:

Ժողովրդյան մեջ ընթերցասիրությունը, մանավանդ լրագիր կարդալու սերը կամ հետաքրքրությունը խիստ անձուկ է, շատերն ալ մաքուր հայերեն աշխարհաբառ լեզվով գրվածներ չեն կասկնար, և կը փափագին որ հնար եղածին չափ ռամկորեն ոճով ու լեզվով գրած ըլլան: Մյուս կողմանե մշակյալ սակավաթիվ մտքեր ալ խնամքով գրված լուրջ, իմաստալից և ճարտար գրվածքներ կուզեն կարդալ: Հայ լրագիրք այս երկու դասերը միանգամայն գոհ չեն կրնար ընել, իսկ մեկուն կամ մյուսին բաղձանաց պատասխանելու համար՝ հարկ է, որ այս երկու դասերը զատ զատ իրենց ճաշակին համեմատ գտնված ամենօրյա թերթ մը սնուցանելու չափ բազմաթիվ ըլլան: Բայց չեն: ՈՒսյալ դասը սակավաթիվ է, անուսում դասն ալ ընթերցասեր կամ հասկցող չէ:

Այս պատճառավ ամենօրյա թերթ հրատարակող խմբագիր մը պարտավորված է ամեն մտքի և ամեն ճաշակի ծառայելու վիճակի մեջ դնել իր թերթը: Ասկեց զատ, որովհետև ամեն օր թերթ պիտի հասցընե և յուր նյութական կարողությունը չներեր պետք եղածին չափ գործակիցներ ու օգնականներ ունենալ, ուստի կը հարկադրի՝ թերթը շուտով և անպատճառ լրցնելու համար, ինչ գրվածք որ ձեռքը հասնի՝ անմիջապես հրատարակության տալ, շատ անգամ առանց իսկ աչքե անցունելու, որովհետև ժամանակ չկա: Առած լուրերը չկրնար ստուգել, շարված գրվածոց փորձերը չկրնար ուշադրությամբ ուղղագրել, որովհետև ժամանակ չկա. ուստի խառն ի խուռն նյութերով, անիմաստ կամ անհամ գրվածքներով և անթիվ սխալներով լեցուն թերթեր հանելու կը հակադրի ակամա»:

(Պոլսում 5 կամ 6 տպարան կար)

1870 թ. փետրվարի 18, չորեքշաբթի, N 948

Իզմիր, 12 փետրվար

«Տխուր է տեղվույս ազգային վիճակը, անկերպարան կը շարունակվին գործերը, ծանր դրամական նեղությունը, տարտամ՝ չըսեմ անհաջող, հանգանակության ելքը:

Եվ արդարև, ո՞ր սիրտ ցավ չզգար, երբ կը տեսնե, որ բարբարոս ժամանակներու մեջ ամեն տեսակ դժվարությունների հաղթող վարժատուն մը, մեր հայց եռանդուն ազգասիրության և քրտնանց արդյունքն եղող վարժարան մը, հայրենասեր բարերարներու ձեռոք մեծագին անշարժ կալվածներ ունեցող վարժարան մը, ... այսօր փակվի, գոցվի, և այս ալ սույն քաղաքակիրթ դարուս մեջ, և այս ալ սույն լուսավոր սերունդին օրովը, և այս ալ հիներուն քով նոր նոր ուսումնարաններ բանալու՝ եռանդ և գործ ցույց տվող օտարազգիներու մեջ, և այլ ալ ... Իզմիրի, Տաճկաստանի այս Մարսիլիայի մեջ, արևելքի այս մեծանուն և վաճառաշահ քաղաքի մեջ»: (Բաց էր միայն ընթերցատունը)

1870 թ., մարտի 28, շաբաթ, N 959

«... Գործադրելի հռչակված խորհուրդն իրավմամբ երկպառակության որում դատվեցավ, և ամեն ինչ խորին և հուսահատական լռության և անտարբերության մեջ ընկավ, թեև վեց հարյուրի չափ խեղճ մանկտիք մեծ մասամբ ուսումե զրկված լիովին կը բողոքեին լռելյայն այս լռության, այս անտարբերության դեմ և երկու հոյակապ վարժարաններու և սյունազարդ տաճարի մը դռներուն առջև տարօրինակ և հակապատկեր մը կը ներկայացնեին և կը ներկայացնեն ցարդ՝ իբրև ուսման և գիտության ծարավի մուրացկաններ»:

«... Էհ, հարուստ ծնողքն իր զավակը օտար դպրոց կը ղրկե որ օտարանա լիովին, չքավորը իր գլխեն զավակները ճամբելու համար ուր որ ուզես կը ղրկե, նույնիս ՇԵՐՊԵԹՃԻ մը կրպակը և լռիկ-մնջիկ անեղք կը կարդա ոմանց գլխին վրա. ժողովուրդը ազգային ոգի, եռանդ չունի, և շարժիլ չգիտե, վասնզի իր անձնական շահը վտանգի մեջ ձգելու կ'երկնչի»:

*** (Նախորդ

հոդվածն էլ սրանն էր)

1870 թ., ապրիլի 1, շաբաթ, N 960

«Զմյուռնիացի օրիորդ մը» ստորագրությամբ նամակ կա Իզմիրի հայության վատ վիճակի մասին: Դպրոցները փակ են, երիտասարդները չեն մտահոգվում գործելով: «Եթե տակավին կրկին վարժարանաց վիճակին դարման մը չը տարվի, այս ատեն 1870-ը Զմյուռնիացվոց սև ճակատագրին թվականը պիտի սեպվի»:

1870 թ., հունիսի 6, շաբաթ, N 979

«Փարիզի Հայկազյան վարժարանի վարդապետաց պարտքին խնդիրն, ... որ առանց ազգին հաճությանն ու գիտությանը եղած է վարդապետներեն և տոկոսը վրան բարդվելով՝ մեծ գումարի հասած է (լսածնուս նայելով՝ 100,000 ֆրանկ), ազգին վրա ձգել կուզվի իբրև հանուն ազգին հիշյալ ազգային վարժարանին համար եղած, բայց ազգը չընդունիր, վասն զի իր կամոքն և գիտությամբը եղած չէ: Ազգը կամ պատրիարքարանը ոչ հրաման կամ արտոնություն տված էր վարդապետներուն, որ փոխառություն ընեն վարժարանին համար, և ոչ ալ վարկ բացած էր անոնց համար: Ընդհակառակն, պատվեր գրած էր, որ վարժարանին պիտույքներն և ելումտից հաշիվները հոս (իմա. Պոլիս – Ս.Շ.) կազմված մասնաժողովին ղրկեն, հոսկեց ալ պետք եղած ստակը ղրկվի իրենց: Այս էր ազգին կամքը և այսպես ալ ըրած էր:

... Մեք կը հիշենք, որ վարդապետներն Հայաստանյայց եկեղեցվո և ազգին զիրկը դիմած ժամանակնին իրենց խոսքովը 30,000 ֆրանկի չափ պարտք ունեին. այն պարտքին համար քանի մը ամիրաներ մեջերնին հանգանակություն մը ըրին, հանգուցյալ Պողոս պեյ Տատյան և Պետրոս աղա Խորասանճյան, Գևորգ պեյ Երամյան, Կարապետ պեյ Երամյան, Հակոբ էֆենդի Նորատունկյան և այլն, և, եթե չենք սխալիր, 35,000 ֆրանկի չափ գումար մը կազմելով վարդապետներուն ղրկեցին, որպեսզի պարտքե ազատելով՝ հանդարտ սրտիվ ծառայեն ազգին»:

1870 թ., հունիսի 17, չորեքշաբթի, N 982

Զմյուռնիայի անտանելի վիճակի, դպրոցները փակ լինելու մասին: «Իզմիրի երկսեռ վարժարանաց հոգաբարձությունը հորդորական հայտարարություն մը հրատարակեր է, և ուսմանց հայտագրին հետ իր հսկողության պայմանները կը հայտնե, հայ դպրոց մը ըստ կարի զաղղիացնելու փափագելով»:

1870 թ., սեպտեմբեր 9, չորեքշաբթի, N 1006

Թղթակցություն Իզմիրից (5 սեպտեմբեր 1870թ.), որ Մկրտիչ Աղաթոն էֆենդին քաղաքի առևտրական ատյանի գլուխ անցնելով, պետք է կարգ ու կանոն հաստատի քայքայված հայկական գործերում: Չնայած որոշ «էնթրիկաններ» և «զեղծասեր» անձինք նրան խանգարում են, բայց գործը լավ առաջ է գնում:

1870 թ., հոկտեմբերի 3, շաբաթ, N 1013

Պաշտպանում է Մասիսի նախորդ՝ N 995-ում տպագրված հոդվածը (օգոստոսի 1), որ Մեսրոպ եպիսկոպոսը Սուեզ գնալով՝ ջրանցքի բացման համար, մնացել է այնտեղ, իրեն հռչակել Երուսաղեմի թեմի առաջնորդ և իրար հետևից ապօրինություններ է անում: Նա ութ ամիս նստել է Եգիպտոս և չի վերադառնում Տրապիզոն, ուր վիճակի առաջնորդն էր: Արշալույս Արարատյանը պաշտպանում է Մեսրոպին:

1870 թ., դեկտեմբերի 16, չորեքշաբթի, N 1032

Անլուր սրբապղծություն մը

«Հ. Եղիսե անուն կաթոլիկ վարդապետ մ' անցյալ ուրբաթ օրը Սամաթիո կաթոլիկաց եկեցեղին ըստ հռովմեական ծխի պատարագ ընելով և երախա մը մկրտելով, եկեղեցին պղծվեր է: Որովհետև վարդապետը հակահասունյան է եղեր: Հիմա եկեղեցին գոց է իբրև պղծյալ, Սամաթիո հասունյան կղերն ու ժողովուրդը հոն չեն երթար և տան մը մեջ ժամերգություն և պատարագ կընեն: Այս տեսակ սրբապղծություն մը մինչև այսօր լված ու տեսնված չըլլալուն համար է, որ ԱՆԼՈՒՐ մակդիրը կուտանք»:

1871թ., փետրվարի 6, շաբաթ, N 1050

Իզմիրեն «Ազգային գործերը կաղն ի կաղ կը քալեն, թեև վարչությունը կաշխատի դրամական նեղությունն ըստ կարի դարմանել: Արդեն գիտեք, որ երկսեռ վարժարանները մասամբ մը հանգանակությամբ պիտի մատակարարվեին այս տարի և դժբախտաբար հանգանակությունն ակնկալյալ արդյունքը չբերավ. այնպես որ, եթե քանի մ' ամսեն պետք եղած միջոցները ձեռք չձգվին, ազգային հաստատությունները դարձյալ տարտամ վիճակի մեջ պիտի իյնան»:

Մինչև հիմա երեսփոխան էլ չեն ընտրել:

1871 թ., փետրվարի 25, N 1058

Հոդված Զմյուռնիայից (ունի 19 փետրվար, 1871թ. նշումը), ուր խոսվում է Աբելյան կտակի մասին, նրա ստացման հետ կապված դժվարությունների մասին: ՌԻնի ՀՐԱՆՏ ստորագրությունը: Գուցե Ոսկանյանն է, քանի որ նա էլ նման կեղծանուն ուներ:

1871 թ., մարտի 2, N 1060

Գրախոսական գրված Զմյուռնիայից: Քննադատում է ԺԻԼ ՊԼԱՍԻ թարգմանությունը (թարգ.՝Պ.Վ. Չալըխյան): ՌԻնի Վահրամ ստորագրությունը, որը կարող է միայն Ոսկանը լինել:

1871 թ., մարտի 20, շաբաթ, N 1067

Հոդված Զմյուռնիայից (գրված 1871 թ., մարտի 8), ուր խոսվում է դաստիարակության և Զմյուռնիայի դպրոցների վատ վիճակի մասին, նաև՝ ուսուցիչների անտանելի վիճակի մասին: Շարունակվում է N 1077 (շաբաթ, ապրիլի 17-ում): ՌԻնի Հրանտ (I թղթ.-ը՝ Հ) ստորագրությունը, որ երևի Ոսկանյանն է:

1871 թ., 29 ապրիլի, հինգշաբթի, N 1082

Իզմիրում ընտրություններ անց կացնելու մասին: «Զմյուռնիո բնակիչք պիտի ընտրեն հինգ եկեղեցական և քսանըհինգ աշխարհական երեսփոխան, ընդամենայն 30 երեսփոխան»:

1871 թ., հունիսի 1, երեքշաբթի, N 1095

Զմյուռնիայում կայացած ընտրությունների և ընտրված երեսփոխանների մասին: Տրված են ընտրված երեսփոխանների անունները: Ոսկանյան չկա:

1871 թ., հունիսի 8, երեքշաբթի, N 1098

Զմյուռնիայի երեսփոխանական ժողովը չի բացվում, որովհետև երեսփոխանները շարունակում են հրաժարվել և չեն ներկայանում ժողովի:

1871 թ., հուլիսի 29, հինգշաբթի, N 1119

Սինեմ Օսկանյանի գործն է, նրա հիմնած վարժարանի նկարագրությունը, և կան որոշ կենսագրական տեղեկություններ: Սա <u>երևի</u> Խաչատուր Օսկանյանի դուստրն է:

1871 թ., օգոստոսի 7, շաբաթ, N 1123

Կը լսենք, թե Փիշմիշյան Մոսիկ աղան կաթոլիկ հայոց երևելի գերդաստաններեն Մեծ. Երամյան Գրիգոր աղայի դստեր հետ նշանվել է:

Նշանդրեքը կատարել է պատրիարքը և սա համարվել է մեծ երևույթ, որովհետև կաթոլիկն ամուսնանում էր լուսավորչականի հետ:

Աղջկա եղբայրներն էին Պողոս և Զենոբ էֆենդիներ:

1871 թ., օգոստոսի 26, հինգշաբթի, N 1131

«Ստույգ է, որ հինգ ամիսե ի վեր վարժարանաց մասին մեր ժողովրդյան անտարբերությունը շատ զգալի և չըսեմ աններելի է: Յուր վարժապետները ինքը յուր զավակաց դաստիարակ կընտրե, անոնց ճգունքը լիովին կվայելե և փոխանակ պարտ ու պատշաճ հարգանքն անոնց մատուցանելու և մանավանդ անոնց քրտանց փոխարենը վճարել տալու հոգ ու ջանք ընելու տեղ՝ ընդհակառակն, չգիտեմ ինչ ոգիե շարժեալ, ոմանք զանոնք աստին անդին հանիրավի կը բամբասեն և անոնց համար վայրապար զանգատներ կընեն:

Ասկե ամիս մը առաջ երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննությունները տեղի ունեցան՝ եկեղեցու մեջ հրապարակավ ծանուցում եղավ. ո՞ր հայրը և եկեղեցականը վարժարանաց առաջադիմության ցանկալով, դպրոց եկավ հարցաքննությանց ներկա գտնվելու, թեև օտար վարժարաններ ծնողք խումբ խումբ երթալ կը փութան:

... Իզմիրի ազգային դաստիարակները չորս տարիե ի վեր Ազգին վրա առանց տոկոսի 80 հազար դահեկանեն ավելի պահանջք կը թողուն և ցարդ անվճար կը մնան:

Այո, ձանձրացան Ազգեն հաճախ իրենց պահանջները որ և իցե միջոցով ուզելե և թափանցելե, այս գիտենք՝ որ չձանձրացան բնավ իրենց պաշտոնները անընդհատ շարունակելե. ժողովուրդը փոխանակ չորս տարիե ի վեր անոնց կրած տառապանքներուն դարման և կարեկից ըլլալու, դեռ ևս մեզմե ոմանք անոնց դեմ վայրապար կը զանգատին:

... Զգե դաստատուաց հին մեծագումար պահանջքը, ներկա տարվույն հինգ ամսականներն ալ հիներու վրա բարդվելով՝ հազար լիրայեն ավելի է այսօր իրենց պահանջքը. ո՞վ մտածեց, թե անոնք ցարդ ինչպես ապրեցան, ինչ ըրին, ինչպես իրենց օրերն անցուցին»:

1872 թ., ապրիլի 22, շաբաթ, N 1228

«Գավուր ի Ղազարոս Հովակիմյանե»: Գրախոսական է, հեղ.՝ «Ե.Մ.», որ երևի Երեմիա վարդապետ Տեր-Սարգսյանն է:

1872 թ., մայիսի 16, երեքշաբթի, N 1238

« «Հանճար». Ողջույն մ' առ Միսաքյան». հոդված է խիստ դրվատական բնույթի, Խաչատուր Միսաքյանի մասին: Հեղ.՝ Լուսինյան:

1872 թ., հունիսի 29, N 1256

«Երեքշաբթի օրը կռիվ մ' եղավ հասունյան և հակահասունյան կաթոլիկ ազգայնոց միջև:

Խումբ մը հակահասունյանք Ղալաթիա Փրկիչ եկեղեցին երթալով, ներս մտած ժամանակնին հասունյանք թող չեն տար և դուռը կփակեն: Այն ժամանակ ուրիշ հակահասունյանք ալ հասնելով՝ դուռը բռնությամբ բանալու կաշխատին: Ասկեց կռիվ կծագի, և քանի մի մարդիկ կվիրավորին: Բայց գործն ավելի չմեծցած, ոստիկանությունը կհասնի և կռվողները կզատե»:

1872 թ., հուլիսի 26, չորեքշաբթի, N 1266

Աբել Գուլասպյանի կտակի և նրա ստացման միջոցների մասին: Հեղ.՝ ՀՐԱՆՏ: Գրվել է Իզմիրից 1872 թ. հուլիսի 20-ին:

Նույն համարում. Մեսրոպյան վարժարանում մի աշակերտի արած անկարգության մասին: Աշակերտին հանդիսավոր տոնի ժամանակ տրվում է կարդալ վարկաբեկիչ մի ճառ: Սա էլ կարդում է, որը հակառակությունների պատճառ է դառնում:

1872 թ., օգոստոսի 8, երեքշաբթի, N 1272

<u>Բանասիրական</u> (Վրույրի «Հայկական նամականին» գրքի մասին, ներկայացված տիպերի մասին խոսելուց հետո) «Նույնը կրնա ըսվիլ նաև ԼՈՒՏԱՆՅԱՆԻ նկարագրության համար, որ երբեմն (նամակ ԻՁ) Զմյուռնիաբնակ հայազգյաց կուռքն էր, ամենուն խնկարկությանը նպատակ, իսկ վերջերը՝ յուր ջերմեռանդ սպասարկուաց ԿՐՈՂՆ ու ՇՈՒՏԻԿԸ եղավ, զուցե մեծավ մասամբ յուր անընդել ընթացյուքն ու Արևելքի բարքն ու սովորությունները՝ երկարատև պանդխտությամբ մոռցած ըլլալուն պատճառավ»:

Հեղ.՝ Աբրահամ Այվազյան

1872 թ. օգոստոսի 26, շաբաթ, N 1280

«Գրականություն և յուր անմահությունը, կամ Միսաքյան և յուր գրական երկոց ի նպաստ բացված հանգանակությունը»: Խրախուսում է այդ գործը և առաջարկում է Միսաքյանի ղեկավարությամբ ընկերություն ստեղծել:

Հեղ. Ա. Լուսինյան

1872 թ., սեպտեմբերի 30, շաբաթ, N 1295

Աղաթոն Մկրտիչ էֆենդու՝ Իզմիրի առևտրական ատյանի նախագահի պաշտոնից հրաժարվելը, չնայած ի մեծ ցավ Իզմիրցի առևտրականներին։

«Թերթի վերջաբանը «Իզմիրի պես վաճառաշահ քաղաքի» մ' առևտրական ատենին նախագահ լինելով՝ այսչափ հարգ, համակրություն և գոհություն գրավել, մինչև այսօր տեսնված բան չէր։ Այս ցույցերը մեծապատիվ Մկրտիչ Աղաթոն էֆենդի արժանյաց ամենեն փառավոր վկայությունն են, որ անշուշտ չեն կրնար վրիպել Բ. դռան ուշադրութենեն»։

1872 թ., հոկտեմբերի 5, հինգշաբթի, N 1297

Իզմիր, 30 սեպտեմբեր, 1872 թ.

Իզմիրի առաջնորդի մահը։ Հավանական թեկնածուներ՝ Գևորգ վարդապետ և Պետրոս վարդապետ, երկուսն էլ անարժան։ «Ռեֆորմի» տնօրենն էր Ամերիկյան հյուպատոսարանի թարգման Խ.Աղազարյանը։

1872 թ., հոկտեմբերի 17, երեքշաբթի, N 1302

Իզմիրի առաջնորդ Պողոս արքեպիսկոպոս Թագթագյանցի կտակը դրամական այլևայլ օգնություններ ցույց տալու մասին՝ իրենց քաղաքի հասարակական կազմակերպություններին։

1872 թ., հոկտեմբերի 19, հինգշաբթի, N 1303

Իզմիրում առաջնորդ ընտրելու հետ կապված խառը վիճակի մասին։ «Բայց ամենեն զարմանալի կետը սա է, որ խել մը մարդիկ ստորագրություն կը ժողվեն Նարպեյան գերապատիվ Խորեն եպիսկոպոսը տեղվույս առաջնորդության կոչելու և անցած շաբաթ Արշալույսն ալ իր ընտրելին ներկայացուց՝ հիշյալ եպիսկոպոսին ընտիր-ընտիր հանգամանքը գովելով։ Արշալույսին շարժառիթը կ'ըմբռնեմ, սակայն չեմ կրնար հասկընալ, թե ինչպես ոմանք կը խնդրեն եկեղեցական մը, որ արդեն Ռոտոսթո կոչված և մերժված է, որ Պատրիարքարանի և Պոսֆորի մոտ մնալ կը սիրե... Ի հարկե տեղվույս ժողովուրդը քանի մը փորձեր պիտի ընե առաջնորդի, մինչև որ իր ուզածը գտնե, և երանի թե առաջին ընտրածը վերջինն ըլլար։ Կը տեսնես, ազնիվ խմբագիր, որ մեր ըրածը, դրածը չգիտենք. տեսնենք, թե այս փափուկ պարագաներն առանց խռովության պիտի անցունե՞նք, թե ոչ»։

1872 թ., նոյեմբերի 25, շաբաթ, N 1318

«Իզմիրեն հեռագրով լուր եկավ, թե Պեշիկթաշի քարոզիչ Գերաշնորհ Խորեն Նար-Պեյ եպիսկոպոսն Զմյուռնիո վիճակին առաջնորդ ընտրված է»։

1872 թ., նոյեմբերի 28, երեքշաբթի, N 1319

Լսածներուս նայելով, Իզմիրի հայ ժողովուրդը մինչև ցարդ Կենտրոնական Վարչության կողմե ղրկված սահմանադրական հրահանգները ճշգտիվ գործադրած չէ, հետևաբար չհուսացվիր, որ վերջին անգամ Զմյուռնիացվոց ըրած առաջնորդական ընտրությունն անմիջապես վավերացնե վարչությունը, քանի որ Զմյուռնիո ժողովուրդը դեռ օրինավոր գավառական ընդհանուր ժողով չունի, և կենդրոնական վարչության հետ ալ օրինավոր հարաբերության մեջ չէ:

1872 թ., նոյեմբերի 30, հինգշաբթի, N 1320

Իզմիր, 24 նոյեմբեր, 1872 թ.

«Վերջապես քաղաքիս առաջնորդն ընտրվեցավ, և ընտրյալն է Գերաշնորհ Խորեն եպիսկոպոս, որու վրա շատ աղվոր բաներ կը խոսին այս տեղ»:

Բայց ընտրության ընթացքում եղել են շատ ապօրինություններ: Կա մի կուսակցություն, որի առաջնորդն է Սպարթալյանը կամ Տիլպերյանը, որոնք Խորենին են պաշտպանում: Իսկ Աղազարյան կուսակցությունը պաշտպանում էր Ներսես եպիսկոպոսին: Ի վերջո, հազիվ-հազ անցնում են առաջինները:

1872 թ., դեկտեմբերի 2, շաբաթ, N 1321

Իզմիր, 23 նոյեմբերի, 1872 թ.

Խորեն Գալֆայանին ապօրինաբար ընտրելու, ընտրությունների ժամանակ թույլ տրված այլևայլ խարդախությունների մասին: Նշավակում է Խորենին պաշտպանող կուսակցությունը:

1873 թ., հունվարի 5, ուրբաթ, N 1334

Մամուռյանին մեղադրում են, որ նա հոդված է հրատարակել Իզմիրի առաջնորդական ընտրության ապօրինի լինելու մասին: Մամուռյանին կանչում են Իզմիրի քաղաքական ժողով, ամբաստանում և նույնիսկ ուզում են բանտարկել տալ, բայց չեն անում:

1873 թ., մարտի 15, հինգշաբթի, N 1361

«Իզմիրի «Արշալույս» լրագրին մարտ 10 թվույն մեջ կը կարդամք, թե հիշյալ գավառի երեսփոխանական ժողովը Կեդրոնական վարչության հրահանգին համեմատ՝ վերստին առաջնորդական ընտրության ձեռնարկելով, Գերաշնորհ Խորեն եպիսկոպոս երկրորդ անգամ առաջնորդ ընտրվեր է քվեից ամենաբացարձակ առավելությամբ, այսինքն՝ 24 քվեարկուաց 23-ին քվեովը»:

1873 թ., հուլիսի 10, երեքշաբթի, N 1407

«Ցուցանք ժամանակի» (Առ մեծանուն Միսաքյան էֆենդի)

«Մեծի պուետիդ վսեմական հանճարույն երկրորդ երկը կարդացինք Փունջի 803 թվույն մեջ»:

Քննադատում է Միսաքյանի հոդվածները և բավականին սուր կերպով:

Հեղ.՝ Մ. Գափամաճյան

1873 թ., հուլիսի 14, շաբաթ, N 1409

«Քանի մը խոսք առ պ. Խաչատուր պուետ Միսաքյան»

«Մասսի» խմբագրի՝ Կարապետ ՌԻթուջյանի հոդվածաշարն է, ուղղված Միսաքյանի դեմ ու նրա հոդվածների («Փունջ»-ում տպված) դեմ: Շարունակվում է նաև «<u>Մասիս</u>» N 1411-ում (այստեղ ուշագրավ կենսագրական տվյալներ է հաղորդում ՌԻթուջյանն իր մասին), «<u>Մասիս</u>» N 1412-ում (սա չեմ նայել, Մատենադարանում չկա), «<u>Մասիս</u>» N 1413-ում (այստեղ էլ ուշագրավ տվյալներ ունի ՌԻթուջյանն իր մասին):

«<u>Մասիս</u>» N 1414. «Փարիզ եղած ժամանակնիս, երբոր հոն գտնվող հայ երիտասարդությունն անդադար պարսավելուդ և թշնամանելուդ պատճառավ ամենուն ատելի եղած էին, ես՝ հիշելով ժամանակավ ինձ ըրած բարեկամությունդ, այսինքն՝ քանի մը գիրք փոխ տալդ, Պ.Խաչատուր Պարտիզպանյանեն ետև քու միակ բարեկամդ մնացած էի և ասով, Փարիզի հայ երիտասարդությանց ոմանց ալ դժպրիի եղած:

«Ի՞նչ հասկցեր ես այդ դաժան ու անուզա մարդեն» կըսեին ինձ ամենն ալ: Բայց ես մտիկ չէի ըներ»:

«<u>Մասիս</u>» N 1422 (ակնարկ կա 1855-ին հրատարակվող «Արևելքի» մասին, ուր, սակայն Միսաքյանը իրեն է ներկայացնում որպես խմբագիր, կամ գոնե՝ տերը):

«Մասիս» N 1425-ով ավարտվում է:

1873 թ., օգոստոսի 4, շաբաթ, N 1418

«Մինչդեռ Զմյուռնիո ազգային երկսեռ վարժարանները բազմիցս կը տագնապին նյութական կողմեն, տեղական հայազգի գերդաստաններեն շատերն իրենց զավակներն օտարաց դպրոցները կը ղրկեն, առատ թոշակ վճարելով: Այս ցավալի իրողության ապացույցն է հետևյալ ցուցակն.

Բրուսիական իգական սեռի դպրոց Տիաքոնեզ քերց.	լ. Անգ.
6 լիաթոշակ աշակերտուհի	270
29 կիսաթոշակ	435
Անգլիական արական սեռի դպրոց Պարթի	
5 լիաթոշակ աշակերտուհիք	225

8 կիսաթոշակ	160
Անգլիական արական սեռի դպրոց Շարքշերի	
6 լիաթոշակ աշակերտք	270
6 կիսաթոշակ	108
Ֆրանսիական արական սեռի դպրոց Պրոպագանդայի	
6 լիաթոշակ աշակերք	240
2 կիսաթոշակ	38
Իգական դպրոց Միսոպա քերց.	
16 թոշակավոր աշակերտուհիք	40
19 ձրիաթոշակ	
Մխիթարյան դպրոց արական սեռի	
4 լիաթոշակ աշակերտք	160
8 կիսաթոշակ	120
____________	_____
115 աշակերտք	2064

Սույն գումարին վրա եթե ավելացնենք դաշնամուրի, գծագրության, դասական պիտոյից և այլ անուղղակի կերպիվ վճարված դրամներն, պիտի տեսնենք ակներև, որ 115 հայազգի աշակերտաց և աշակերտուհյաց համար մոտ 3-5 հազար ոսկի կը վճարվի օտարաց, մինչդեռ տեղական ազգային երկսեռ վարժարանները մանկանց ծնողքներեն թոշակ չեն ընդունիր և ազգային ամենանվազ եկամուտով ստիպված են մոտ 4-500 աշակերտաց և աշակերտուհյաց ուսմունք և գիտությունք մատակարարել»:

1873 թ. օգոստոսի 9, հինգշաբթի, N 1420

«Իզմիրեն կը գրեն, թե Գեր. Եղեսյան Հովհաննես արքեպիսկոպոսն, անցյալ շաբթու հիշյալ քաղաքը հասեր, և նոր առաջնորդ մը ընտրել տալու համար իրեն տրված վարչական հրահանգը գործադրելու ձեռնարկեր է»:

1873 թ., օգոստոսի 11, շաբաթ, N 1421

Իզմիրի խառը վիճակի մասին: Եղած երկու կուսակցությունների և նրանց թույլ տված զանազան խարդախությունների մասին:

Հեղ.՝ Վ.Յ.

1873 թ., օգոստոսի 25, շաբաթ, N 1427

Իզմիրում տեղապահ Հովհաննես Եղեսյանի՝ գործերից զլուխ չհանելու մասին:

1873 թ., դեկտեմբերի 13, հինգշաբթի, N 1474

Իզմիր, 8/20, դեկտեմբերի 13, հինգշաբթի, 1873 թ.

«... Քաղաքիս մեջ հուզմունքը նորեն սկսավ, և քանի մ' անխիղճ հայերու շնորհիվ՝ ծանր կերպարանք մ' առավ:

Այս անգամ գրգռության առիթը ո՛չ սահմանադրությունն է, որ մինչև այսօր օրինապես գործադրված չունի մեր մեջ, ոչ խաչկալն ու արձաններն են, որ այսքան պարտքերով բեռնավորեցին մեր ազգային արկղը, ոչ Ս...-ի և Ա...-ի կռիվն է, որո վերջինը հիվանդ է և առաջինն ասպարեզը բաց գտնելով՝ քանի մը կրքոտ հացկատակներու գործիք եղած է, ոչ Ոսկանյանի վեճ է, որ անպատկառ դեր մը կը խաղա և ժողովուրդը օտարներու առջև մրոտելու ատեն՝ ստության և զրպարտության թարգման կանգնելու միջոցին իր սև սիրտն ու աղտոտ մատները կ' ցուցընե»:

Խոսքը Էքիզյանի կնոջն ու նրա երեխային հափշտակելու պատմությանն է վերաբերում:

1873 թ., դեկտեմբերի 18, երեքշաբթի, N 1476

«Իզմիրի առաջնորդական տեղապահ և Սահմանադրության գործադիր տեսուչ Գերապատիվ Եղեսյան Հովհաննես եպիսկոպոսը, որ տեղապահ սրբազանի հեռագրովը Կ.Պոլիս կոչված էր, կիրակի օրը մայրաքաղաքս հասավ:

Երեկ ալ Իզմիրցվոց կողմե պատգամավորությամբ Կ.Պոլիս հասավ Մեծարգո Մարգար Միրզա Վանանդեցին, բազմաստորագիր հանրագրով մը, որով Իզմիրի ժողովրդյան մեծագույն և սահմանադրասեր մասը խստիվ կը բողոքեն՝ Սահմանադրության գործադրությանն արգել եղող քանի մ' անձանց դեմ և իրավունք կը պահանջեն»:

1874 թ., հունվարի 5, շաբաթ, N1484, N 1486, N 1494, N 1502

«Թուրքիո կաթոլիկ հայոց խնդիրը»

(«Կըսվի, թե հանրապետական Գաղղիո նախագահն առաջարկեր է Բ. Դրան, որ հակահասունյան կաթոլիկները կա՛մ Ս. Պապին ամեն հրամանացը հնազանդին, կամ ԿԱԹՈԼԻԿ ՉԵՆՔ ըսեն»):

Այս առթիվ արվում են խորհրդածություններ:

1874 թ., մարտի 14, հինգշաբթի, N 1508

Եղեսյան սրբազանին հետ հրավիրելու մասին իզմիրցիների պահանջ-նամակը: Չվերադառնալու դեպքում՝ սպառնում են մեծ խռովություն կազմակերպել քաղաքի հայերի շրջանում:

1875 թ., ապրիլի 17, հինգշաբթի, N 1670

Տպագրված է Վիկտոր Հյուգոյի դամբանական ճառը, ասված Էդգար Կինեի թաղման ժամանակ: Թարգմանել է Ն.(շան) Ճ.(իվանյանը):

1875 թ., մայիսի 17, շաբաթ, N 1683

<u>Ալխազարի գրավումը</u>. «Փարիզի Հայկազյան վարժարանի պարտուց հին խնդիրն այս օրերս դարձյալ երևան եկավ ավելի ծանր կերպիվ:

Բ.Դռան արտաքին գործոց Քիթապեթեն անցյալ շաբթու գիր եկավ ի Պատրիարքարան, թե հիշյալ վարժարանին պարտուց վճարման համար Բերայի եկեղեցվոյ կալվածներեն Ալքազարը գրավված է, և թե Բերայի թաղապետության ալ ի պաշտոնե իմաց տրված է, որպեսզի հիշյալ կալվածն ո՛չ ուրիշի վարձով տրվի, և ոչ ալ վաճառվի»:

1875 թ., հուլիսի 12, N 1705

<u>Զմյուռնիո խնդիրը</u>. (նկարագրում է Եղեսյանի գալ, մերժվելն ու գնալը: Խրիմյանի ու Սրվանձտյանի՝ հողացավի կապակցությամբ Զմյուռնիա գալն ու վիճող կողմերին հանդարտեցնելը, ապա՝ «Արևելյան մամուլի» խորհրդածությունները):

1875 թ., սեպտեմբերի 13, N 1732

Իզմիրում տեղի ունեցած արյունալի միջադեպի և ժողովրդի նոր հուզումների մասին:

1875 թ., սեպտեմբերի 30, N 1739

Լոզանում (Շվեյցարիա) կայացած համաժողովի «Հայտարարությունն» է:

«Ազատ որմնադրությունն ամեն ազգե, ամեն ցեղե և ամեն կրոնքե մարդոց բաց է:

Յուր գործարաններուն մեջ աշխարհավարական և կրոնական վիճաբանություններն իսպառ կարգելու, ամեն օտար մարդ կընդունի, ինչ և ըլլան անոր քաղաքական և կրոնական կարծիքները, որոնց հետ որմնադրությունը բնավ գործ չունի:

Որմնադրությունը իբրև սկիզբ կդնե, թե Արարիչը մարդուս ամենեն անգին բարիք տված է ազատությունը: Ազատությունը համայն մարդկության ժառանգությունն է, երկնային ճառագայթ,

զոր բնավ որևէ իշխանություն իրավունք չունի մարելու, ոչ ալ խափանելու: Ազատությունը պատվո զգացման և արժանապատվության աղբյուրն է:

Ազատ որմնադրությունը կրոնք մը չէ, կրոնական պաշտոն չունի, ուստի և աշխարհական կրթություն կուզէ, յուր վարդապետությունն է. «Սիրե զընկերդ»»:

1875 թ., հոկտեմբերի 14, N 1740

Զմիր, 27 սեպտ. 1875 թ.

Իզմիրի անկազմակերպ անիշխանական դրության մասին «Ինչո՞ւ նաև ցավելով չըսեմ, որ վարչական մարմիններու անկերպարան և քայքայ վիճակեն պատճառեցավ դեռ քիչ օր առաջ՝ այն ահռելի արկածը, այսինքն՝ հայ ընտանիքի մը անմեղ մանուկներեն և չքմեղ աղջիկներեն սկսելով, մինչև տկար ծերոց գլուխներեն, երեսներեն և մարմիններեն հոսած արյան վտակը: Վասն զի, երբ կառավարության զանգատ ընես, զեթ վայրկյան մ' իրավմամբ, թե ինչո՞ւ ազգին իշխանության գիտակցությունը կը պակսի այս պաշարման և արյունահեղության մեջ, կրնա քեզ հարցունելով պատասխանել. «Ո՞ր իշխանության»: Այս աղետալի բառերը կը բացահայտեն ահա, Զմիրի ժողովրդին անկերպարան վիճակին արդյունքը»:

Հեղ՝ Ս.

1875 թ., հոկտեմբերի 25, N 1750

Երզնկայի և Զմյուռնիո խնդիրք (գոյություն ունի Պոլսում անգամ պաշտպանություն վայելող կուսակցություն, որը իր գործակիցներն ունի Իզմիրում):

1877 թ., փետրվարի 3, շաբաթ, N 1932

«Գեր. Մուրատյան Մելքիսեդեկ վարդապետին համար անցյալներն ի լրո ծանուցած էինք, թե Մանչեսթերի հայ ժողովրդյան կողմանե հովվության պաշտոնի հրավիրված էր: Սակայն ինչ-ինչ բանավոր պատճառներով չէր կրցած ընդունիլ այն հրավերը:

Այս անգամ ուրախությամբ կը լսենք, թե Զմյուռնիո ազգայնոց տարաձայն երկու կուսակցությունները միանալով՝ քվեից բացարձակ առավելությամբ Իզմիրի առաջնորդ ընտրեր են հիշյալ շնորհազարդ վարդապետն, որ յուր հմտությամբն և անստգյուտ վարուք, Հայաստանյայց եկեղեցվո պատիվ բերող հազվագյուտ եկեղեցականներեն մին է, ուստի կը գովենք ու կը շնորհավորենք մեր Զմյուռնիաբնակ ազգայնոց այս իմաստուն ընտրությունը»:

1877 թ., փետրվարի 1/13, երեքշաբթի, N 1936

Ամստերդամի հայոց եկեղեցին. «... Ժամանակավ, ասկեց 200-300 տարի առաջ Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում հայ վաճառականաց գաղթականություն մը կար, որո անդամներն իրենց հայրենավանդ բարեպաշտութենեն շարժյալ եկեղեցի մը շինած էին»:

Այժմ զրեթե ոչ մի հայ չկա և եկեղեցին փակ է:

«Կը հիշենք, որ ասկեց 20-22 տարի առաջ Կ.Պոլսո ազգային վարչությունն յուր ուշադրության նյութ ընելով այս եկեղեցվույն խնդիրը, արժանահիշատակ Կրճիկյան Հակոբ էֆենտիի միջոցավ բանակցության մտնել ուզեր էր Հոլանտայի կառավարության հետ...», բայց չէր ստացվել:

Այդ գործը շարունակեց կաթողիկոսը, որը կարողացավ եկեղեցին վաճառել 27,000 հոլանդական ֆիորինի:

1877 թ., փետրվար, երեքշաբթի, N 1941

«Իզմիրեն եկած նամակներ կըծանուցանեն, թե Այտընի կուսակալության կողմե Օսմանյան երեսփոխանության անդամ ընտրվեր է Հակոբ էֆենդի Սպարթալյան»:

1877 թ., մարտ, հինգշաբթի, N 1951

5 մարտ, 1877 թ. ի Զմյուռին

Մելքիսեդեկ ծայրագույն վարդապետ Մուրադյանի՝ Զմյուռնիա գալու և հանդիսավորաբար ընդունվելու մասին: Մուրադյանի կատարած ազգօգուտ գործունեության հետևանքով՝ «Զմյուռնիո ազգայնոց մեջ եղած անախորժ կուսակցության ոգին բոլորովին շիջած է և նորընտիր առաջնորդը մեծ համակրանոք կընդունվի ամեն կողմեն: Բոլորովին վստահ եմք, որ Գեր. Մելքիսեդեկ վարդապետի ավետարանաշունչ քարոզներով սերն ու խաղաղությունը պիտի թագավորեն մեր Զմյուռնիո ազգայնոց մեջ և Զմյուռնիո հայն յուր գործունեությամբ նախանձելի օրինակ պիտի ըլլա ուրիշ տեղեաց հայերուն»:

***

1877 թ., մարտի 26, շաբաթ, N 1957

19 մարտ, 1877 թ., Զմյուռին

Զմյուռնիայում կուսակցական կրքերը խաղաղվել են և հաստատվել է ընդհանուր խաղաղություն: Մելքիսեդեկ Մուրադյանը և Մակար վարդապետը ծայրագույն ամեն ջանք թափում են, որպեսզի խաղաղությունը կայուն լինի: Հույս է հայտնում, որ Զմյուռնիան կնորոգի իր նախկին փառքն ու փայլը, որ վերջին տարիների գժտությունների հետևանքով աղոտացել էր:

***

1877 թ., հունիսի 16/28, հինգշաբթի, N 1988

11 հունիս 1877 թ. ի Զմյուռին

«Քաղաքիս Էնբարսիալ լրագիրը թշնամական հոդված մը հրատարակեց մեր ազգին դեմ, այնպիսի ակնարկություններ ընելով, որպես թե Հայք ոչ այնքան հավատարիմ են Օսմանյան պետության, որքան հակամետ են օտար հպատակության, մանավանդ ռուսականության: Բոլոր հայ բաժանորդներն ետս դարձուցին Էնբարսիայի թերթը՝ գրով հայտնելով իրենց սաստիկ դժգոհությունը: Ռեֆորմ լրագիրն որո խմբագիրն է մեր հայազգի գիտնական Պ.Ս. Ոսկանն պատասխանեց Էնբարսիային ինչպես որ պետք էր՝ ջրելով անոր թշնամական ակնարկություններն և պաշտպանելով հայոց հավատարմության ամբծությանն»: (Բողոքում է նաև Մելքիսեդեկ Մուրադյանը)

«Աշխարհս այսպես է. մինչդեռ հազար տուն հայք տասն հազար տուն հույներեն ավելի դրամական նպաստ կը հանգանակեն տերության կամավոր զորաց համար (ինչպես կը տեսնվի «Ռեֆորմի» մեջ նպաստի հանձնաժողովի կողմեն հետզհետե հրատարակված պաշտոնական ցուցակեն), ընդհակառակն Էնբարսիալ սույն հայտնի իրողության անգետ ձևանալով...» կռիվ է զցում:

1877 թ., օգոստոս 11/23, հինգշաբթի, N 2012

Մելքիսեդեկ Մուրադյանի գրախոսականն է Հով. Մկրյանի «Մահարձանք և հիշատակարան առաքինի պատանվույն Հակոբա Հ. Մկրյան» գրքի առթիվ:

1877 թ., սեպտեմբերի 10/22, շաբաթ, N 2024

Սպարթալյան Հակոբ էֆենդու և Հովհաննես էֆենդու միջոցներով Իզմիրում ազգային հիվանդանոցի շինարարություն սկսելու մասին:

1878 թ., մարտի 16/18, հինգշաբթի, N 2102

Կատարվել է Վարդանանց հանդեսը Մեսրոպյան վարժարանում: Դպրոցի հարցերով զբաղվում է Վահանյան ընկերությունը, որն արդեն մեկ տարի է, ինչ գոյություն ունի: Ճառով հանդես է եկել Հայոց առաջնորդ Մելքիսեդեկ ծայրագույն վարդապետ Մուրադյանը: «Զարմանք կզգանք, թե ինչու Իզմիրի Արշալույս Արարատյան պատվական լրագիրն բնավ չէ հիշած այսպիսի ազգային մեծ հանդես մը, որ Իզմիրի միակ եկեղեցվույն և վարժարանին մեջ կատարվեր է, մինչդեռ աննշան դեպքեր և իրողություններ հրատարակության պատիվ կը ստանան հիշյալ անդրանիկ թերթին մեջ»:

1878 թ., մարտ-ապրիլ 21/2, երեքշաբթի, N 2104

Հունական օրթոդոքս եկեղեցու կամայականությունները Իզմիրի հայերի նկատմամբ: Հույները չեն ընդունում հայկական եկեղեցու ծեսերը, անօրինական են համարում հայկական եկեղեցու ամուսնական պսակը:

1878 թ., ապրիլի 6/18, հինգշաբթի, N 2111

«Արժանահարգ Համբարձում Խիեկչյան պատվելին, որ Պոլսո Խասգյուղի Ա.Նուպարյան և Շահնազարյան ուսումնարանին նախկին տեսուչն էր, յանցելումն շաբաթու եհաս ի Զմյուռնիա և ըստ խնդրո վիճակիս ազգային վարչության ստանձնեաց ըզներքին տեսչություն քաղաքիս երկուց սեռից ազգային վարժարանաց և արդեն սկսած վարել զփափուկ և զծանր պաշտոն յուր»:

1878 թ., ապրիլ-մայիս 29/11, շաբաթ, N 2119

«Հայր Մելքիսեդեկ Մուրատյանց, յուր եզական ձիրքերով և բարեհամբույր բնությամբը ոչ միայն յուր ժողովրդոց վարկն ու համարումը գրաված է, այլև տեղական բոլոր նախարարաց, պաշտոնական անձանց՝ Առաջնորդաց, Հյուպատոսաց և Ազգապետաց սիրելի եղած է»:

Եկեղեցին վերանորոգելու փողը տվել է Խաչատուր Գարազաշյանը (600 լիրա):

«Անգղիացիք հայոցմե քառասունի չափ անգղիագետ թարգմաններ կը պատրաստեն Զմյուռնիայեն՝ գոհացուցիչ ամսականներով»:

«Զմյուրին՝ գեղեցիկ սեռին համար, տարածիչ ախտ մը տեսա՝ շան-խոց»:

«Հունաց ազգը՝ Զմյուռնիո մեջ, արդի Մետրոպոլիտուն շնորհիվ կույր մոլեկրոնության տենդով վարակյալ է»:

Հայկական մկրտություն, հայկական ամուսնություն, առանց շուռագունելու, անքրիստոնեաբար բնավ օրինավոր չընդունիր, բացարձակապես հայտարարելով, որ Հայք Արիոս են և այլն:

«Սպարթալյան եղբարք (Յաղուբ և Հովհաննես) մեծատարած համբավ ունին ամեն տեղ, ոչ միայն իրենց հոյակապ ՖԵՐԽԱՆԵՐՈՎԸ (խանի բազմաթիվ հարուստ կալվածքներովը)...» (հայրը՝ Եսայի):

1878 թ., հունիս, N 2131

«Մեք՝ գրաբարը գործածական լեզու ընել ուզող կամ երազողներեն չենք, այդ բանը խիստ դժվարին կամ մանավանդ անհնար կը թվի մեզ, բայց աշխարհաբառ լեզունիս գրաբառեն ավելի ևս հեռացնելու գաղափարին կամ դրության ալ կուսակից չենք: Կուզենք, որ մեր աշխարհիկ լեզուն՝ յուր արմատին հետ առնչությունը պահելով, և անոր օգնությամբ ինքզինք օր քան զօր կատարելագործելով, մեր նախնյաց՝ Արամա, Տիգրանանց, Վարդանանց և Ներսիսյանց բարբառը բոլորովին չօտարանա և անհասկանալի չըլլա մեր սերնդոց, այն գեղեցիկ բարբառն, որ յուր ուրիշ առավելություններեն զատ, սա նշանավոր հանգամանքն ալ ունի, որ յուր կազմությամբն ավելի կը մոտենա եվրոպական մշակյալ լեզվաց կազմության, քան թե մեր արդի աշխարհաբառն, որ մեծ մասամբ թուրքերեն է կազմությամբ, և կանոնավոր լեզվի մը պետք եղած ամեն հանգամանքները դեռ չունի»:

(Ղ. Պալղազարյան)

ՆՈՒՅՆ

«Նորեկ տեսուչ Խիեկչյան էֆենդի, երկսեռ դպրոցաց համար ներքին ԲՐՈԿՐԱՄ մը կը պատրաստե:

Անշուշտ եմք, որ Խիեկճյան էֆենդի մեր բարեկամը, Աղաբեկյան, Ոսկանյան և Մամուռյան էֆենդիներու խմբագրած կարևոր ծրագրերն ալ յուր լուրջ նկատողությանը առարկա պիտի ընե»:

«...Բեթրո-Յուսուֆի՝ 1844-ին Զմյուռնիո Ս.Մեսրոպյան վարժարանի նվիրումը տպարանին հիշատակն ալ չմոռնանք: Այժմ գործունեության մեջ կը գտնվին Պալդազարյանի, Տետեյան եղբարց, Թաթիկյանի և Մսերյանի գործարանները, տեղական ազգային հին և նոր թերթերու ցանկը մինչև տասներկուքի կը հանգի: Հիշենք իր ժամանակագրական կարգավը.

«Արշալույս», «Արփի Արարատյան», «Թութակ Հայկազյան», «Հայաստան» , «Փունջ»(գրչագիր), «Ծաղիկ», «Միության-Սահմանադրական», «Հավերժահարս», «Գարուն Հայաստանի», «Դիմակ», «Իրավունք», «Արևելյան Մամուլ»: Այս թերթերեն այժմ միայն առաջինն ու վերջինը կը հրատարակվին»:

1878 թ., հունիսի 20, հինգշաբթի, N 2135

Արտատպելով Արշալույս Արարատյանի լուրը՝ հայտնում է Ղուկաս Պալդազարյանի մահը: Հինգ երեխա ուներ՝ մեկ տղա և չորս աղջիկ:

1878 թ., հուլիսի 6/18, N 2146

«Մեթոդի վրա» գրեց Գ.Կոստանդյան

«Արևելյան գիտական մատենաշարի» սույն առաջին հատորը, որ 163 երեսներե կը բաղկանա, Իզմիրի Տետեյան եղբարց տպարանեն ի լույս ընծայվելով կը ծախվի:

1878 թ., օգոստոսի 3/15, N 2158

Մելքիսեդեկի «Առաջարկությունը» քննադատող «Պատասխան» է հրատարակվել, որը լի է զազրաբանությամբ. հեղ.՝ Կարապետ Ստեփանյան-Պապասանճյան:

«Ավելորդ է երկար խոսիլ նոր հրատարակության մը վրա, որ բավական գայթակղություն և զայրույթ պատճառեց այստեղ, այս է ՄԵԹՈՏԻ ՎՐԱ գրքույկը, որ որչափ անպատեհ, նույնչափ անպատկառ գրվածք մ' է, ու մեր կրոնական և բարոյական զգացումները սաստիկ կը վիրավորե: Պ. Գ. Կոստանդյանե ուրիշ բան կը հուսայինք, տարիներե ի վեր կիմանայինք որ ազգօգուտ խորհուրդներ երկնած է և ՄԵԹՈՏՆ էսպես ազգավնաս գործ մ' է. նա ամեն բան փլել կուզե, մեկ քանի անաստվածներու գրքերեն անհեթեթ վարդապետություններ քաղելով: Գրքատուններ կան գրված քրիստոնեության դեմ, սակայն քրիստոնեական կրոնն յուր ընթացքը կը շարունակե անհողդողդ, և այսօր այն ազգաց կրոնն է իսկ, որոց մեջ այդ անկրոն հեղինակներ ծնած են: Պ. Գ. Կոստանդյան վերանորոգիչ կուզե լինել թերևս, սակայն մեր ազգին վիճակին ու պահանջմունքներուն անտեղյակ է, իրավ է, որ յուր գրքով կրնա իմաստակներ պատրաստել»:

ԱՐՍԵՆ

1878 թ., օգոստոսի 12/24, շաբաթ, N 2162

Մեսրոպյան վարժարանում Վարդանանց տոնի առթիվ կատարված հանդիսությունների մասին. Հայկաբան դասատուն էր՝ Ս. Պալապանյանը: Ներկայացրել են նաև տրամախոսություն «Վարդանանք ի Պարսկաստան» խորագրով, որի հեղինակն էր Պալաանյանը:

1878 թ., սեպտեմբերի 7, N 2168

Արսենի պատասխան հոդվածն է «Արշալույս Արարատյանում» ԿԱՅԾԱԿ ստորագրությամբ գրված հոդվածին: ԿԱՅԾԱԿ-ը Սավալանյանն է, որն այդ ժամանակ խմբագրում էր «Արշալույս Արարատյանը»:

1878 թ., նոյեմբերի 26/7, N 2194

Բացահայտված մի քանի կեղծանուններ

Խորեն Գալֆայան – Լուսինյան	Եզնիկ վրդպ. Դելալյան – Ապահունի
Նիկողայոս արք. Աջապահյան – Ռուբինյան	Կարապետ վրդպտ – Բագրատունի
Հովհաննես եպ. Կարապետյան – Ռշտունի	Գևորգ քահանա Խասգյուղի – Արծրունի
Հմայակ վրդպ. Այազմայան - Դիմաքսյան	

1878 թ., նոյեմբեր-դեկտեմբեր 25/7, N 2206

Հայտնվում է Զմյուռնիայի ֆրանսիական հոգևոր առաջնորդ, կաթոլիկ Ապազապիետրայի մահը:

1878 թ., դեկտեմբերի 26, N 2218

Մ. Մամուռյանի «Բանալի հայերեն շարադրության»-ի մասին Սպարթալյանը հոդված է գրել: Նա շարունակում է խմբագրել «Արշալույսը» և նրա օրոք «Արշալույսը» վերջալույս դարձավ:

ԱՐՍԵՆ

1879 թ., հունվար-փետրվար 22/3, N 2235

«... Մեր Զմյուռին քանի մը տարի առաջ անորոշ պատերազմ մ' ուներ, այսօր որոշ կերպարան մը կառնու նույն պատերազմը: Կուսակցություններն իսպառ դադրած են Զմյուռնիո մեջ Գեր. Մելքիսեդեկ վարդապետի առաջնորդութենեն ի վեր: Հարուստներն ու արհեստավորները խաղաղ ու համախոհ կը քալեն: Դասակարգությանց կռիվ չկա, ռամիկ ու ազնվական իբրև եղբայր կը տեսնվին, միայն քանի մը հատ ՀԻՆՑԱԾ ուսուցիչների խլրտում մը կա: ... Կույր խլրտման

շահատակներն են Պ. Հ. Սավալանյան, Արշալույսո նոր խմբագիրն և Պ. Մարգար Միրզա Վանանդեցին: Այս անձինքը Զմյուռնիո առաջնորդեն և ազգային վարչութենեն դժգոհ են, դպրոցաց ընթացքեն դժգոհ են, տեսչեն դժգոհ են, մեկ խոսքով՝ գոհության արժանի բան մը չեն տեսներ:

(Պատճառն այն էր, որ սրանց հեռացրել էին դպրոցից ու վարչությունից)»:

1879 թ., հունվար-փետրվար 25/6, N 2238

Սպարթալյան եղբայրների կառուցած հիվանդանոցի բացման արարողության նկարագրությունը: Բացումը եղել է հունվարի 14-ին, կիրակի օրը: Շնորհակալական ճառով հանդես է գալիս Հակոբ Սպարթալյանը (N 2241):

1879 թ., փետրվար-մարտ 17/1, N 2256

Ժամանակին Զմյուռնիայից ուղարկված թղթակցություններով «Մասիսում» հանդես է եկել Պ.Յ. Միքայելյանը: Այդ հոդվածներն անստորագիր են:

1879 թ., մարտի 3/15, շաբաթ, N 2268

«...Եկե՛ք ով Հասունյան և հակահասունյան, Գոլեճյան և Անտոնյան, Մխիթարյան և Աբբայան և այլն կուսակցությունք, եկե՛ք միացեք և մտեք ընդ դրոշակավ ձեր հարց և նախահարց պաշտած Առաքելական եկեղեցվույն հայոց, որով ազատ մնալով օտար ազդեցութենե՝ համաձայն խորհիմք և գործեմք վասն վերակենդանության ազգիս, զի ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ տեսեք, ինչե՛ր գործեց մինչև ցայժմ, և ինչե՛ր պիտի գործե տակավին»:

1879 թ., մարտի 13/25, երեքշաբթի, N 2276

Քաղաքի երեսփոխանական ժողովի անդամների հրաժարականի մասին:

Դպրոցները ավելի բարեկարգելու համար, ժողովրդի վրա 76,600 դուրուշ պարտք է դրվել, հրաժարվել էին վճարել, գտնելով, որ եղած 120,000-ով էլ կարելի է դպրոցները վերականգնել:

«Անցած է այն ժամանակը, երբ աշակերտ մը պարզապես գրել-կարդալ, օտար լեզու մը ու քիչ մը առուտուրի վերաբերող գիտելիքներ ուսանելով, իր դպրոցական շրջանը ավարտած կըլլար»:

«Մեր վարժարանները հաճախող աշակերտաց մեջ հարյուրին հազիվ թե 6 հարուստի զավակ կա, որ քիչ մը տարիքը առնելուն պես՝ օտար դպրոց մը, գիշերօթիկ վարժարան մը կամ Եվրոպա կը ղրկվի»:

1877 թ. մարտի 29-ից Խիեկչյանը հանձն առավ Զմյուռնիայի երկսեռ դպրոցների տեսչության պաշտոնը:

«Զմյուռնիո հայ ընտանիքները, – անշուշտ օտարազգիներուն մեջ ալ կը գտնվին, բայց մեզմե նվազ, զի անոնք մեզմե ավելի շատ կրթական հաստատություններ ունին, – իրենց մանուկ

զավակները (3-7 տարեկան) դրացիի մը, բարեկամի մը կամ մասնավոր ընտանիքի մը մեջ ՎԱՐՊԵՏ կ'ղրկե, փոքրիկ ամսական մ'ալ վճարելով: Վարպետ ղրկելու այս ամենեն հոռի դրությունը միշտ իր գեշ հետևանքներն ունեցած է, – զուցե գտնվի թեթև բացառություններ:

Նախ՝ մանկիկը գեշ ու անբարոյական օրինակներ, ընտանյաց մեջ տարածված շատ տեսակ անվայել տպավորություններ կ'ստանա: Բ. Մանկիկը կուզե խաղալ, ցատկել, վազվզել: Վարպետը անոր վրա կ'սաստե, սպառնալիքներ կ'ընե, որով աշակերտիկը կ'ստիպվի՝ իր հասակի պահանջումներուն հակառակ զգաստ մնալ, բայց արդյունքը... մանկան աշխույժը, եռանդը կը մարի, կ'վհատի նույն իսկ ամենեն փոքր շարժումի մեջ»:

(Սրա համար գտնում է, որ անհրաժեշտ է մանկապարտեզ հիմնել, ուր կգնան ամենաքիչը 250 երեխա):

1879 թ., մարտ-ապրիլ 30/11, N 2290

Հայտնում է, որ Իզմիրից ուղարկված և բանավիճային բնույթ ունեցող հոդվածներն այլևս չեն տպվելու «Մասիսում»:

1879 թ., ապրիլի 9/21, երկուշաբթի, N 2295

Պելճիո կառավարությունն ընդհանուր հյուպատոսություն մը հաստատեց ի Զմյուռնիա:

1879 թ., ապրիլ-մայիս 21/3, N 2306

«Իզմիրի առաջնորդ, գեր. Տ. Մելքիսեդեկ վարդապետ, առաջիկա չորեքշաբթի Ս.Էջմիածին պիտի ուղևորվի»:

1879 թ., հունիսի 12/24, N 2349

«Զմյուռնիո բոլոր ողջամիտ հայոց հետ ես ալ ոչ նվազ ուրախ եմ «Արշալույսի» խմբագրին փոփոխության համար: Շուրջ տարի մը հայկական այդ անդրանիկ թերթը կերպ մը շահամոլ ու միջնադարյան գաղափարներով սնած «հայկաբանի» մը ձեռքը մնաց և անխղճորեն զայն իր զրպարտության ու չարամտության ասպարեզ ըրավ: Բայց այսօր, այլևս Պ. Սավալանյան չէ Արշալույսի խմբագիրը»:

Հ. Սվաճյանն է, որը 1878 թվից սկսած ճանաչվում է խմբագիր: Գրել է «Դրախտահարս Մարի Տայան (Բանաստեղծական եղերերգ)»: Թարգմանել է «Սոկրատի ոգին», Հյուգոյի «Պապ» բանաստեղծությունը:

Դպրոցներու տարեկան քննությունը պիտի սկսի ներկա ամսի 22-ին: Մինչև քննություններին պատրաստվելը, երկու ամիս, աշակերտները արձակուրդ են ստանում, ապա տալիս են քննությունները և էլի երկու ամիս արձակուրդ: Գտնում է, որ այս եղանակը հարմար չէ:

Հուլիսի 1-ին էլ պիտի լինի ավարտական հանդեսը:

«Ես ավելի կ' սպասեի հրատարակված տեսնել Պ. Տեմիրճիպաշյանի թարգմանությամբ Լիթրեի «Լե սիանս օ փոեն տը վիւ ֆիլոզոֆիք» աշխատասիրությունը, զոր պարծանոք ազդարարած էր «Շըվյու դը լա Ֆիլոզոֆի բոզիթիվ»-ի մեծահռչակ խմբագիրն իր հանդիսին միջոցավ»:

1879 թ., հուլիս-օգոստոս, N 2380

19 հուլիս, 1878 թ.

«Զմյուռնիո առաջնորդ Գեր. Տ. Մելքիսեդեկ նորապսակ եպիսկոպոսն առաջիկա կյուրակե օրը Ս. Պատարագ է մատուցելու Ի մայր Եկեղեցի»:

1879 թ., օգոստոս-սեպտեմբեր 23/4, N 2408

Զմյուռնիա, 11/23 օգոստոս

Նորապսակ եպիսկոպոս Մելքիսեդեկ Մուրատյանը գալիս է Իզմիր Պոլսից: Գալիս է իտալական շոգենավով:

1879 թ., նոյեմբեր-դեկտեմբեր 20/2, N 2481

Հյուգոյի նամակը Խորեն Նար-Պեյ սրբազանին:

1880 թ., հունվար 8/20, N 2519

«Հայազգի քանդակագործ պ. Երվանդ Ոսկան, որո տաղանդն, – ինչպես կըսե Մոնիթեոռ յուր երեկվան թիվ, – արդեն կը գնահատվի Բերայի հասարակության կողմե, – Ապտուլլահ եղբարց գործարանին մեջ վիճակահանության դրված փոքրիկ արձաններուն վրա նոր արձան մ' ավելցուցած է: Այս անգամ պ. Երվանդ պատերազմիկ զարատաղցի մը ներկայացուցած է, որ լեռներեն վար կ'իջնե պատերազմի ասպարեզն»:

Այս արձանին վրա ալ Հայազգի արվեստագործը մեծ տաղանդ և հաջողակություն ցուցած է»:

1880 թ., փետրվարի 5/17, N 2542

Զմյուռնիա, 1880, 30 հունվար

Արզումանյան Ստեփան էֆենդի, որ Օսմանյան տերության դատարանաց ընդհանուր տեսչի պաշտոնով 6-7 ամսե ի վեր ընտանյոք քաղաքիս մեջ հաստատված էր, կարճատև հիվանդութենե մը ... հունվար 29-ի երեկոյին հանկարծամահ վախճանեցավ:

Ա. Սարգիս Յ. Պալապանյան

1880 թ., մարտի 12/24, չորեքշաբթի, N 2571

«Իզմիրի Ռեֆորմ լրագիրն հետևյալ տեղեկությունները կուտա Մեթալիքին պատճառավ հիշյալ քաղաքին մեջ ծագած խռովության վրա։

Բազմաթիվ թրքուհիք, մեծ մասամբ արաբ, մարտի 3-ի օրը կուսակալության պալատը դիմեցին հուսահատական ճիչեր արձակելով, և դառնապես բողոքելով դրամական տագնապին դեմ, որ զիրենք հանապազօրյա հացեն իսկ կը զրկեր։

Ոստիկանության զինվորներն և մեծ զորանոցին զորականները պալատին դռան մուտքն անոնց առջև փակելով, հիշյալ թշվառուհիները մերձակա փողոցները ցրվեցան, և ուտելիքի վերաբերյալ ինչ որ տեսան սկսան կապտել։ Խանութպանք զարհուրելով՝ անմիջապես խանութնին գոցել ու փախչիլ սկսան, այնպես որ շուկան բնավ մարդ չմնաց։

Ոստիկանությունը շուտով ցրեց իգական հրոսակախմբերն և արաբուհիաց ամենեն կատաղիները ձերբակալեց, բայց հասարակության երկյուղը չկրցավ փարատել, շուկաները մինչև իրիկուն չբացվեցան»։

1880 թ., մայիս-հունիս 24/6, N 2602

Կը լսեմք, թե Պ. Երվանդ Ոսկան՝ ազգային ճարտար քանդակագործն, Ամեն. սրբազան Պատրիարք հոր մեկ կիսարձանը շինած է, որ այժմ Ապտուլլահյան եղբարց գործարանը կը գտնվի առժամանակյա կերպիվ՝ ի տես այցելուաց։ Այս կիսարձանը, որ վեղարավոր է և կուրծքը շքանշաններով զարդարված՝ թե՛ նմանության, և թե՛ արվեստին պահանջող պայմաններուն կողմանե սքանչելի գործ մ' է։

Ազգային այս նշանավոր գեղարվեստագետն յուր անուրանալի ճարտարությամբն իրավունք ստացած է քաջալերություն ակնկալել ճաշակի և կարողության տեր ազգայնոց կողմանե, որք արդեն քանի մ' ամիս առաջ ուրիշ առիթ մ'ալ ունեցած են տեսնելու տաղանդավոր երիտասարդին շինած և վիճակահանության դրված չորս փոքրիկ և հիանալի արձաններն։ ՈՒստի ամենայն վստահությամբ կը հանձնարարեմք մեր ազգայնոց՝ այս ընտիր գեղարվեստագետն, որ հայ ազգին մեջ առաջին քանդակագործն եղած է, և այսու՝ ոչ միայն յուր ընտանյացն, այլ նաև հայ ազգին իրոք պարծանք հանդիսացած է։

(Քանդակագործությունը նոր արվեստ էր հայոց մոտ)։

1880 թ., մայիսի 15, N 2611

Լուսինյանք. «Սենի քաղաքային դատարանն հանձն չառավ որոշում մը տալ Լուսինյան իշխանի տիտղոսին հակառակ պահանջողաց միջև։ Մեկ կողմը կը տեսնվի Գեր. Խորեն Նար-Պեյ, Արքեպիսկոպոս Պեշիկթաշի ի Թուրքիա, հանդերձ յուր երկու եղբայրներով, Եուսուֆ և Գուիտոն իշխանազունք, որոց երկուքն ալ Փարիզ հաստատյալ են»։

1880 թ., մայիսի 26, N 2619

«Զմյուռնիո Ռեֆորմ լրագրին մեջ հետևյալ հետաքրքրական դեպքը կը կարդամք.

Եւրիւք կոչված թափառիկ ցեղն ընդհանրապես հանդարտ և աշխատասեր մարդերե կը բաղկանան, բայց եթե անգամ մը բարկանան, «աչքերնուն բան չերևար» ըստ ռամկական առածին:

Սոմա քաղաքին շրջակայքները բնակող ցեղն այս օրերս բավական անհանգստություն ունեցած էր բազմաթիվ ավազակաց ձեռքեն որք հանգիստ չէին թողուր զինք: Այս ավազակք անցյալ շաբթու մեջ խրճիթ մ' ապաստանած էին և հարմար առիթի կը սպասեին իրենց տխուր քաջագործությունները վերսկսելու համար:

Հիշյալ ցեղեն եղող եւրիւքներն իմանալով զայս, կը հավաքվին մեծ թվով, կը զինվին և հիշյալ խրճիթին վրա յանակնկալս հարձակվելով, թրե կանցնեն իրենց բոլոր թշնամիները, որք հոն հավաքված էին: Գազ Տաղլը Տելի Մեհմետ անուն ավազակն ալ սպանվողներուն մեջ էր:

Ահավասիկ ավազակությունը բնաջինջ ընելու համառոտ եղանակ մը»:

1880 թ., հունիսի 25, N 2615

<u>«Խորեն Նար-Պեյ սրբազան և Պատրիարքարանի հայտարարությունը»</u>

Լուսինյան ազգանունը կրելու և այս կապակցությամբ եղած վիճաբանությունների մասին:

1880 թ., հուլիսի 7, N 2658

«Արտաքսումն ճիզուիթաց ի Գաղղիո» - 1880 թ. հունիսի 30-ի որոշման համաձայն Ֆրանսիայից արտաքսվում են բոլոր ճիզվիթները:

1880 թ. հուլիսի 26, N 2670

Տպագրված է Խորեն Նար-Պեյ Լուսինյանի նամակը, ուր նա շնորհակալություն է հայտնում, որ թերթը «Լուսինյան» ազգանվան հարցում պաշտպանում է իրեն:

1880 թ., սեպտեմբերի 4, N 2703

Տպված է Գրասեր Ատոմի «Էմիլ Լիթրե. ընկերաբանական հատվածք» հոդվածը:

1880 թ. սեպտեմբերի 8, չորեքշաբթի, N 2706

<u>Հայ ուսանողաց գաղթականություն ի Զվիցերի</u>. «Գոհությամբ կը լսեմք, թե Հ. Խիեկչյան էֆենդին Զվիցերիի մեջ հայ ուսանողաց գաղթականություն մը հաստատելու գործը վերստին ձեռք առեր է, ըստ առաջարկության ծնողաց ոմանց:

... Խիեկյան էֆենդին առաջին անգամ 1875 թ-ին ձեռք զարկավ այդ գործին, բայց ժամանակն աննպաստ էր իրեն. տակավին լավ չէր զգացված այդպիսի ձեռնարկության կարևորությունն»:

1880 թ., սեպտեմբերի 17, ուրբաթ, N 2714

Բերա, 2 սեպտեմբեր, 1880 թ.

«Հայ ուսանողաց ... ի Զվիցերիա» - «Գերմանիո կամ Զվիցերիո մեջ հայ ուսանողաց գաղթականություն հաստատելու խորհուրդը հղացած էի առաջին անգամ 1870-ին, Շահնազարյան վարժարանի տեսչությունը ընդունելես առաջ: 1871-ին Եվրոպա ըրած ուղևորությանս միջոցին այդ խորհուրդն իրագործերու եղանակին և տեղվույն վրա խոսեցա: 1874-ին Շահնազարյան վարժարանեն հրաժարելով որոշեցի Զվիցերի երթալ»: (Գնում է, աշխատում է գործը գլուխ բերել):

«Եվ սակայն ջանքերնիս ի դերև ելավ և 1877-ին վերադարձանք ի Պոլիս պարտքերով բեռնավորված»:

Այժմ, ահա, նորից է հանձն առնում այդ գործը:

1880 թ., սեպտեմբերի 24, ուրբաթ, N 2719

ՄԵՏԵՈՐԱ

«Ազգային նոր հանդես մը.

Զմյուռնիո մեջ մեծապատիվ Գ. Մսերյանի աշխատասիրությամբ և ՄԵՏԵՈՐԱ անվամբ գիտական, ազգային և գրական հանդես մը սկսած է հրատարակվիլ, որմե տարվան մեջ մի քանի հատոր պիտի ելնե»

Առաջին հատորին պարունակությունը հետևյալն է.

«Հին զինի» - Ս. Ոսկանյան

1880 թ., հոկտեմբեր, ուրբաթ, N 2736

Զմյուռնիայում կառուցված հիվանդանոցի (կառուցվել էր Հակոբ և Հովհաննես Սպարթալյան եղբայրների միջոցներով) վերատեսուչն էր Մակար ծ. վարդապետ Բարխուդարյանը:

«Այց ելա Ս. Մեսրոպյան ազգային վարժարանն, ուր կը դասախոսեր Մեծ. Ս. Պալապանյան էֆենդի յուր քաղցրուսույց ոճովն հայերեն լեզու, Ազգային և Սրբազան պատմություն և կրոնագիտություն, և որո տեսչությունն ուներ Մ. Մամուրյան բազմարդյուն էֆենդին գաղիական լեզվի դասախոսությամբ»:

1880 թ. հոկտեմբերի 28, N 2746

Առաջարկված է մի քանի կետից բաղկացած ընդհանուր ծրագիր Զմյուռնիայի Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանների բարեկարգման համար։ Նշում է մի քանի տեսուչների անուններ, որոնք եկել են ու գնացել՝ հալածանքի կամ բանսարկության զոհ լինելով։

1880 թ., նոյեմբերի 10, N 2757

«Զմյուռնիո Արշալույս Արարատյան լրագիրը կը ծանուցանե, թե վիճակին առաջնորդ Գեր. Մելքիսեդեկ Սրբազանն, որ երկու ամսե ի վեր թեմերն այցելության ելած էր, եկեղեցյաց, դպրոցաց, ելևմտից և այլն վերաբերյալ կարգադրություններ ընելով և թաղական խորհուրդներ կազմելով, ուրբաթ իրիկուն Զմյուռնիա վերադարձեր է»։

1880 թ., նոյեմբերի 16, N 2762

«Իզմիրեն մեր հարգո թղթակիցը կը ծանուցանե մեզ, թե Սպարթալյան մեծապատիվ Հովհաննես էֆենդին հինգ հարյուր լիրա նվիրեր է Իզմիրի ազգային սնտուկին»։

1880 թ., նոյեմբերի 25, N 2770

Գեղջկական նամականի. քննադատում է «Մետեորա» հանդեսը, որը սոցիոլոգիական ուղղության հարցեր է առաջադրում։ Անդրադառնում է Լիթրեին, Վոլտերին։

Հեղ.՝ ՃԳՆԱՎՈՐ

1880 թ., դեկտեմբերի 2, N 2776

Զմյուռնիայի երկու դպրոցներում միասին 400-են ավելի աշակերտ կա։ Տեսուչ էր Մ. Մամուռյանը։

1881 թ., հունվարի 15, N 2788

Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատյանի ցավակցական նամակն է՝ ուղարկված Մկրտիչ Մեզպուրյանին, իր հարազատի՝ Ներսես Մեզպուրյանի մահվան կապակցությամբ։ Մելքիսեդեկն ու Ներսեսը մտերիմ բարեկամներ են եղել ու հին ծանոթներ։

1881 թ., հունվարի 17, N 2789

Գաղթականություն Փարիզի. «Հայտնի է Ձեզ, որ Փարիզու հայ գաղթականությունը հաստատած է 1879 թ. սեպտեմբերի 11-է ի վեր մի ընկերություն «Հայկազյան-Ռիսումնասիրաց

ընկերություն» անվամբ, որ նպատակ ունի ազգային աղքատ պատանեկաց բարձրագույն ուսմունքներ սովրեցնել տալ Եվրոպիո համալսարանաց մեջ:

...Առաջիկա Նոր տարիե սկսյալ Փարիզու հայ գաղթականությունը պիտի ունենա նաև իր ընթերցարանն ու թանգարանը, 47 Ռուի Ֆեոյյանթին, և որո բացման հանդեսը պիտի կատարի 1881, հունվարի 1-ին (ն.ն.)

Ատենադպիր՝ Ատենապետ՝

Նիկողոս Շերպեթճյան Սիմեոն Ռափայելյան»

1881 թ., հունվարի 21, N 2791

Զմյուռնիական գործեր. Երկսեռ վարժարանների ծանր վիճակի մասին: Քննադատում է նախորդ տարիների տեսուչների գործերը: «Պատասխանի» խորագրով տետրակից, որը հրատարակվել է վերջերս, բերում է ընդարձակ ցիտատ:

ՎԱԽԹԱՆԿ

1881 թ., հունվարի 28, N 2796

Խիեկչյանի պատասխանն է վերոհիշյալ նամակին («Զմյուռնիական գործեր» խորագրի ներքո)

1881 թ., փետրվարի 2, N 2800

«Զմյուռին քաղաքականության նկատմամբ մի տարօրինակ քաղաք է: Գրեթե ամեն ազգե և ամեն աստիճանե մարդիկ կը գտնվին այս քաղաքիս մեջ, ամենապատվավոր անհատեն սկսյալ մինչև ամենաետին ավազակն: Մինչև ցարդ ավազակության և մարդասպանության կողմեն սոսկումն և սարսափն տիրած էր քաղաքիս մեջ: Տեղական լրագիրք, ինչպես են ԷՄԲԱՐՍԻԱԼՆ, ԼԱՐԵՖՈՐՄՆ և հայերեն ԱՐՇԱԼՈՒՍՆ իրենց էջերն կը լեցնեին եղած եղեռնագործությանց դեպքերով»:

1881 թ., փետրվարի 9, N 2806

«Պատասխանի» խորագրով տետրակը գրել է Նշան Միրզայանը:

«Ծայրահեղ համբակություն մ' է Խիեկչյան էֆենդի պահանջել, որ լրագրաց մասնավոր թղթակիցք հայտնի անվամբ երևին: Լրագրի հատուկ թղթակից մը, քանի որ պարտավոր է ամեն ինչ ստուգությամբ գրել, չէ կարող միևնույն միջոցին հայտնի անվամբ երևիլ: Նա յուր անունը երաշխավորություն կուտա խմբագրապետին, և այն կերպիվ միայն յուր սկզբունքը և ազգային գործոց մասին յուր անաչառ տեսությունքը ազատաբար հայտնելու կարող կլինի»: (Նշում է ֆինանսական, վարչական, մանկավարժական բնույթի այն թերությունները, որոնք թույլ է տվել Խիեկչյանը):

1881 թ., փետրվարի 28, երկուշաբթի, N 2821

«Հայկազյան Ռւսումնասիրաց ընկերության Կեդրոնական ժողովը պատիվ ունի բերկրությամբ սրտի ծանուցանել Ձեզ, և ուսումնասեր Ազգայնոց, որ յուր նորահաստատ «Թանգարանի և ընթերցարանի» բացման հանդեսը շքեղ կերպով կատարվեցավ փետրվար վեց, կիրակի օրն, ի ներկայության փարիզաբնակ ազգայնոց: Կես դարե ի վեր հաստատված հայ գաղթականությանս վերջին ծայր զգալի եղած էր ազգային միության կեդրոնի մը պետքը… արդարև շուրջ 40 անձինք ներկա էին հանդիսիս, որ սկսած ժամը 2 ½-ին»:

1881 թ., ապրիլի 12, N 2857

«Գարագաշյան և Էմիլ Լիթրե» հոդվածը. Գտնում է, որ գրաբարը մեռնում է և չի կարելի կենդանացնել: Հենվում է Լիթռեի վրա: Ընդ. խորագիրն է «Գարնան ծաղիկներ»:

Հեղ.՝ Գրասեր Ատոմ

1881 թ., մայիսի 11, N 2878

«Հայկական կրթարանի» մասին հոդված: Հիմնվել է 1876 թվականին և հավանորեն «Ազգային լսարան Յորթագյուղն» է:

1881 թ., մայիսի 26, N 2891

«Գլխավորք ազգային կրթական հաստատությանց, որ ի Զմյուռին են Ս.Մեսրոպյան և Ս. Հռիփսիմյան վարժարանք: … Ընդ տեսչությամբ Մամուռյան էֆենդիի: Առաջինն ունի երեք բաժանումն՝ ԸՆՏԵԼԱՐԱՆ, ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ և ՌՒՍՈՒՄՆԱՐԱՆ, երեքն ի միասին յոթնամյա շրջանով»: (ՌՒնեին 250 աշակերտ)

«Երկրորդն (Հռիփսիմյան) ևս ունի երեք բաժանումն ութամյա շրջանավ: Կա Ասեղնագործություն ևս»: (ՌՒնեն 250 աշակերտ)

«Ամերիկյան դպրոց (բողոքական հայոց). այս վարժարանն է ընդ տեսչությամբ Պ. Հակոբ Կոստանդյան ուսումնական երիտասարդին, կը հաճախեն այսր երեսնի չափ աշակերտք, որոց կավանդին բոլոր տարերք Նախակրթության, ի մասնավորի անգղիերեն լեզու:

ՍՔՈՉ ՍՔՈՒԼ (Սկովտիական դպրոց) ընդ տեսչությամբ Պ. Ա. Սբաթիի, որ ի քսան ամաց հետե կը վարե զայն օգնությամբ Նպաստամատույց ընկերության իրիք և մասամբ թոշակոք աշակերտաց, որոց թիվն է երեք հարյուր ընդ արու և ընդ էգ»:

1881 թ., մայիսի 30, N 2894

«Ազգասիրական զգացմունք համարյա թե չգոյությամբ կը փայլին յազգայինս Զմյուռնիո, եթե աննշան բացառությունս ինչ չդնեմք ի համարի. ազգային լեզվի և ընդհանրապես ազգայնության նախանձախնդրություն չունին մեծ ինչ նշանակություն և առ Զմյուռնիացի հայազգիս: Օտարախոս լինելու մոլությունն հանրական սովորություն մի դարձած է անդ, առ հայ ընտանիս, մինչև իսկ կը հավաստեն, թե մի հույն սպասուհի բավական է այս կամ այն ընտանյաց բոլոր անդամոց մոռացնել տալու զյուրյանց մայրենի լեզուն, ի սուղ ժամանակի՝ հունարեն խոսել տալով նոցա հանապազ:

Պճնավորությունն այլ, որպես ի Պոլիս, հանրական սովորություն մի դարձած է առ Զմյուռնիաբնակ ազգայինս»:

Հ. Գուրգեն

1881 թ., հունիսի 8, N 2901

«Գեղջկական նամականի» - «Ճգնավորը» խոսում է Էմիլ Լիթրեի մասին, սրա կապի մասին Էմիլ դը Ժիրարդենի և Թիերի հետ:

1881 թ, հունիսի 11, N 2904

Պ. Լիթրե հոդվածը՝ մահվան առթիվ:

1881 թ., հունիսի 21, N 2937

«... Տեղվույս (Իզմիրի) ազգային երկուց սեռից վարժարանաց տարեկան հարցաքննությունն սկսավ հունիս ամսույն 10/22-ին և ավարտեցավ նույն ամսույն 30-ին, առավոտյան ժամը 8-են մինչև կես օր՝ Հռիփսիմյան վարժարանի օրիորդաց քննություն կը կատարվեր, և կես օրեն վերջը, ժամը 3-են մինչև 7, Մեսրոպյան վարժարանի աշակերտաց քննությունն:

...Հարցաքննության ավարտումեն հետո, ամսույս 2/14-ին կատարվեցավ Ս.Մեսրոպյանց տոնախմբությունն (հուլիսին)»:

Դպրոցների տնօրենն էր Մամուռյանը:

Հեղ.՝ ԶԳՈՆԴԱՏ

1881 թ., օգոստոսի 17, N 2959

«Էմիլ Լիթրե» հոդվածը: Հեղ՝ ՍԱՀԱԿ

1881 թ., սեպտեմբերի 12, N 2980

«Սանդուխտ. ողբերգություն Թովմաս Թերզյանի» գրքի մասին «Գրասեր Ատոմի» գրախոսականն է, ուր վկայակոչված է Էմիլ Լիթրեն:

1881 թ., հոկտեմբերի 5, N 2998

«Արդեն դպրոցական արձակուրդի օրերը լրացած լինելով, ուսումնական խորհրդո հայտարարության համեմատ, ամսույս 2-ին (սեպտեմբերի – Ս.Շ.) դպրոցները բացվեցան, թեև աշակերտաց մեծ մասն արձակուրդի պատճառավ գյուղերը գնացած լինելով, հազիվ ամսույս 7-ին (սեպտեմբերի-Ս.Շ.) կանոնավոր դասախոսությունք սկսան՝ ըստ նախորդ շրջանի ծրագրին»:

1881 թ., հոկտեմբերի 24, N 2999

«Հելլենացվոց Վեհ. Գնորգ Ա թագավորը Ս.Փրկչի ասպետական կարգին պատվանշանը շնորհեց առ Պ. Յակոբ Գուրգեն, որ յուր «Ռիդեւորություն յԱթենս» գրքույկին մի փառակազմ օրինակը նվիրած էր Նորին Վեհափառության, գաղղիերեն ուղերձով մը»:

1881 թ., հոկտեմբերի 15, N 3007

«Այժմ տեսնենք, թե ինչ էր տղու դասն, կամ, այն ժամանակի լեզվավ՝ համարն»:

Որ դպրոցները տանջարան էին: Մի ցիտատ կա տանջարանի մասին: Հեղ. Գրասեր Ատոմ

1881 թ., հոկտեմբերի 17, N 3008

«Մասիսի ոսկեդարն էր յայնժամ, երբ Պառնասյան կը բազմապատկեր զինք այդ թերթին մեջ: Այդ ուշիմ և անխոնջ գրագետին շնորհիվ ԳՈԼԵԺ ԴԸ ՖՌԱՆՍԻ դասախոսությունք, որց մտադյուր կ'ունկնդրեն քաղաքականության և գրականության իշխանք իսկ՝ կը թարգմանվեին, կը մեկնաբանվեին և հայ մտաց մարսելի կը գործվեին Մասիսի Բանասիրականին մեջ, ուր այլ ազգային ականավոր գրագետք ալ ինքնակամ կը բերեին իրենց հարուստ բաժինն: Ինչ որ բուն ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ կը կոչվի կամ որ նույնն է՝ խորհրդակցություն ազգային անցից վրա, ստեպ այն բեղուն և փայլփլուն գրչին արդյունքն էին, որ երբեմն ՄԵՂՈՒ-ի մեջ ազգային Սահմանադրությունն պաշտպանեց:

Մասիսի Թերթոնին մեջ Պ. Ռիթուջյան առանց խմբագրութենե գլխովին ձեռնպահ ըլլալու, բնագրին արժան լեզվավ մը կը թարգմաներ Թափառական հրեայի հրաշալի պատմությունն, որ կը հուզեր համանգամայն և կը լուսավորեր հայ ժողովուրդն: Հյուգոյի (Իւկօի) պատգամներն, Կիզոյի խոհերն, Թիեռի վճիռներն, Ժյուլ-Սիմոնի ճառերն, Ժյուլ Ֆավռի շանթերն, հայր Հակինթոսի բողոքներն, Կառտպալտիի քաջագործությունք, Բիպուրիի սխրագործությունք արձագանգ կը գտնեին Մասիսի էջերուն մեջ»:

ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ

(«Հայ մամուլն» հոդվածի 3-րդ՝ «Ազգային կրթություն» բաժինն է):

1881 թ., հոկտեմբերի 24, N 3014

«Արևելյան Մամուլի մասին «Գրասեր Ատոմի» հոդվածը: Գովում է Շահնուրին և նրա «Հայկական նամականին»: Դրվատում է Մամուռյան-խմբագրին:

1881 թ., նոյեմբերի 2, N 3022

Գրական և Կրթական շարժում (Դ)

Մետեորա

«Արդարև ՄԵՏԵՈՐԱՆ չունի փայլ իր անվան համաձայն, մանավանդ ինքնածին փայլ մը չունի պատվական Գրիգոր Մսերյանի «Գիտական, ազգային և գրական» հրապարակախոսությունն, ույր առաջին հատորն անցյալ աշնան սկիզբն և երկրորդ հատորն այս տարի գարնան սկիզբն ի լույս ընծայվեցան:

Միայն առաջին հատորն ընթերցա երեկ և այսօր և համոզվեցա, թե փայլուն կամ տժգույն օգտակար պիտ ըլլա այս նոր հրատարակությունն,- ույր ընթերցումն իմ վրա տարօրինակ տպավորություն մ' ըրավ սակայն:

Չը գիտեմ հատորին վերջն Ստեփան Ոսկանյանին ՀԻՆ ԳԻՆԻ վերնագրով բանաստեղծության ազդեցությա՞մբ էր, որ զինովցա ՄԵՏԵՈՐԱՅԻՆ առաջին հատորն ավարտելով. և պատկերներ՝ տխրեցուցիչ, զվարթացուցիչ, շլացուցիչ, հիացուցիչ, ոգևորիչ, հաջորդաբար աչացս ներկայացան և անհետացան գրասեղանիս առջև զանազան զգացողություններ ունեցա հեշտալի թե անձկալի, դրախտի կամ դժոխաց արժանի»:

ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ

Գրիգոր Մսերյանը դրական (պոզիտիվիստական) փիլիսոփայության հետևող էր:

1882 թ. մարտի 15, N

<u>Բողոքականություն ի Զմյուռնիա</u> - 30 տարուց ավելի է գոյություն ունեն Զմյուռնիայում, և գոյությունները պահպանում են Ամերիկացիների օժանդակությամբ: Ապա քաշվել են Մանիսա: Առաջնորդն է մր. Պոյենը:

1882 թ., N 3139

«Զմյուռնիո առաջնորդ Գեր. Տ. Մելքիսեդեկ Ս. Եպիսկոպոս Անգղիո թագուհվույն անձին դեմ կատարված սպանության փորձին ի դերև ելնելուն առթիվ, վերջին կիրակի օրը Ս. Ստեփաննոս եկեղեցին հանդիսավոր աղոթք կատարեր է, ուր Վեհ. Սուլթանին կենաց համար ալ ջերմ բարեմաղթություններ եղեր են: Ժողովրդյան խուռն բազմություն մը սույն հանդեսին ներկա գտնվեր է»:

1882 թ., մայիսի 8, N 3169

«Զմյուռնիայի ազգայինք մեծ ընդունելություն ըրեր են Երուսաղեմա Ս.Պատրիարքին: Նորին Սրբությունն Եսայան եղբարց տունն հյուրընկալվեր է, ուր շաբաթ առավոտ մեծածախ կոչում մը տրվեր է ի պատիվ Ն. Սրբազնության»:

1882 թ., մայիսի 24, N 3182

«Շնորհիվ մեր Զմյուռնիացի ազգայնոց հանրածանոթ ազգասիրության և եղած իմաստուն ջանից, արդեն 1500 ոսկի կրցած է հանգանակվիլ աղջկանց նոր դպրոցի մը կառուցման համար»:

1882 թ., հունիսի 15, N 3202

«Լուրեր և տպավորություններ Ֆրանսիայեն» - խոսվում է «Հայկական ՌԻսումնասիրաց ընկերության» մասին, տրվում է նրա արած գործի բնութագիրը Փարիզում:

1882 թ., օգոստոսի 31, N 3265

Թղթակցություն – Փարիզի «Հայկական ՌԻսումնասիրաց ընկերության» գործունեության մասին: Իրենց կազմած կանոնադրությունը ներկայացրել են Ֆրանսիական կառավարությանը՝ վավերականացնելու համար, որովհետև այդպիսի ընկերությունները առանց պաշտոնական թույլտվության արգելվում են:

Մարսելի հայերն էլ առաջնորդ և եկեղեցի ունեն: Առաջնորդն է Հ. ՌԻթուջյանը:

ՀՐԱՆՏ

1882 թ., փետրվարի 8, N 3596

Մելքիսեդեկ Մուրադյանի՝ կաթողիկոսության թեկնածու (տես Է՛) առաջարկած ժամանակ, սպրդել են կենսագրական բնույթի սխալներ:

«Ա. Մելքիսեդեկ եպիսկոպոս, թեև ուղևորված է ի Գերմանիա, բայց որ և է համալսարանի ուսանող եղած չէ, և ոչ իսկ ընդունած է Աստվածաբանության վարդապետի վկայագիր:

Բ. Հոգելույս Մատեոս Կաթողիկոսի օրով ո՛չ Էջմիածնի միաբան եղած է Գեր. Մուրատյանց, և ոչ իսկ նույն կաթողիկոսեն բանադրյալ: 12 տարիե հետե եկեղեցական կոչմամբ կը ծառայե ազգին: Սիոնի խմբագիր եղած է. հրատարակած է երկասիրություններ, մանավանդ ի պաշտպանություն հայաստանեայց եկեղեցվո առաքելականության և անարատ վարդապետության: Երուսաղեմ ի Պոլիս, ի Ռոմանիա և ի Զմյուռին խոսած է հրապարակային քարոզներ, որոց բովանդակությունն ողջամտության, կրոնական սրբության և ազգային զգացմանց անհերքելի ապացույցներ են:

Գ. Գեր. Մելքիսեդեկ Մուրատյանց Պոլսո մեջ ուսուցչության պաշտոն վարած չէ: Նա Թուրքիո հայոց կյանքն ուսումնասիրելու համար միայն ճանապարհորդած է ի Տաճկաստան, աստի 19 տարի առաջ և ապա Երուսաղեմ ըստ թախանձանաց Ս.Պատրիարքին, ճեմարանի տնօրինության պաշտոն վարած միջոցին վարդապետ ձեռնադրված է:

Դ. Իզմիրցիք ոչ կը գանգատին, թե իրենց առաջնորդն թույլ բնավորության տեր է, և ոչ ալ կամբաստանեն, թե չափազանց ազատամիտ է, որով և գայթակղություն պատճառած:

Ե. Ի Զմյուռին չկա բնավ կուսակցություն մելքիսեդեկյան և հակամելքիսեդեկյան:

Զ. Մենք կրնանք հաստատել, թե Մելքիսեդեկ եպիսկոպոս բնավ հետամուտ չէ կաթողիկոսության, քանզի քաջ խելամուտ է, թե ինչ օտար թելադրություններ կան Հայոց կաթողիկոսական ընտրության մեջ և թե ինք կաթողիկոս չկրնար լինիլ, համոզված է, մանավանդ, որ մի եկեղեցական, առանց կաթողիկոսական բարձր կոչման ձգտելու, յուր խոնարհ աստիճանի մեջ իսկ կարող է մեծ ծառայություն մատուցանել յուր Ազգին, զի անունն չէ, որ զմարդ կը փառավորե, այլ գործն:

Է. Գեր. Մելքիսեդեկ չունի այն առողջական վիճակն,ինչպես կը կարծվի: Նա սաստիկ կը տագնապի ամառն՝ Իզմիրի տապեն, և ձմեռն՝ խոնավութենեն, ուստի, ըստ մեզ, մեծ հավանականություն կա, որ Հռիփսիմյանց նորաշեն վարժարանի բացման հանդեսը կատարելով, Զատկեն զկնի հրաժարի առաջնորդության պաշտոնեն ի կազդուրումն յուր առողջական վիճակին»:

1883 թ., հունվարի 19, N 3386

Ազդարարվում է «Տոքթոր Էդուարդ Կ. ՈՒթուջյանի» մասին, որը հիվանդներ է բուժում: Սա Կարապետի տղան է:

1883 թ., մարտի 5, N 3413

Տպագրված է Սիրանույշ և Աստղիկ քույրերի 1883 թ. հունվարի 31 թվակիր նամակը Զմյուռնիայի թատրոնի անկյալ վիճակի մասին: Երկու քույրերը չէին խաղացել, որովհետև իրենց խոստացել էին վճարել և չէին վճարել:

Պատասխանը՝ 1883 թ., մարտ, N 3426:

1883 թ. օգոստոսի 2, N 3488

Հայր Սուքիաս Պարոնյան

Ծնվել է 1831 թ. նոյեմբերի 15-ին Պոլսում: 1841-ին (օգոստոս) Խորեն Նար-Պեյի հետ մեկտեղ, մտնում է վանք (Մխիթարյան) և 1854-ին քահանայանում է: Սովորում և ավարտում է Մխիթարյանների մոտ: 1857-ին գնում է Փարիզ, որպես Մուրատյան վարժարանի ուսուցիչ: Այստեղ էլ սկսում է զբաղվել ձեռագրերի բաղդատմամբ, որոնք Խորենացուն են պատկանում: 1864-ին, վերադառնում է Վենետիկ և նշանակվում է վանքի զրապետ: 1866-ին գնում է Պոլիս, ուր և մնում է մինչև 1875 թ. սկիզբը, լինելով դրաներեց Տյուզյան գերդաստանի, Միհրան Տյուզի անձն

քարտուղար։ Հարում է հակահաստունյաններին և 1871 թ. մայիսի 24/5 հունիսին հրապարակավ բանադրվում է։ 1875-ին նորից գնում է Փարիզ (փետրվար) և մայիսի 23-ին գալիս է Լոնդոն։ (1862-ին մի անգամ էլ է եղել Լոնդոնում)։ Այժմ գտնվում է Բրայթոնում որպես Սեթյանների տան ուսուցիչ։

1883 թ., օգոստոսի 3, N 3489

«Հայկական կրթարանի» տնօրեն Հակոբ Գուրգենի ճառը։ Յոթ տարի է գոյություն ունի որպես դպրոց։

1883 թ., օգոստոսի 25, N 3507

Հայկական կրթարան. «Այս կրթարանն հաստատյալ է 1876 հուլիսի 1-ին և իբրև երկրորդական վարժարան, վավերացյալ է հասարակաց կրթության նախարարութենէն։ Հիմնադիր տնօրեն Հակոբ Գուրգեն»։

1883 թ., սեպտեմբերի 7, N 3517

Գրաճարակ մուկերն

(առակ)

Ամեն բանի գետ ու հմուտ

Պատմաբան

Երկնից զաղտնեացն իսկ հետամուտ

Ի մի բան

Լիթրեաձև, մեծահանճար

Մի զիտուն,

Գիր կը զրեր, վանկ կ' որոճար

Օրն ի բուն։ ...

Աղեքսանդր Փանոսյան

(Հնարավոր է, որ ակնարկված է Ռսկանը)

1883 թ., հոկտեմբերի 4, N 3538

<u>Լուրեր Զմյուռնիայեն</u>

«Տեղվույս ազգային երկսեռ վարժարանաց տարեկան երկամսյա արձակուրդն արդեն լրացած լինելով՝ ամսույս 2-ին (սեպտեմբերի- Ս.Շ.) դպրոցները բացվեցան և կանոնավոր

դասախոսությունք սկսան ըստ կանխավ հայտարարության, Պատ. Ռիսումնական խորհրդո աշակերտաց մեծագույն մասն իրենց դպրոցական տարեկան թոշակը վճարելով՝ փութային ընդունելության տոմսակներ առնուլ և դիմել ի վարժարան:

...Հռիփսիմյան վարժարանի շինությունն իսկայաքայլ առաջ կերթա: Հանձնաժողովի անդամներն են՝ Սուլթանյան, Վարպետյան, Մերկերյան, Եսայան, Պալըքճյան, Մաքսուտյան և Սպարթալյան»:

1884 թ., փետրվարի 20, N 3606

<u>Գեր. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատյան</u>

(Արշալույսը կծու հոդվածներ է գրում սրա դեմ)

«... Յոթը տարիէ ի վեր Գեր. Մելքիսեդեկ Մուրատյանց տեղվույս առաջնորդական պաշտոնը կը վարէ: Նորին սրբազնությունը յուր խաղաղասեր բնավորությունով, տեղվույս ազգայնոց համակրությունը կը վայելէ: Նա մեծապես փույթ ունեցավ կուսակցական հին կիրքերը մոռցընել, և վարժեցնել զմեզ խաղաղասիրության, որմե կախում ունի ազգի մը հառաջադիմությունը և ասոր ապացույց է տեղվույս ազգայնոց այս օրվան հառաջադեմ վիճակը: Բայց մի քանի չարկամ անձինք, որոնք պատրաստ են միշտ ազգային նվիրական շահերն իրենց անձնական կրից զոհելու, չախորժեցան Նորին Սրբազնության խաղաղասեր ընթացքեն, և միանգամայն տեսնելով, որ Նորին Սրբազնության անկողմնակալ պաշտոնավարության օրով անկարելի է ազգային որևէ պաշտոնի մը հասնիլ, կուզեն պղտոր ջուրի մեջ ձուկ որսալ, և այսպես հաճախակի զրգռական հոդվածներ հրատարակելով, իրենց բուն նպատակն է կուսակցություններ կազմել, ժողովները տապալել և Նորին Սրբազնությունը հրաժարեցնել: ... Տեղվույս ազգայինք մեծապես գոհ են իրենց սրբազան առաջնորդեն, քանի որ պատճառ մը չունին անորմե դժգոհելու: Նա ոչ միայն իր պարտականությունները սիրով կը կատարե, այլ շատ անգամ մեծամեծ զոհողություններ հանձն կառնու հօգուտ ազգին և ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո»:

1884 թ., մարտի 8, N 3620

Զմյուռնիայում Հռիփսիմյան վարժարանի նոր շենքի շինության մասին: Ակտիվ դեր է կատարում քաղաքի առաջնորդը՝ Մելքիսեդեկ Մուրատյանցը, որը կարողանում է միայն «առանց դասու» բաժանորդագրությամբ 1700 ոսկի հավաքել:

Կանայք նույնպես ցանկություն են հայտնում մասնակցել հանգանակությանը և փող են հավաքում:

1884 թ. մարտի 11, N 3622

Համբարձում Խիեկչյանի մահվան առթիվ (հունվարի 22) կայացած հանդիսավորությունը Սիսում: Աշակերտներից մեկի ճառը:

1884 թ., մարտի 15, N 3626

«Տոքթոր Շիշմանյան, որ այժմ Տփղիս կը բնակի և յուր ԾԵՐԵՆՑ ստորագրյալ հրատարակությամբք հանրածանոթ է, այս օրերս տետրակ մը հրատարակած է, որով ջերմապես կը պաշտպանե Խրիմյան սրբազանի Կաթողիկոսական ընտրելիությունը»:

1884 թ., ապրիլի 25, N 3658

Ֆրանսիայի նախարարապետ Ժյուլ Ֆերրիի ճառը Գամբետտայի արձանի բացման ժամանակ:

1884 թ, ապրիլի 26, N 3659

<u>Այլ և այլ</u>

«1880 տարվո օգոստոս ամսո մեջ էր:

Բարիզու պաշտելի հողին վրա առաջին անգամ ոտք կը կոխեի և քայլերս նախ քան զամենայն Լուսինյան հոյակապ և հյուրասեր ապարանքը կուղղեի, որ յինք կը ձգեր զիս: Մեծ բանաստեղծը՝ Վիկտոր Հյուգոն, չնաշխարհիկ կինը՝ Մառի իշխանուհին և Պոլսեցի բարձրաստիճան հյուրը տեսնելու եռանդը կը տոչորեր զիս:

Այդ թվականեն ի վեր անհուն համակրանք մը կը տածեմ Լուսինյան բարձր գերդաստանին վրա: Ցնծությամբ, կրնամ ըսել պարծանոք, կը կարդամ այն արդարացի ներբողները, զորս ֆրանսական ազնիվ մամուլն երբեմնակի կը հյուսե ի պատիվ անոր, և խորին արհամարհանոք մեկ կողմ կը նետեմ այն թունալից գրությունններն, որք՝ նախանձոտ կամ վայրահաչ գրիչներու ծնունդ՝ Լուսինյանց փառքը նսեմացնելու կը նկրտին, բայց իզո՜ւր»:

1884 թ., մայիսի 14, N 3674

«Առ Գերաշնորհ Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատյանց, հատընտիր Հովվապետ թեմին Զմյուռնիո, հիշատակ խորին վշտակցության ի մահ հարազատին յուրո Մուրատյան աղա Հովսեփու, արցունք քերթողին զշիրմավ սիրելվույն»:

Բանաստեղծություն է, հեղինակն է Արմեն Լուսինյանը: Արևմտահայերեն:

1884 թ., մայիսի 27, N 3685

«Զմյուռնիո «Արշալույս Արարատյան» թերթն, որ տեղական կառավարության հրամանավ անպայման կերպիվ դադրած էր հրատարակութենե, հետ քառասունօրյա դադարման, վերսկսավ յուր հրատարակությունը»:

1884 թ., հունիսի 4, N 3691

Տեղեկագիր

Հանձնաժողովը վերաշինության ազգային Ս.Հռիփսիմյան վարժարանին Զմյուռնիո

«Քաղաքիս Ռեշիտիե փողոցը, թիվ 106, Ս. Հռիփսիմյան վարժարանի կրկնահարկ շենքն (զոր 1849-ին շինել տալով Ազգին նվիրած էր ազնվափայլ Հռիփսիմե տիկին Գ.Կոստանդյան) հինցած միանգամայն և աշակերտուհյաց բազմացած լինելովն անբավական դարձած էր, որոշած էր նոր և ընդարձակ վարժարան մի կառուցանել»:

Հանձնաժողովը բաղկացած էր 12 հոգուց, Մելքիսեդեկ Մուրատյանի նախագահությամբ: Դրանք են.

Գևորգ Սուլթանյան	Մելքոն Մաքսուդյան
Թագվոր Առաքելյան	Մերկեր Մերկերյան
Թագվոր Սպարթալյան	Հակոբ Պալըրգճյան
Ղուկաս Եսայան	Հովհաննես Ավետիքյան
Կարապետ Սպարթալյան	Հովհաննես Մաքսուդյան
Մարտիրոս Ալփիարյան	Պողոս Վարպետյան

Հանգանակության մասնակցելու հրավերներ են ուղարկվել «առ Զմյուռնիայի ազգայինս ի Մանչեստեր, ի Լոնտոն, ի Փարիզ, ի Մարսեյլ, ի Վիեննա, ի Մոսկվա, ի Թիֆլիս, ի Հռովմ, յԱթենս, ի Կ.Պոլիս, ի Գահիրե, յԱղեքսանդրիա, ի Կիպրոս, ի Հռոդոս, ի Գրզաղաճ և ի Գասաբա:

Ս. Հռիփսիմյան նոր վարժարանի շինությունն սկսած է 1883 թ. մայիսի 9-ին և ավարտած՝ 1884 թ. ապրիլի 4-ին»:

Այնուհետև հաջորդում են ֆինանսական զանազան հաշիվներ:

1900 թ., հունվարի 8, N 2

<u>Մամուռյանի դերը իբր հրապարակագիր և գրագետ</u>

«Այդ ժամանակամիջոցը ֆրանսիական գաղափարներու, ֆրանսիական քաղաքակրթության, ֆրանսիական գրականության տիրապետության ատենն էր ամբողջ Եվրոպայի մեջ: Հայերս՝ Մխիթարյաններու շնորհիվը արդեն բավական ճանչած ինչ որ հին քաղաքակրթությունն ու դասական գրականությունը ունեին իբր թանկագին գանձ, մեր գրական հակումները դարձուցած էինք դեպի Արևմուտքի նոր քաղաքակրթությունը, որուն վարիչը կերևնար Ֆրանսան:

... Իր գրական գործունեությունը, որ թարգմանություններե կը բաղկանա մեծ մասով, ընտելացման զորավոր առիթ մը եղած է ժամանակին երիտասարդությանը, վիպական գրականության այն գլուխ-գործոցներուն, որոնք այն ատենի ոգվոյն մարմնավորումներն էին:

Իզմիր՝ մեր լույսի կենտրոններեն մեկն էր այն հին ժամանակներուն, և Մամուռյան ու Չիլինկիրյան մեր զարգացման գործին մեծ քրմապետներեն երկուքը:

... Մամուռյան կարևոր մաս մը ուներ այս թարգմանությանց մեջ, որոնց կարևորագույնները իրեններն են. Գաղտնիք Բարիզի, Երեք հրացանակիրք, Քսան տարի ետք, Պրաժլոն Դերակոմս, Հազար ու մեկ գիշերներ, Իվանոե, Ամուրիի մը երազները, Վերթեր, Սիպերիականի մը հիշատակը և այլն: Վերջեն այս թարգմանությանը հաջորդած են Ժյուլ Վեռնի գիտական վեպերեն երկուքը»:

ԱՐԳՈՍ

1900 թ., փետրվարի 5, N 6

Կարապետ ՈՒթուջյանը առաջին անգամ տպագրվել է 1849-ից, երբ սովորում էր Փարիզի Առևտրական բարձրագույն վարժարանում: Մի գործը՝ Փարիզի ֆրանսիական վարժարանների վիճակի, կարգի ու կանոնների վրա տեղեկություն է: Տալիս է կարդալու Խաչատուր Միսաքյանին: Սա էլ ուղարկում է Իզմիր՝ Ղուկաս Պալղազարյանին, որը և հրատարակում է իր «Արշալույս Արարատյանում»:

1900 թ., փետրվարի 12, N 7

<u>Կայսերական բժշկական ընկերության հայ անդամները</u>

Ընկերությունը հիմնադրվել է 1856 թ. փետրվարի 15-ին, հոլանդացի բժիշկ Բինքոֆի կողմից: Հայ անդամները եղել են 31 հոգի:

Սերվիչեն	Ընտրվել է Ընկերության անդամ	1856 թ., ապրիլի 26-ին
Սինապյան	---- „ ----	1856 թ., մայիսի 10-ին
Մոզյան	---- „ ----	1856 թ., սեպտեմբերի 12-ին
Ռուսինյան	---- „ ----	1856 թ., հոկտեմբերի 12-ին

Խորասանձյան ---- „ ---- 1866 թ., փետրվարի 2-ին

1900 թ., մարտի 11, N 11

Մարկոս Աղաբեկյանը հավաստում է, որ «Հայտարարություն կանոնաց Ս.Մեսրոպյան ազգային վարժարանի որ ի Զմյուռնիա» գրքույկը, որը հրատարակվել է 1858-ին, գրել է ինքը:

Անդ – Բժիշկ Վահրամ Թորգոմյանը հիացմունքով խոսում է Զմյուռնիայի ազգային հիվանդանոցի մասին:

1900 թ., մայիսի 27, N 22

<u>Էջ մը հին լրագրութենեն</u>

«1878-ի մայիս 28-ին էր, որ մեռավ Ղուկաս Պալդազարյան, Իզմիրի մեջ 38 տարի շարունակ հրատարակելէ ետքը ԱՐՇԱԼՈՒՅՍ լրագիրը, որն իրավունք ունի կոչվելու մեր լրագիրներուն անդրանիկը: 1840-ին, ուր Պալդազարյան իր թերթը հավաքել կը սկսեր, բացարձակապես ճշմարիտ է պնդել, թե դեռ ոչ միայն Թրքահայերը, այլև արտասահմանի հայերը գաղափարը չունեին մամուլի կոչման այն դերին վրա, զոր մենք կը պահանջենք մեր այսօրվան լրագրութենեն:

... Մեր նախորդ սերունդին հին տիպարներեն մեկն է ինքը, անոնցմե որոնք կրթության ճաշակը ներարկեցին մեր տարրին մեջ թերևս շատ կանուխ, քան զմեզ շրջապատողները: Պալդազարյանի ձեռքով է, որ առաջին անգամ ֆրանսերենը մուտ կը գտնե Իզմիրի Մեսրոպյան վարժարանին մեջ, կամ ավելի ճիշտը ըսելով՝ առաջին անգամ հայ վարժարանի մը մեջ: Եվ մտածեցեք, թե այսքան խելացի որոշում մը, – զոր այսօր կրնանք ըմբռնել, – ինչ ընդդիմությանց կրնար հանդիպիլ այն հին ժամանակներուն մեջ, ուր ֆրանսերեն ըսելը Վոլտեռ և անհավատություն ըսել էր:

... Իբր խմբագիր անկախ մարդ մը եղած է, անհատապես ալ զբաղելով վաճառականությամբ, ինչպես հավաստողներ կան, բայց ասով հանդերձ իր լրագիրը պաշտպանյալի լրագիր մը եղած է, ուր անշուշտ կանխակալ կարծիքներ իրենց տեղը ունեցած են, շահու ձայնին համակերպվելով:

Եգիպտոս և Հնդկաստան բնակող հայոց, և մասնավորապես, Յուսուֆյաններու պես ջոջերուն բերանը եղած է և վայելած է փոխադարձ պաշտպանություն անոնցմե: Բայց ասիկա այնքան դատապարտելի չպիտի տեսնենք:

Իր անհատական կյանքին մեջ իբր ընտանիքի հայր լավ դաստիարակություն մը տված է իր զավկըներուն: Իր միակ տկար կողմը եղած էր իր կեղծամը, որուն եղած որևէ ակնարկություն, կըսեն թե սաստիկ կը բարկացներ զինքը, և դժբախտաբար կ' երևա, թե այս կամ այն թերթին հետ իր ունեցած վիճաբանությանց մեջ մեծ մասին մեջ ալ այդ ակնարկությունը լսած է»:

Ա. Ալպոյաճյան

1900 թ., օգոստոսի 12, N 33

Ապրո էֆենդիի կյանքեն

«Ապրո Սաhակ էֆենդի բնիկ Իզմիրցի էր, Ապրո Չելեպիի ծանոթ ընտանիքեն սերած, որուն կպատկանի նաև Տիգրան փաշա Ապրո: Իբրև կես դար առաջ մայրաքաղաքս եկած է Գրիգոր էֆ. Մարկոսյանի և Մինաս էֆ. Մինասյանի հետ, երեքն ալ երիտասարդ, որոնք «Իզմիրցի խումբը» կը կոչվեին: Ապրո էֆենդի և Մարկոսյան էֆենդի զարգացած մտքի տեր ու լեզվագետ, Բ դռան թարգմանության դիվանին անդամ անվանվեցան և այդ պաշտոնը վարելով հանդերձ, 1852-ին ձեռնարկեցին հրատարակելու ՆՈՅԱՆ ԱՂԱՎՆԻ անուն շաբաթաթերթ մը, որ մեկ տարիեն ավելի տևողություն ունեցավ:

... Սկիզբները կը տպվեր Հովհաննես Մյուհենդիզյանի տպարանը, 1852 թ. փետրվարի 28-են մինչև սեպտեմբեր: Այդ թվականեն սեփական տպարանը ունեցավ, որ փակվեցավ 1853 թ. մարտի 14-ին, և այնուհետև ՆՈՅԱՆ ԱՂԱՎՆԻՆ տպագրվեցավ «Ի տպարանի Մրապյանց»: Ապրո էֆ. և յուր աշխատակիցը թեև իրենց հայտարարության մեջ ծանուցած էին, թե երեք տարի անընդհատ պիտի շարունակեն թերթը, բայց երկրորդ շրջանի կիսուն ինքնաբերաբար դադրեցնել հարկադրվեցան, վասն զի ընթերցողներեն շատերը իրենց բաժանորդագինները չէին վճարած:

...Ապրո էֆ. իբրև պետական պաշտոնակատար կարևոր դիրք մը գրավեց հարաճյուն կերպով: Խարիճյեի մեջ զանազան պաշտոններ վարելե հետո Ալի փաշայի եպարքոսության օրով առաջին թարգման եղած է Կայսերական դիվանին և երկար տարիներ արտաքին թղթակցությանց դիվանին տնօրենի պաշտոնը վարած է»:

(ՈՒնեցել է նաև այլ պաշտոններ էլ, որոնք նշվում են):

Կատարել է նաև թարգմանություններ (ֆրանսերենից-թուրքերեն):

«...Նոյան Աղավնին հրատարակվիլ սկսած էր ՄԱՍԻՍԻ երևումեն տասնհինգ օր ետքը ու կերպիվ մը մրցակից կը հանդիսանար անոր:

Այն թվականին, ձեռքե վաճառման սովորություն չի կար և լրագիրը կը գնվեր բաժանորդագրությամբ միայն, վասն զի տարեկանը 120 ղուրուշ եղող 4 էջով շաբաթաթերթ մը հատով պիտի վաճառվեր գոնե 2 ղուրուշի, որ անմատչելի գին մըն էր ժողովուրդին համար: Մրցումը երկու լրագիրներուն միջև, ոչ միայն պարունակության ճոխության կողմեն էր ուրեմն, այլ բաժանորդագրությանց առավելության կողմեն, որ քիչ շուտ կը կատարվեր հանձնարարությամբ ու պաշտպանությամբ: Եվ ՄԱՍԻՍ գերազանցապես կը վայելեր այս վերջին առավելությունը ազգին երևելիներուն կողմէ: Խորասանճյան Պետրոս ամիրա, Կրճիկյան Հակոբ էֆենդի և Էտյան Պողոս աղա հատկապես իրենց քով կանչելով հայ արհեստապետները, հանձնարարեցին անոնց, որ իրենց շրջանակին մեջ աշխատին ՄԱՍԻՍԻ բաժանորդ գտնելու, մինչ «Իզմիրցիներուն խումբը» այս պաշտպանութենեն զուրկ, ինքն իր բաղդին հանձնված էր: Կարճ միջոցի մը մեջ ՌԻթուչյան էֆենդին 300-ի չափ բաժանորդի - «վճարող» բաժանորդի- տիրացավ. այսքանը կը բավեր իրեն ճամբա առնելու համար»:

Երկու թերթերը անընդհատ վիճել են իրար հետ:

Տ. Ա.

1900 թ., օգոստոսի 19, N 34

<u>Էջ մը մեր հին լրագրութենեն</u>

«...Վիճաբանությունը շատ քիչ տեղ կը բռնե ամբողջ թերթին մեջ, ու կատարվածներն ալ ընդհանրապես, զգուշավոր ու շրջահայաց ձև մը ունին: Առաջին տարվան թիվերուն մեջ, ամենեն ավելի բուռն լեզու մը գործածված է հ. Կաբարո Վուչինո անուն լատին քահանային դեմ, անոր հրատարակած ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԵՆԵՏԿՈ գրքին առթիվ, որ օրվան խնդիր է եղեր այդ միջոցներուն հայ մամուլին մեջ:

... Իբրև թերթոն կը հանդիպիմ գրաբար ոտանավորի մը, որուն վերնագիրը միայն բավական հանձնարարական մըն է... չի կարդալու համար՝ «Յաջողութիւն ստանա բարեկամս, իսկ ձախողանք փորձէ զնոսա». հեղինակ Իզմիրի Մեսրոպյան վարժարանի աշակերտ մը, այսօր ծերունի մը անշուշտ: ՌԻրիշ բանասիրական մը, Ռասինի մեկ քերթվածին թարգմանությունը, – դարձյալ նույն վարժարանի մեկ սանին կողմե, - և ավելորդ է ըսել, թե գրաբար»:

Տիգրան Արփիարյան

1901 թ., հունվարի 20, N 3

<u>Մ.Մամուռյան</u> հոդվածը (հեղ.՝ Արտաշես Հարությունյան): Լավ է գնահատում Մամուռյանի գրական-հասարակական գործունեությունը:

Անդ - «1853-ին ճանաչեցի զինքն առաջին անգամ (Մ.Մամուռյանին), երբ Իզմիրեն Կ.Պոլիս գալով Խասգյուղի Ներսիսյան վարժարանին մեջ տեսուչի պաշտոն ստանձնեց: Օրին մեկը (20 տարեկանի երևույթով) ծաղկատի, վառվռուն երիտասարդ մը Վեզիր խանի գրասենյակս գալով և ինքզինքը ճանչցնելով, յուր մեկ թարգմանությունը ներկայացուց. Վոլթերի ԶԱՏԻԿԸ, որ յուր առաջին աշխատությունն էր և խնդրեց ՄԱՍԻՍԻ մեջ իբրև բանասիրական հրատարակեմ, և միանգամայն զատ տպել տամ յուր ծախքով:

Հարցուցի իրեն, թե Վոլթերի այս գործին մեջ կրոնքի դպչող բան մը կա՞. – Բնավ չի կա-պատասխանեց, բայց ես դարձյալ աչքե անցունելով և Իզմիրի լեզուն հնար եղածին չափ կոկելով մաս առ մաս հրատարակեցի»:

(Բերվում է Մամուռյանի մի նամակը և խոսվում է Չամուռճյան-Մամուռյան վեճի մասին):

Հեղ. ՌԻթուջյան Կ.

1901 թ., փետրվարի 3, N 5

<u>Հիսնամյակ մը</u>

1852 թ. փետրվարի 2-ին, երբ այս լրագիրը կը հրատարակվեր («Մասիսը» - Ս.Շ.), օրագրի նպատակը և պարտավորությունը կը սահմաներ սապես. «Ազգը ուղղել, լուսավորել և անոր օգնել»:

(տրվում է մինչմասիսյան շրջանի հայ մամուլի բնութագիրը):

1901 թ., մարտի 3, N 9

Ստեփան Ոսկանի մահը

«Ստեփան Ոսկան, որուն մահը ցավով կը գուժենք մեր կարգին, նոր սերունդին գրեթե անծանոթ ըլլալու չափ վաղեմի ու մեկուսացած հրապարակագիր մըն էր: Անցյալ ուրբաթ, կարճատև հիվանդութենե մը վերջ, մեռավ Իզմիրի մեջ, 75 տարեկան: ... Մանկական մթնոլորտը իրը չէր ու չէր կրնար ըլլալ: Դպրոցական միջավայրը նեղ էր իրեն: ՈՒ ճիշտ միջին դարու նավազներու պես, որ ծովերու և հովերու կուրծք տալե ետքը կերթային վանքի մը անդորրության մեջ մոռնալու ու մոռցվելու, Ստեփան Ոսկան կը քաշվի իր ցեղեն ու կերթա օտարներուն՝ իրեն լեզվով խոսելու ու գավառական խմբագրի համեստուկ օրապահիկը հայթայթելու համար: Ամիս մը առաջ զնաց հողին մեջ հանգչիլ: Մեզի համար 35 տարի է մեռած էր արդեն:

***

Իր տասը տարվան հրապարակագրի կյանքեն աչքիս առջև ունիմ հատորիկ մը ԱՐԵՎԵԼՔ, և 10-15 թիվ ալ ԱՐԵՎՄՈՒՏՔ, զորս իր եղբայրը հաճեցավ տրամադրությանս տակ դնել: Բաղդես՝ վերջին թիվերն են անոնք, որոնց մեջ կը գտնեմ իր ձայնին արձագանգ մը չի գտնելուն բովանդակ խտացած տառապանքը: Անշուշտ առաջին տարիներուն ավելի ջղուտ և հուսալից և հուզումնալից եղած է Ոսկան, բայց անկարելի է առանց խորունկ հուզումի կարդալ իր հզոր ու խրոխտ մտածումները:

... Ոսկան արծիվ մը եղած է իբր քննադատ, բայց աղավնիի սրտով արծիվ մը, կամ ավելի ճիշտը՝ ամպը եղած է, որ շանթով զարնելեն վերջ, արտասվել կսկսի: Իր գրական գործը Բարիզի մեջ՝ ժամանակակից է ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻՆ Մոսկվայի մեջ ու ավելորդ չէ կարծեմ ըսել, թե խոր մտերմության կապով մը կապված է ինք ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ խմբագրին, ու նույն ոճը կը գործածեր: Այն ժամանակները, – ՈՒթուջյան կրնա հիշել իր հիշատակներեն, – հայ գրողին կյանքը անտանելի էր: Ամիրայական անձնասիրություններ կային, թեթև շունչե մը վիրավորվելու պատրաստ, կուռքեր, որ խնկարկվել կը սիրեին, մարդեր, որ Շահնազարյան վարդապետ մը ատյան կը կանչեին: ՈՒ եթե Պոլսո այն ատենվան գրականությունը ստիպված էր ապրելու համար կաղապարի մը մեջ ամփոփվել, պզտիկնալ, Ոսկան, հեռու այդ մթնոլորտեն, կրցավ այսօր իսկ նմանը չտեսնվող ջղուտ և մաքուր աշխարհաբարով մը վիճաբանել:

Կրոնական ցավալի խնդիրներ մը կը հուզվեին այն ատեն, և իր հակառակորդները փիլոնին ապաստանած աշխատեր էին ամեն կերպով զրպարտել Ոսկանը, թե «անհավատ» է: Բայց կերևնա, թե չէին ճանչնար Ոսկանը, որ առյուծի պես ցնցվելով ամենուն բերանին չափը կուտար: Գրողի մը դեմ գործածված այդ մեթոտը մեր բարքերուն աղտոտ մեկ կողմն է եղած շարունակ:

... Բայց շարունակված հակառակությունները կը սկսին պղտորել իր մտածումները: Կաշխատին կաշառել զինքը: Ընտանեկան ազդեցություններ բանեցնել կը փորձեն: Ինքը աննկուն կը մնա: Բաժանորդներ քիչըցնելով՝ կ'աշխատին լռեցնել զինքը և իրոք կը հաջողին ալ քիչ մը ատեն: ԱՐԵՎՄՈՒՏՔԸ նյութական միջոցներե զուրկ՝ կը ստիպվի դադրիլ: Բայց Ոսկան իր սկզբունքներուն հավատարիմ կը գրե, կը պատրաստե, գեթ ձեռագիրները պահելու համար, երբ բարերար ձեռք մը նորեն տպագրության ծախքը կը հոգա, ու դադարումեն վերջ իր առաջին թիվին մեջ կը հրատարակե ինչ որ ձեռագիր պատրաստած էր: Այդ հոդվածը ծայրե ի ծայր հրաշալիք մըն է, հուզումի բոցավառ խոյանք մը:

... ՈՒ կարդալէ վերջ վերի տողերը պիտի ուզեք հասկնալ անշուշտ թե սերը ինչ դեր խաղաց Ոսկանի կյանքին մեջ: Տառապող սիրո պատմության և արցունքի լայն էջ մը ունեցած է Ոսկան ալ: Նույն հավիտենական պատմությունը. հարուստի աղջիկ մը, որուն ծնողքը չեն ուզեր տալ վարժապետ գրագետի մը: Բուն իսկ Ոսկանեն լսած եմ պատմությունը և որուն խոստացա բառ մի չի հանել բերնես: Այն օրերուն զիս մխիթարելու համար էր, որ պատմեց:

... Բայց սա ստույգ է, թե իր թերթերուն մեջ, որոնց կաշխատակցեին Մամուռյան (Վրույր), Փիրիմյան և շատ ուրիշներ, ինքը առաջին անգամ պաշտպանած է առողջ սկզբունքներ: Մամուռյան ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ մեջ ավելի ընդարձակ և ճոխ ու ցավագին խոյանքով նոյն սկզբունքներուն պաշտպանը եղավ: Ոսկանի բոլոր գրվածքները կրնան լուսաբանել ըսածս: Զուգակշիռ մը ընել Մամուռյանի և Ոսկանի միջև չէ՜ նպատակս: Բայց սա ստույգ է, որ ներքին կյանքը ահագին ազդեցություն ունեցած է երկու գրողներուն ալ ճակատագրին վրա ու երկուքին շավիղները զատված են իրարմե սա պարզ պատճառով, որ Սերը գոնե ժպտած է Մամուռյանին, մինչ Ստեփան Ոսկանի կյանքը դատարկ ամայություն մը՝ մեջեն քալած է:

Երեք տարի առաջ, օրաթերթ «ՄԱՍԻՍԻՆ» մեջ «Մոռցված դեմքեր» վերնագրով փորձեցի իր վրա ուշադրություն հրավիրել: Եղիան երկրորդեց փորձս: Ավելի առաջ չի քալեցի, որովհետև Ոսկանի հպարտությունը վիրավորած էի անգիտակցաբար, և բարեկամներու միջոցավ սպառնացեր էր դատ բանալ ինձի դեմ, իր ներքին կյանքով զբաղելուս համար:

Մամուռյանի հոբելյանին Գարեգին Բաբազյան անցողակի քանի մը տողերով փափագ կը հայտներ Ոսկանի ալ հոբելյանը կատարելու, եթե միայն ինքը զար մեզի: Անկե ետք չեմ հիշեր, որ տող մը գրված ըլլա: Անցյալները Իզմիրի ծերունի և մշտառույգ երկու զավակները՝ Գարեգին Բաբազյան ու Գալուստ Մարկոսֆ հանգանակության ելան ու մոտ քառասուն ոսկի հավաքեցին: Ոսկան մերժեց ընդունիլ, ինչպես մինչև հիմա մերժած էր այն դրամները, զորս իր քրտինքով չէր շահած:

... Իր աշակերտ-բարեկամը Գևորգ Պուպլի խոսեցավ դամբանականը, արցունքոտ ու ցավագին:

Ծանոթ. ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԻ կյանքին ու գործերուն վրա լիակատար գաղափար մը տվող գեղեցիկ հոդված մը ստացած ենք Իզմիրեն, մեր աշխատակից ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ-ե, որուն դիմում ըրած էինք այդ նպատակով»:

Անդ (վերջին էջում)

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԻ հիշատակին հոգեհանգստյան պաշտոն կատարվեր է Իզմիրի մեջ, Տ. Մելքիսեդեկ սրբազանի նախագահությամբ: Հատկապես կազմված հանձնաժողով մը հանգանակության ձեռնարկած է, որին արդյունքով շիրիմ մը պիտի կառուցվի ողբացյալ հրապարակագրին գերեզմանին վրա, և անոր թողած անտիպ ձեռագիրները պիտի հրատարակվին առանձին հատորով մը:

1901 թ., հունիսի 30, N 26

Ստեփան Ոսկանյանի կյանքեն

«1865-ի աշնան եղանակին Ստեփան Ոսկան Բարիզե կվերադառնար իր ծննդավայրը, Իզմիր, հոն ազգային երկսեռ վարժարաններու ընդհանուր տեսչությունը ստանձնելու: Քառասուն տարեկան էր, բայց այնչափ առողջ ու վառվռուն, որ հազիվ երեսուն տարի կու տային անոր:

Այդ հասակին հույզերովը, հրապույրներովը, երազներովը սնած էր և ստուգիվ երջանիկ կրնար համարվիլ: Եվ ինչո՞ւ երջանիկ չըլլար, երբ ֆիզիկական, բարոյական և մտավորական ձիրքերով օժտված՝ Սորբոնի և Քոլեժ դը Ֆրանսի նման բարձրագույն դպրոցներու մեջ ուներ իբրև ուսուցիչ նախ Վիքթոր Կուզենի և հետո Ժյուլ Սիմոնի նման իմաստակներ, և իբրև բարեկամ՝ Էդմոն Աբույի և Լեոն Գամբետտայի պես մեծ գրագետներ ու հռետորներ: Այս վերջիններու արժեքը ունեցող բարեկամներու հետ ՔԱՖԵ ԲՐՈՔՈԲ-ը կը հաճախեր, որ ժամանակին գրագետներուն և մեծագույն լրագրապետներուն ժամադրավայրն էր: Մինչև իսկ Լեոն Գամբետտան, այսինքն՝ 1865-ի փաստաբանը, այն աստիճան կը համակրեր մեր քաղաքացիին, որ երբան Իզմիր կը վերադառնար, մինչև երկաթուղիի կայարանը կ'ընկերանար անոր բարի ճանապարհորդություն մաղթելու և հետին բարևը տալու համար:

Ահա այս պայմաններուն տակ կը վերադառնար իր մայրենի քաղաքը՝ հայ մանկտվույն դաստիարակության նվիրական գործը ի կատար հանելու, համակերպելով այդ մասին ՈՒսումնասեր ընկերության փափազին:

Ստեփան Ոսկան Բարիզ գտնված ժամանակ՝ արդեն Ֆրանսայի երկրորդ կայսրության հասարակաց կրթության պաշտոնյային՝ Վիքտոր Տյուրյույիի (Victor Dury) հաստատած դպրոցական մեթոդներուն քաջ տեղյակ էր:

Ստեփան Ոսկան մոտեն ուսումնասիրելով այդ դպրոցական նոր դրությունները, պատրաստված էր իր նոր պաշտոնին: Ամեն անոնք, որ Իզմիրի Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարաններու 1865-1866 տարվան շրջանները լավ և անաչառ դատողությամբ քննած են, պիտի համաձայնեին ինձի հետ, խոստովանելու, որ այդ տարիներուն մեջ հաստատված մեթոտը լավագույն մեթոտն էր մեր մանկտվույն համար, և թե իրավագիտությունը և Ֆրեոպելյան դրությունները մեր մեջ ճանչցվելե առաջ՝ Ստեփան Ոսկան ինքնաբերաբար զանոնք ըմբռնած և մասամբ հաստատած էր Իզմիրի վարժարաններուն մեջ:

Ստեփան Ոսկան վարժարաններու վիճակը և տրված դասերը նկատողության առնելով՝ համոզվեցավ, որ այս դպրոցները ավելի վարդապետացու, քահանայացու պատրաստող դպրոցներու վիճակին հասած էին, մինչդեռ Իզմիրի պես վաճառաշահ քաղաքի մը մեջ ավելի վաճառական, վաճառատան գրագիր և արհեստավոր պատրաստելու է, կըսեր: Եվ ճիշտ այդ նպատակին ծառայող հատուկ ԲՐՈԿՐԱՄ մը շինեց»:

(Հիշում է Ոսկանի մանկավարժական մեթոդը)

«... Այդ երկու տարվան դպրոցական շրջանը մանկտվույն համար արդյունավոր եղավ ամեն կերպով: Հոս տեղ կրնայի հիշել քանի մը Զմյուռնիացի հայ անձնավորությանց անուններ, որոնք նաև այդ երկու տարվան մեջ Ստեփան Ոսկանի աշակերտելով չափազանց օգտված են անկե և հաջողած են այսօր Իզմիրի ընկերության և առևտրական ասպարեզին մեջ լավ դիրք գրավելու, բայց չեմ ուզեր հոս իրենց համեստություննին վիրավորել:

Այլ ի՞նչ օգուտ, մեր մեջ դպրոցական ամենեն ընտիր և առաջադեմ ձեռնարկները, ինչպես էր ՈՒսումնասեր ընկերության ձեռնարկը, չեն հաջողիր: Ստեփան Ոսկանի հաստատած դպրոցական մեթոտը չկրցավ տոկալ կարգ մը Իզմիրցի ազգայիններու ստորին մեքենայությանց և բուռն ու

անիմաստ պահանջումներուն առջև, որոնք պատիվ չէին բերեր իրենց հեղինակներուն: Ստեփան Ոսկան ստիպվեցավ հրաժարելու, բայց անիրավ հարձակումներե և զրպարտություններե այնչափ զզված էր, որ ա՛լ ուսուցչական գործով երբեք չուզեց զբաղիլ և ապրուստը ճարելու համար ստիպվեցավ ԼԱ-ՌԵՖՈՐՄ անուն ֆրանսերեն լրագիրը հրատարակելու, զոր կը խմբագրեր այնչափ լավ, որ ամբողջ Իզմիրի ֆրանսիական գաղթականության զարմանքը և հարգանքը գրաված էր:

Ստեփան Ոսկան, որ 76 տարեկան մեռավ, իր առողջությունը անվթար պահելու համար օրը հինգ քիլոմեթռ կանոնավորապես կը քալեր, նախընտրելով ծառաստանները և դալարավետ տեղերը:

... Ստեփան Ոսկան գիտնական մըն էր, բառին կատարյալ նշանակությամբը, բայց գիտությանց մեջ ավելի կը սիրեր բուսաբանությունը: ՈՒրեմն այդ ճյուղը մշակելու և այդ հրապույրը վայելելու նպատակավ է, որ Ստեփան Ոսկան չէր դադրեր ծաղիկները և բույսերը սիրելե և զննելե և այդ հրապույրին ներքև գիտության նվիրական և անզիջելի հուրը վառ կը մնար հոգվույն մեջ, և մանկավարժության խնդիրը միշտ ներկա էր իր մտքին մեջ և իր ճոխ, իմաստալի խոսակցության առարկան:

... Ամուրի էր և խնամող մը չուներ:

Եռեսունը հինգ տարի առաջ, – կըսեր, – Արակոզի, Պիյոյի նման մեծ գիտուններ, որոնց հետ խոսելու պատիվը ուներ, մթնոլորտի մեջ ելեքտրական վետվետումը անկարելի գտնելով չէին հավատար անոնց, բայց այսօր գիտությունը հաստատեց անոնց գոյությունը ապացույցներ տալով, ինչպես է առանց թելի հեռագիրը, որ առայժմ շուրջ 160 մղոն հեռավորությամբ հաղորդակցություն հաստատած է:

Եվ ես ապշած կը մնայի այս մեծ մարդուն առջև, որ աղքատութենե, բաղդին անխնա հարվածներե, անհատական կյանքի այլևայլ դժբախտություններե վերջը մահվան դուռը իսկ հասած, իր բեղմնավոր միտքը կը բանար ամեն նոր և հառաջադիմական տեսիլներու, երբեմն դեպի գիտության բարձրագույն հորիզոնները և շրջանները սավառնելով»:

ԳԵՈՐԳ ՊՈՒՊԼԻ

1901 թ., օգոստոս, N 31

Մանկության ապազան

« «Ստեփան Ոսկանյանի կյանքեն» վերնագրով հոդվածը արդեն գրած և հանձնած էի ՄԱՍԻՍԻՆ, երբ Բարիզի ԼԸ-ԹԱՆ լրագրին 5 հուլիսի թիվը ձեռքս անցավ»:

Ֆրանսիայի մանկավարժ Ալֆրեդ Ֆույեն դաստիարակության համար առաջարկում է այն մեթոդները, որոնք տարիներ առաջ կիրառել էր Ոսկանյանը Իզմիրում: Խոսվում է Ոսկանյանի մանկավարժական մեթոդի մասին:

ԳԵՈՐԳ ՊՈՒՊԼԻ

1901 թ., հոկտեմբեր, N 41

<u>Հարություն փաշա Տատյան</u>

Տատյանք բնիկ Ակնեցի են, և Հարություն փաշայի մեծ հայրը՝ Տատ Առաքել ամիրան, որ 1780-ին Ակնեն Կ. Պոլիս եկած ու 15 տարի ետքը արքունի վառոդապետ կարգված էր, ուսումնասեր անձի մը համբավը թողած է: Իր որդին՝ Հովհաննես Պեյ Տատյան, նույնպես արքունի վառոդապետ, ունեցած է չորս մանչ և երեք աղջիկ զավակ, որոնցմե Հարություն-Գարեգին (ապագա փաշան), 1830-ին ծնած է Այ-Սթեֆանոսի մեջ:

Հարություն Գարեգին ուշիմ պատանի մըն էր, և պահ մը հորենական տանը մեջ դաստիարակվելե ետքը՝ 14 տարեկան հասակին մեջ Բարիզ ղրկվեցավ, ուր Սենդ-Պարպ գոլեժին մեջ ավարտեց իր միջնակարգ ուսումները: Հարություն Գարեգին Տատյան, որ ետքեն դիվանագիտական ասպարեզին մեջ անուն հանեց, նախապես այդ ասպարեզին համար պատրաստված չէր, և ավելի հաջողակ կը հանդիսանար գրականության մեջ, միևնույն ժամանակ հակում ցուցնելով պատմական, քաղաքական, տնտեսագիտական և գանձային ծանոթություններու: Չորս տարվան շրջանե մը ետքը Պոլիս վերադառնալով, ամուսնացավ Ճեզրայիրցի Մկրտիչ ամիրայի քեռորդուն՝ օր. Տիրուհի Թագթաքյանի հետ: Հարություն փաշա և տիկին Տատյան երեք զավակ ունեցած են. Իսկուհի, որ 13 տարեկան մեռած է, տիկին Եվգինե Նազզաշյան (առաջին թարգմանուհի Կայսերական կանանոցին) և Տիգրան Պեյ՝ անդամ պաշտոնեից ընկերության հանձնաժողովին:

1902 թ., հունվարի 5, N 1

... Իզմիրի մեջ կը մեռնին Մատթեոս Մամուռյան (2 հունվար), Ստեփան Ոսկանյան (23 փետրվար), Հայրապետ Սավալանյան և Կարապետ Տետեյան: Պոլիս՝ հողին կու տա տիկին Սրբուհի Տյուսաբ փաշա (3 հունվար), Կարապետ Ոսկյան (12 հունիս):

1902 թ., մարտի 2, N 9

Հյուգոյի հարյուրամյակի տոնակատարությունը

1902 թ., ապրիլ, N 17

<u>Շաբթվան կյանքը</u>

... Իզմիրի Գթության Տունին՝ ազգային հիվանդանոցին հարյուրամյա հոբելյանը մեկ կողմեն, և անզուգական գրագետ Ստեփան Ոսկանի մահարձանին բացումին հանդեսը մյուս կողմեն, միաժամանակ կերպով, այն տեսակ հազվագյուտ ձեռնարկները եղան Իզմիրցիներուն, որոնց հանդեպ հրճվանքե տարբեր զգացում մը չունենար մարդ ընդհանրապես:

... Անտարբերության նույն ցուրտ շրջանակովը չպարուրվեցավ նաև ողբացյալ գրագետը, Ստեփան Ոսկան, իր կենդանությանը, որուն աղեկ որ մահարձան մը կանգնելու չափ զութ ունեցան Իզմիրցիները: Եթե սակայն չըլլային իրեն համակրողները: Օ՜հ, ատիկա մտածել մի՛ ուզեք: «Գնա մեռիր, եկուր սիրեմ»-ին խոսուն խորհրդանշանն է ՌԵՖՈՐՄԻ անվանի խմբագիրը մեզի համար:

Ռիզվածին պես կրնան մեկնել անոր անխախտ քենը, տարիներով իր կուրծքին տակ սնուցած բուն ատելությունը իրեններուն դեմ, բայց անոնք, որ աններող խստությունով մը կը մեկնեն իր այս արարքը, թող ընդունին, որ Ոսկանը դատապարտեցին քենոտելու համար, ու հաստատուն նկարագիրով այդ մարդը անոնցմէ չէր, որ երկու օր ետքը տղու պես կը փոխվին։ Կենդանությանը ատեն իրեն ցույց տրված անգութ անտարբերութենեն ետքը, հիմա իր գերեզմանին վրա, խումբ մը համակրողներու սարքած այդ հանդեսը, գոնե պստիկ մխիթարություն մըն է իրեն, և ամենեն գեղեցիկ գործը, որ կրնար ըլլալ մահվանեն ետքը անոր՝ որուն հիշատակը իր ԱՐԵՎԵԼՔՈՎ և ԱՐԵՎՄՈՒՏՔՈՎ չմեռնիր երբեք։

ՍԴԵԼԼԱ

Անդ –

<u>Ստեփան Ոսկանի դամբարանին առջև</u>

Ստեփան Ոսկանի մահարձանին բացման հանդեսը տեղի ունեցավ երեկ։ Որչափ որ կը հիշեմ՝ առաջին անգամ ըլլալով թրքահայերուն մեջ կը կատարվի այսօրինակ հանդես մը, ինչ որ անշուշտ հոբելյաններու սրտապնդող օրինակներեն հետո, մխիթարական և հուսատու սկզբնավորումն է գրական աշխարհին համար։ Վերջապես մեր ժողովուրդը սկսած է քաջալերանքի կաթիլներ կաթեցնել իր գրչի արժանավոր աշխատավորներուն վրա. մաղթենք, որ այդ կաթիլները խորանան։

Իրապես գովելի է այս նոր երևույթը, և պատիվ կը բերե զայն հղացողներուն, որոնք հանգուցյալին բարեկամներեն հետևյալներն են. Տեարք Գալուստ Մարկոսյան, Գ.Յ. Բաբազյան, Գեորգ Պուլլի, Հակոբ Ալփիար և Խոսրով Եփրեմ։ Այս ազնվասիրտ անձերը, նախ՝ փոթորկոտ ու ջանադիր գտնվեցան մահարձանը կանգնելու, հանգանակելով պահանջված գումարը համակիր-բարեկամներու շրջանակի մը մեջ։ Եվ երբ հիմա անոր ավարտումեն ետքը կը ձեռնարկեն ու գլուխ կհանեն իսկույն՝ բացման հանդես մը կատարել, հավատացեք որ գործը ինքնին որչափ ալ պարզ ու դյուրին՝ ունի իր մեջ գաղափարի և զգացումի այնպիսի բարձրություն մը, որ թերևս շատ մը իբրև փայլուն ընդունված գործեր անոր չեն հասնիր։

... Երփներանգ ծաղիկներով հյուսված Ս. Ո. տառերը, որոնք երեկ դրված էին անոր ձյունեղեն գերեզմանաքարին վրա, հոն զամված էին կարծես իրենց թարմ ու հոտավետ հանգամանքներով ցուրտ շիրմին կենդանություն բերելու քիչ մը, ու անոր շուրջ խմբված բարեկամները իրենց բաբախող սրտերով եկել էին ցույց տալ թե հողին խիտ և թանձր վարագույրը չէ կարող մոռացության գոգը տանիլ ինչ որ սիրված է, և ինչ որ սահմանված է ապրելու՝ գեթ սրտերու մեջ։

Մահարձանը օրհնելու արարողությունը ավարտած էր արդեն, երբ Պ. Գարեգին Բաբազյան խոսք առավ և զգայուն շեշտով կարդաց դամբանական մը, որով կը դրվատեր Ոսկանի գրական ու անհատական արժանիքները։ Հետո ֆրանսիացի ուսուցիչ մը Mr. T. B. Heroguet, որ արդի «La Reforme»-ի մեջ խմբագրականներ կը գրե, կարդաց, ինքն իսկ շատ հուզված, – ազդեցիկ դամբանական մը. Ոսկանի՝ ֆրանսերեն լեզուին համար ունեցած սերը մատնանշեց, և անոր հմտությունը գովեց, երևան հանելով մանավանդ հանգուցյալին մտավորական բարձր կարողությունները։ Աստ հաջորդեց Պր. Բիթաքիսի ճառը – Բիթաքիս ծանոթ դեմք մըն է հույներու մեջ իբրև հմուտ ու խոհուն անձնավորություն մը և իբրև գրող, – որ պերճախոս ատենաբանի մը ամբողջ հմայքով արտասանեց հակիրճ ու իմաստալից դամբանական մը, որու խոսքերը խորապես

ազդեցին ժողովուրդին վրա։ Ամենեն վերջը Պ. Պերճ Բարսեղյան հանգուցյալ գրագետին ոտանավորներեն հատ մը կարդաց, որ պարագային համար բան մըն էր։

Հանդեսը պարզ անցավ, պատկառոտ բան մը ուներ սակայն իր մեջ, որովհետև մտքի մեծ աշխատավորի մը հիշատակին նվիրագործումը եղավ։

... ապահովաբար կարող գրիչներ սիրուն գործ մը կատարած կը ըլլան՝ անոր գրական գործունեության մասին խղճամիտ ուսումնասիրություն մը պատրաստելով, երբ մանավանդ լույս տեսնե հանգուցյալ գրագետին բանաստեղծություններու մեկ հատորը, որուն տպագրության հոգը ստանձնած են նորեն իր համակիր բարեկամները։

Ոսկան, եթե նշանավոր եղավ իբրև գրագետ ու հրապարակագիր, և եթե շատ բան կը պարտի մեր գրականությունը անոր, ասիկա պատճառ մը չէ, որ իր մեկ խոշոր թերությունը չի մատնանշենք անգամ մըն ալ, եթե ոչ ուրիշ բանի՝ գեթ անոր աչքառու տգեղությունը շեշտելով, օգտվելու ու անկե դաս առնելու համար։

Ոսկան ինչո՞ւ քեն պահեց ազգին դեմ, և ի՞նչ քեն էր այդ, որ երեսուն տարիներ տևեց մինչև իր վերջին շունչը, իր վերջին կայանը։ Եվ որպեսզի այլնայլ առարկություններու տեղի չի տան այս տողերը, կանխավ ըսենք և ընդունինք, թե իրական ու շոշափելի պատճառներ գոյություն ունեցած ըլլան զինքը մեզմե պաղեցնելու, ընդունինք, թե մեր ազգայիններու կողմե անիրավություններ եղած ըլլան իրեն, բայց աս ամենեն ետքը կը համարձակինք հարցնելու վերստին, թե՝ատոնք բավական զորավոր շարժառիթնե՞ր էին զինքը քենցընելու, ո՛չ, որովհետևայս մարդը, որ իր ազգին գրականության ու կրթության համար կաշխատի, պետք է ունենա մեծ հոգի մը, լայն սիրտ մը, ներելու նույնիսկ ամենեն աներևակայելի աղտոտություններու։ Մեր մեջ ո՞ր գրողը չէ բախած նույն այդ անիրավ պարսավանքներուն. ամենքն ալ գրեթե. և ի՞նչ պիտի ըլլար մեր գրականության վիճակը, եթե ամեն տաղանդավոր գրող անոր պես կղզիացյալ դիրք մը բռներ։ Եթե Ոսկանի արժանիքները գնահատելու վիճակի մեջ չէր մեր հասարակությունը, ահա պարագա մը, զոր իրեն կը վերաբերեր պարզել, հաստատել, հարատևելով իր գործին մեջ։

Ծնողքը կը նետե՞ մեկ կողմ իր զավակը որովհետև անառակ է, կը վռնտե՞, կ'անտեսե՞, որովհետև ապերախտ է, ընդհակառակը կը զգուշացնե, կ'աշխատի ուղիղը սորվեցնել։ Եվ մի՞թե կրթական ու գրական մարդիկները ծնողքը չեն իրենց պատկանած հասարակության ու ծնողքներու հատուկ մեծ հոգին պետք չե՞ն կրել. ահա ինչ որ պակսած է Ոսկանին. սրտի լայնություն չէ ունեցած բնավ, հոս է ցավալի կետը, ուր կը պզտիկնա մեծ մարդը, որուն բեղմնավոր ուղեղեն շատ բաներ պիտի կարողանային քաղել, եթե մեզ հետ սրդողած չըլլար, և ինքը ունենալով իր մեջ շատ մը օգտակար տարրեր, չի զլանար մեզի։

Գրականությամբ ու մերինին նման ժողովուրդի մը կրթական գործով զբաղվողները պետք են աշխատիլ ներքին գոհունակության մը համար, և սրտի ու հոգիի անեզր մեծությամբ մը պետք են ներել ամեն բանի ու ձգտիլ դեպի իրենց բարի նպատակը։

... Ոսկան, սակայն, կարճ ժամանակի մը մեջ կատարած է անանկ գեղեցիկ գործ մը, որ ատիկա բավ պիտի ըլլա իր պատկառելի անունը ապրեցնելու ու մեր գրական համեստուկ պատմության մեջ, ամենեն փայլուն տեղերեն մեկը գրավելու։ Ոսկանի ու իր նմաններուն է, որ կը պարտինք մեր արդի աշխարհաբարը։

Իզմիր 16/29 ապրիլ

ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԵՏՅԱՆ

Անդ

Ոսկանի հիշատակին

Խմբ. - Ղուկաս էֆ. Վարպետյանի հոդվածեն ետքը, երկրորդ հոդված մըն ալ ստացանք, դարձյալ Իզմիրեն Գևորգ էֆ. Պուպլիե, որ կը նկարագրե Ստեփան Ոսկանի դամբարանին առջև կատարված հանդեսը: Կը քաղենք հոդվածի վերջին մասը:

«Ներելի միայն թող ըլլա մեզ ըսել, որ այս հանդեսը, թեև անազան՝ բայց դարձյալ Ստեփան Ոսկանի հանդեպ մեր հասարակության երախտագիտության զգացմանց արտահայտությունը, նվիրական պարտքի մը վճարումը կրնա նկատվիլ: Ազնիվ սիրտերու համար այդ ալ սփոփիչ երևույթ մըն է:

Ստեփան Ոսկանի գրչեն ելած տապանագիր մը տեսանք Ս. Ստեփաննոս եկեղեցվո գերեզմանատան մեջ, բարեհիշատակ տիկին Եղիսաբեթ Սպարթալյանի շիրիմին վրա:

Կայանիս ետև
ՈՒր կ'երևի մութ
Կը տեսնեմ արեվ
Եւ ուղի անխութ:

ՈՒնիմ հույս սիրո հետք,
Կը թողում ինձմե ետք
Չեմ վախնար այս փոսե,
Գութ արտսուք կը հոսե:

Հետին կայան է այս իմ
Սարսուռ կու տա միշտ շիրիմ
Այն սիրտերու, որոնց քով
Հույս չփայլիր հավատքով:

Ստեփան Ոսկան այս տողերը տապանի մը ցուրտ մարմարիոնին հատկացուցած չէր: Յոթանասունվեց տարեկան մեռավ, բայց իր մահճակալին մեջ ալ մահվան մոտեցած օրերը իր ընդարձակ միտքը ընդ միշտ բաց էր ամենեն գեղեցիկ գաղափարներու և սիրտը կը տրոփեր ազնիվ զգացումներով: Կը մեռներ, մահվանեն վերջը անմահության արևը և անխութ ուղի մը տեսնելու անդրդվելի հավատքով:

Բազմությունը, որ ներկա էր այդ տխուր՝ միանգամայն սրտառուչ հանդեսին, կարծես թե այս հավատքով համակված էր, և գերեզմանատունեն ելան գացին լավագույն զգացումներով քան թե իրենց եկած ժամանակը, տանելով իրենց հետ սփոփիչ հիշատակ մը մեռյալներու, այսինքն՝ համեմատաբար երջանիկ մեռյալներու:

Գեղեցիկ հանդես մըն էր ատիկա: Գեղեցիկ դամբարան մըն էր կանգնվածը, մեր մեծ բարեկամի հիշատակին, այլ ժամանակին հետ այդ մահարձաններն ալ՝ թեև մարմարյա ըլլան, կ'անցնին, մինչդեռ Ստեփան Ոսկան իր անմոռանալի գործովը երախտագետ սիրտերու մեջ բարոյական հիշատակարաններ կանգնած է զորս նույն իսկ ժամանակը հարգելու պարտավոր է:

Գ. ՊՈՒՊԼԻ»

1902 թ., մայիսի 4, N 18

Ազդարարվում է Պողոս Պառնասյանի մահը։

1902 թ., մայիսի 11, N 19

Պառնաս Պողոս Էֆենդի

«Մահը ծանուցվեց այս թերթին մեջ, որուն հրատարակման առաջին տարիներուն կանոնավոր աշխատակից մը, խմբագիր մը եղած էր երկար ատեն։

Իր անունը, որ երեսունըհինգ տարի անբաժան էր տեղական մամուլեն՝ Տպագրական տեսչության մեջ իր ունեցած պաշտոնին բերումով, անկե առաջ ալ ու այդ երկար շրջանի սկիզբներն ալ կցված մնաց մամուլին, իբրև հրապարակագիր։

Խմբագրապետ ՍԷՐ հանդեսին, զոր 1864 ապրիլեն սկսելով, երեք տարի վարած է Մատաթիա Գարագաշյանին հետ, ու աշխատակից օրաթերթ ՄԱՍԻՍ-ին, ուր քաղաքական տեսություններ, տնտեսական ու բանասիրական հոդվածներ գրած է 1870-են 1880, Պառնաս էֆենդի 1868-են մինչև 1888 աշխատակցած է նաև Ֆիլիպ էֆենդիի հրատարակած թուրքերեն թերթերուն և ամենեն վերջը ԹԱՐԻԳ-ին, ինչպես նաև Ահմեդ Միթհատ էֆենդիի տնօրինությամբ հրատարակվող ՕՍՄԱՆԼԻ ֆրանսերեն քաղաքական կիսաշաբաթաթերթին, – ինչ որ ցույց կուտա իր լեզվական հմտությունը ու գրելու կարողությունը որքան հայերենի, նույնքան և օսմաներենի ու ֆրանսերենի մեջ, որոնց վրա ավելցուց ետքեն անգլիերենի ու գերմաներենի ալ հմտությունը։

... Կարկառուն գիծը իր կյանքին, իր գրչի մեծ գործունեությունը եղած է, դուլ ու դադար առնել չի գիտցող աշխատասիրություն մը, որ պատանի հասակեն մինչև մահվան շաբաթը շարունակվեցավ, գրեթե կես դար»։

Տպագրական տեսչության մեջ Ա քարտուղար էր։

«Հակադրությամբ մը, զոր չի կրցանք երբեք ըմբռնել, ինք՝ որ ատեն մը գրիչով վիճաբանող մը polemiste մը եղած էր օրագրությանց մեջ, հիմա կը խորշեր վիճաբանութենե, ու գաղափարի մը արտահայտության անհրաժեշտ պարագային իսկ՝ ըսելու ամենեն կարճ ու կտրուկ ձևը կ'ընտրեր»։

Մռայլ մարդ էր, սակավաժպիտ, կորցրել էր կնոջն ու մեկ զավակին։

«Ազգային շրջանակի մեջ, – ՍԵՐԻ ու ՄԱՍԻՍԻ խմբագրապետություններեն զատ, – վարած է ատենոք ժողովրդականություն և պահ մըն ալ ատենապետություն Ուսումնական խորհուրդին, իբր երեսուն տարի առաջ։ Եվ ինչպես գրվեցավ, անվանական պաշտոնավարություն մը չէ եղած իր ատենապետությունը խմբագրած ըլլալով տեղեկագիրներ, որոնք ազգային վարժարաններուն ու դաստիարակության վրա ընդհանրապես՝ գիտակից ու շահեկան տեղեկություններ կը պարունակեն։

... Պառնաս էֆենդին իր մահվամբը կը թողու ինքնօգությամբ առաջադիմողի անուն մը, որ որքան պզտիկ ու համեստ էր սկզբնավորությունը Սեբաստացիի պատանիին, որ 1860-ին Պոլիս կուգար, ուսումնք սորվելու և «մարդ ըլլալու» իտեալով, որուն հասավ կատարելապես»։

Տ. Ա.

1902 թ., հունիս, N 24

ՌԻթուջյան Կարապետ էֆենտիի հետևյալ թարգմանությունները կը գտնվին մայրաքաղաքիս գրավաճառներուն քով.

Թափառական հրեա - 4 հատոր

Սկզբունք քաղ. տնտեսության - 1 հ.

Կարմիր մարդոց երդումը - 2 հ.

Ընտանեզուրկ - 2 հ.

Փարիզի ամուսնությունները – 1 հ.

Արվարձանին տղան – 3 հ.

Հանրակուռքին ոճիրը – 1 հ.

Ընտանեկան գաղտնիքներ – 3 հ.

1902 թ., հուլիսի 6, N 27

««Գիսակի» հիշատակին» հոդվածը: «Գիսակ» - Ա. Պետիկյան (բողոքական էր)

«Հարյուրամյակ մը» (նշում է, որ հայ գրողներից շատերի գործերը Դյումայի թույլ կրկնություններն են): «Միևնույն բանը նաև Մամուռյանի կիսատ մնացած ծանոթ մեկ վեպին համար, – հապճեպ, անկատար, արվեստե բոլորովին զուրկ գործ մը, որ ամեն կերպով անարժան է իր ուժեղ ու հոյակապ տաղանդին և զոր չեմ գիտեր թե ինչու իր գլուխգործոցը դավանելու սխալը ըրած են ու կ'ընեն: Տարբերությունը սա է միայն, որ Մամուռյանի գործին մեջ Տյումայի ընթերցումներուն ազդեցությունը մասամբ չեզոքացած է «Այվընեցու» ավելի կորովի ազդեցությամբ: ...»:

1902 թ., հուլիսի 13, N 28

«Վեր. Ա. Պետիկյան» հուշապատումը: Առաքել Պետիկյան = Գիսակ

1902 թ., օգոստոսի 10, N 32

«Ծուռ ըմբռնում»: Հեղ՝ ՄԵՐՍԷԴԷՍ: Խոսում է ֆրանսիական գրականության ազդեցության մասին: Որ հայ պատանիները գնում էին Ֆրանսիա սովորելու և ինչու: Գալով՝ ֆրանսերեն թարգմանություններ էին անում:

1902 թ., սեպտեմբեր, N 37

«Եվ 1840 թ. են սկսյալ, Զմյուռնիո և Կ. Պոլսո մեջ աշխարհաբար գրվիլ սկսված է՝ անշուշտ որոշ քերականական օրենքներով, որոնք դժբախտաբար գրողե գրող կը տարբերին: Այս անտեղյակության ալ առաջքը առնելու համար ջանքեր եղած են լուսամիտ անձերու ձեռքով:

Այդ ջանքերուն առաջին արդյունքն է տորք. Նահապետ Ռուսինյանի ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ (1853 թ.), որ ամբողջ տասներեք տարիներ կը կանխե Այտընյանը:

... Ինչ որ ուրիշ փորձած էին, Այտընյան կատարելագործեց, կամ ավելի ճիշտ է ըսել՝ ճշմարիտ բանասիրության հայեցակետով մը քննեց ու արձանագրեց:

... Ինչ որ խորապես ազդած էր Այտընյանի վրա և պատճառ եղած, որ աշխարհաբար քերականություն մը, – իբր դասագիրք, – գրելու հետամուտ եղած ըլլալ պետք է ըսել, թե ատիկա իր Իզմիրի մեջ կրած ազդեցությունն է:

1854-են 1860 Իզմիրի Վիեննական Մխիթարյանց վարժարանի վարիչ է և ականատես վկան այն ընդունելության, զոր աշխարհաբարը կը գտներ ժողովրդին մեջ: Իզմիր այդ միջոցին Կ. Պոլիսը կանխած է, վասն զի հոն արդեն 1840-են սկսյալ ԱՐՇԱԼՈՅՍ կը հրատարակվի կոկիկ աշխարհաբարով մը, և նույն իսկ Այտընյան՝ հոն ապրած օրերուն աշխարհաբարի մեծ վարպետներեն մեկուն՝ Ոսկանի ձեռքով առաջին անգամ աշխարհաբարը իբր դաս հանդիսավոր մուտք մը կ'ընե հայ վարժարանե մը՝ Իզմիրի Ս. Մեսրոպյանեն ներս, վտարմամբ գրաբարին որ առաջին անգամ հալածանքի կ'ենթարկվի: Այս պարագաները եթե ոչ ուղղակի, գեթ անուղղակի կերպով կրնան ազդած ըլլալ Այտընյանի վրա, որն իբրև Մխիթարյան՝ օգտակար ըլլալու մտադրությամբ սկսավ ուսումնասիրել այս նոր հայերենը, անոր քերականությունը իբրև դպրոցական դասագիրք պատրաստելու համար»:

Ռուսինյանի «ուղղախոսությունը» վավերացրեց ՈՒսումնական խորհուրդը:

1902 թ., հոկտեմբերի 26, N 43

Իզմիրի լրագիրները կը ծանուցանեն, թե առաջնորդ Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս հրաժարական տված է՝ անձնական տկարության պատճառով, և թե Իզմիրի հայերը կը փափագին իբր առաջնորդական ընտրելի ներկայացնել Երեցյան տ. Գևորգ եպիսկոպոսը:

1902 թ., դեկտեմբեր 21, N 51

«Ոստանիկ Տեր-Մարգարյան» հոդվածաշարը:

1903 թ., մարտ 22, N 12

«<u>Հովհաննես-Չամուռճյան-Տերոյենց</u>»

Արմաշում եղել է Ստեփաննոս Աղավնու և Պողոս Թագթաքյանի աշակերտը:

«Մինչև 1841, թե՛ իբրև վարիչ (reteur), թե իբրև բարձրագույն դասախոս ու մատենագիր պաշտոնավարեց Սկյուտարի ճեմարանին մեջ և հասուց երեք-չորս նշանավոր աշակերտներ, Կարապետ ՈՒթուջյան, Ստեփան փաշա Արսլանյան, և կողմնակի, Խ.Պ.Միսաքյան, որում բանասիրական բերմանց կ'առաջնորդեր բաբունաբար…»:

1903 թ., մայիսի 31, N 22

«<u>Գեորգ Պուպլի</u>»

«Փաստաբան, հանքային շահագործմանց ձեռնարկու, և հիմակ՝ գլխավոր խմբագիրը Իզմիրի ԼԱ-ՌԵՖՈՐՄ ֆրանսերեն թերթին, վարելով հանդերձ իր մյուս գործերը:

Հայ գրականության ու լրագրության մեջ հին անուն մը ունի Գ. Պուպլի, որուն հոդվածները կ'ըմբոշխնվեին ու գրամարտերը հետաքրքրություն կը շարժեին այն թվականներեն իսկ:… Իր գրիչն էլ իր անձին պես չէ ծերացած սակայն, և եթե մեր պարբերականներուն մեջ պատահական երևումներ միայն կունենա, ԼԱ ՌԵՖՈՐՄԻ մեջ կանոնավորապես սկսած է գրել, լավ ֆրանսերենով մը, կուռ խմբագրականներ, օրվան հարցերու վրա:

… Իր նախասիրած նյութերը ըլլալով՝ մանուկներու կրթությունը, ամուսնական կյանքի երջանկություն, առտնին հարցեր, բարեգործություն: Իր խոսակցությանց մեջ ալ, Իզմիրցի փաստաբան-հրապարակագիրը նույն սկզբունքները կը քարոզե և նույն ԹԵԶերը կը պաշտպանե, ինչ որ իր հոդվածներով: Զինքը գործի ասպարեզին վրա մոտեն տեսնողներ կը պատմեն, թե հև ի հև աշխատության շարք մըն է իր կյանքը, օր մը քաղքին մեջ, իր գրասեղանին առջև, հաջորդ օրը դեպի գավառին ներսերը, լեռներու ստորոտը, կիրճերուն մեջ, հանքերու շուրջը»:

1903 թ., հուլիսի 19, N 23, N 33

«<u>Հանգիստ Տ. Մելքիսեդեկ սրբազան Մուրատյանցի</u>»

«Իզմիրի առաջնորդության պաշտոնը, որուն մեջ ամփոփված մնաց Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոս 1877-են մինչև 1888, և երկրորդ անգամ ալ 1898-են մինչև այսօր, անբավական էր, բնականաբար, իրեն նման ուսյալ, կարող և հեղինակավոր եկեղեցականի մը, ի հայտ բերելու իր բոլոր արժանիքը: 1885-ի Կաթողիկոսական ընտրությունը, հայ եկեղեցվո հովվապետական բարձր պաշտոնը նվիրելով Տ. Մելքիսեդեկ Սրբազանին, լայն ասպարեզ մը կը բանար անոր գործունեության և կարողությանը առջև: Բայց երկրորդ ընտրելիին՝ Մակար Սրբազանին վավերացումը, իբրև կաթողիկոս, ընդհանուր հուսախաբության մը մեջտեղ կասեցուց Տ. Մելքիսեդեկ սրբազանը: Այդ թվականեն ի վեր, թեև մարմնով ու սրտով առույգ, …» բայց տխուր էր ու հուսահատված:

Մելքիսեդեկի կտակի շուրջը ծագած քաշքշոցը և Հորոյի քննադատական հոդվածները:

1903 թ., նոյեմբերի 22, N 47

«<u>ՏՏ. Մելքիսեդեկ արքեպիսկոս Մուրատյանց</u>»

Տրված է կենսագրության մի քանի գծերը:

Հեղ.՝ Ռ.ՊԵՐՊԵՐՅԱՆ

1904 թ., փետրվարի 7, N 6

«<u>Մամուլյանի կյանքեն</u>»

«... Մեսրոպյան վարժարանեն Հռիփսիմյանը, և այսպես անընդհատ, երկու դպրոցներն ալ պետք ունեին Շահնուրի սրատես աչքերուն հսկողության: Հետո իրիկվան մասնավոր դասեր ընտանիքներու մեջ, ժամ մը հոս, ժամ մը հոն, վերջապես տենդագին շարժում մը, մաշեցնող հոգնություն մը, որոնց կուրծք կուտար Մամուլյան իր հարատևող հոգիին անսպառ ուժովը»:

«Արևելյան Մամուլում» ստորագրել է «Շահնուր», «Միսակ», «Ասպրամ»:

Ղ. ՎԱՐԴԵՏՅԱՆ

1904 թ., հուլիսի 3, N 27

«<u>Կարապետ Ութուջյանի մահը</u>»

Վախճ. 1904 թ., հունիս 27-ին, կիրակի օրը:

Անդ

<u>Տպավորություններ</u>

(Կ. Ս. Ութուջյանի մահվան առթիվ)

1890-ի Մասիսներում սկսել է գրել իր ինքնակենսագրությունը, և կիսատ է:

Հովհաննես Ալանը գիրք է գրել Ութուջյանի մասին:

1904 թ., հուլիսի 10, N 28

<u>Հետ մահու</u>

Քննադատության կրակի տակ ընկավ նաև Ութուջյանը:

«Ութուջյան ինք կը վարեր օրաթերթ «Մասիսը», բայց ինք հոդված չի գրեր եղեր հոն: Ութուջյան թեև նպաստած էր աշխարհաբարի կանոնավորման ու զտման, բայց իրմե առաջ ուրիշներ արդեն կատարած են եղեր այդ գործը: Ութուջյան թեև շատ մը գեղեցիկ վեպեր թարգմանած էր, բայց թերթին ընթերցողներուն թիվը ավելցընելու համար կ'ընե եղեր:

... Բարեբաղդաբար, ԲԻԶԱՆԴԻՈՆ-ի խմբագրապետը, հրատարակելէ ետքը «Անհայտացող դեմքերու» այդ հինգ հոդվածներուն շարքը, փութաց գրել իր կողմէ «Ի պաշտպանություն ՈՒթուջյան էֆենդիի» խմբագրականը, ուր կը շեշտեր երնցած քննադատության խստությունը և կը ճշտեր Մասիսի հիմնադիր-արտոնատիրոջ օգտաշատ ու արդյունավոր գործունեությունը»:

Տ.Ա.

Անդ

<u>ՈՒթուջյանի հիշատակին</u>

Նախանձախնդիր էր հայոց լեզվին ու նրա մաքրությանը: Թերթի ամենալավ ժամանակները 60-80-ական թվականներն էին, և հայ մտավորականության գրեթե բոլոր խոշոր ներկայացուցիչները թղթակցում էին: Առանձնապես բարձրացավ 1873 թվականին, որը տևեց մինչև 1884 թվականը:

«Իբր թարգմանող կամ հեղինակ՝ Կ.ՈՒթուջյան ոչ նվազ նպաստած է հայերեն մաքուր աշխարհաբարի կազմության ընդհանրացման իր 25-է ավելի ստվարահատոր թարգմանություններով, որոնք նախ իբրև թերթոն տպված են և իբր թերթոն հրատարակված»:

1904 թ., հուլիսի 17, N 29

<u>ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

(Կ.Ս.ՈՒթուջյանի մահվան առթիվ)

«1898-ին, երբ «Մասիսը» իբրև մեծածավալ օրաթերթ սկսավ հրատարակվիլ գրագետներու խումբի մը կողմէ, որուն վարիչն էր Զոհրապ, և հովանին՝ ՈՒթուջյան»: (Զոհրապին շատ էր սիրում)

Տ.Ա.

1904 թ., հուլիսի 24, N 30

<u>Դուրյան Սրբազան առաջնորդ Իզմիրի</u>

«Բերկրությամբ ու անկեղծ հաճույքով կ'արձանագրենք Դուրյան սրբազանի ընտրությունը, իբրև առաջնորդ Իզմիրի: Գավառային ժողովը իր չորեքշաբթի իրիկվան նիստին մեջ, որ գումարված է ատենապետությամբ Ղուկաս էֆ. Եսայանի, միահամուռ քվեով վիճակին առաջնորդ ընտրեր է Դպրեվանքի պատկառելի ու համակրելի Վերատեսուչը:

... Դիտելի էր, որ Դուրյան Սրբազանին անունը ամենեն վերջը հիշվեցավ իբրև առաջնորդական ընտրելի ու ամենեն առաջ անցավ՝ ծանոթ ըլլալով ոչ միայն իր եկեղեցականի արժանիքը, իր խոր հմտությունը, այլ նաև իր վարչական կարողությունը, որով այսքան տարիե ի վեր կը վարե Դպրեվանքին նման կրոնային-կրթական մեծ հաստատություն մը»:

Բանաստեղծություններով թղթակցել է նաև Մասիսին:

1904 թ., դեկտեմբերի 4, N 48

Արմաշ և Իզմիր

Դեկտեմբերի 4-ին Դուրյան սրբազանը մեկնում է իր պաշտոնատեղին՝ Իզմիր:

1905 թ., մարտի 5, N 2

«...Անկէ վերջ սահած երեք ամիսներու միջոցին, Դուրյան Սրբազան, իր պաշտոնին գլուխը անցած՝ առանց աղմուկի, առանց խռսեցնել տալու իր վրա, կը վարէ իր հովվական աշխատությունները, որոնց կը միանա նաև կրթարանն ալ: Իբր քարոզիչ, իբր գրչի տեր ու իբր վարչագետ եկեղեցական, Դուրյան Սրբազան հարմարագույն ընտրելին էր Իզմիրցիներուն համար, որոնք, փայլուն ընդունելություն մը ընելով անոր, այս առթիվ կատարված եկեղեցական հանդեսներեն ու արտասանված բանախոսություններեն ետքը, հիմա, գործի վրա կը տեսնեն զինքը և որչափ ավելի ժամանակ անցնի՝ այնքան ավելի առիթ պիտի ունենան գնահատելու անոր մտավոր կարողություններն ու հոգեկան ձիրքերը»:

1905 թ., ապրիլի 9, N 7

Գրական կենդանագիրներ (Եղիշէ եպիսկ. Դուրյան)

Պոետական-գրական գործունեության բնութագիրն է:

1906 թ., մարտի 1, N 1

«1868-ին Մակար Բարխուդարյանը վարդապետ ձեռնադրված էր Երուսաղեմի մեջ, հանգուցյալ Տ. Մելքիսեդեկ սրբազանի հետ, որուն անբաժան ընկերն էր: 1872-ին այս երկու եկեղեցականները միաբանական խնդրի մը պատճառավ թողուցին Ս. Հակոբյանց վանքն ու միաբանությունը, և Կ. Պոլիս եկան, ուր մտադիր էին վարժարան մը հիմնելու: 1876-ին, երբ Մելքիսեդեկ սրբազան Իզմիրի առաջնորդ ընտրվեցավ, իր հետ տարավ Մակար վարդապետը, որ բավականին տարիներ այնտեղ մնալեն ետքը՝ իբրև քարոզիչ, լուսարար, և պահ մըն ալ տեսուչ հիվանդանոցին, իր ծննդավայրը՝ Ղարապաղ վերադարձավ, բանասիրական ու հնագիտական ուսումնասիրություններով զբաղվելու համար: 1894-ին բարձրացավ եպիսկոպոսության աստիճանի»:

1907 թ., հունվարի 20, N 9, 10, 11, 14

Համեստ կրպակի մը մեջ

(Հիշատակներեւ. «Աշուղը», Յ. Ջինճիրճյան, Հակոբ Ոսկան)

Հայ ուսուցիչներ. «Գևորգ պատվելի Տեր-Հովհաննիսյան, Գրիգոր Փեշտիմալճյան, Պաղտասար պատվելի Պալատու, Խաչատուր վարդապետ Սամաթիո, տիրացու Հարություն վարժապետ, տիրացու Պապա Համբարձում, Թագվոր վարժապետ, Տեր Հովհան Վանանդեցի

քերթող վարժապետ, Ռուբեն Անդրեաս Փափազյան Զմյուռնիո, Տեր Մարգար Վանանդեցի Զմյուռնիո, Մուրատ վարժապետ Նիկոմիդիո, Հովհաննես Շահինյան վանեցի Զմյուռնիո...»: Բոլորի վիճակը շատ ծանր է եղել:

Անդ

<u>Հակոբ Ոսկան</u>

«Դեմք մըն ալ կ'անհետանա մտավորական աշխարհի գործիչներեն, մահովը Հակոբ Ոսկանի, այն ծերունի ուսուցիչը, որ ամբողջ սերունդ մը տեսած է իր դաստիարակչական ասպարեզին մեջ, զբաղելով մտավորական մշակումի գործովը անհամար թիվով ուսանողներու: Այս օրվան սերունդին մեծ մասը կը ճանչնա զինքը և անուշ հիշատակ մը կը պահե իրմե, իբր ուսուցիչ մը, որ միտքի կրթության հետ, հոգիի կրթության հոգն ալ ունի: Բազմաշխատ, արդյունավոր ժրաջան ու կոչումին գիտակցորեն նվիրված այս կրթության մշակը՝ եղած է նաև գրականության աշխատավոր մը, հաջող բանաստեղծ մը, որ գողտրիկ էջեր կը թողու, սիրուն ինքնատպությամբ մը օժտված: Հեղինակն է ինք սրամիտ, իմաստալից առակներու, որոնք յանկուցիչ հղացումի մը և ճարտար արվեստի մը դրոշմը կը կրեն և որոնցմե հիշատակ մը ունի ամեն մարդ միտքին մեջ:

... Հակոբ Ոսկան ատեն մը մեր «Օրացույցներու բանաստեղծն» էր, և շարունակաբար երկար տարիներ զարդարած է ժողովրդական այդ գրքույկները, որոնք կը բացվեին իր մեկ սիրուն բանաստեղծությունով: Հմուտ ֆրանսերենի, իտալերենի ու հայերենի, իր գրականության մեջ ձուլած է ճաշակը երեք լեզուներու արվեստներուն, հաջող արտադրություններով, մինչև իսկ իր ծերունի օրերուն մեջ չկորցնելով հրապույրը և կորովը իր գրիչին»:

1907 թ., փետրվարի 17, N 13

<u>Գրիգոր խան Շամտանճյան</u>

Գրական-հասարակական գործունեության բնութագիրը:

1907 թ., ապրիլի 14, N 21

<u>Ռեթևոս Պերպերյան</u>

Մահախոսական և գրական գործունեության բնութագիրը:

1907 թ., մայիսի 12, N 25

<u>Գրիգոր պատվելի Փեշտիմալճյան</u>

«Գրիգոր Փեշտիմալճյան, բնիկ Պոլսեցի, ծնած է 1773-ին: Իր մանկությանը՝ նախակրթությունը ստացած չէ որ և է նախակրթարանի մեջ, որովհետև այդ ժամանակին ո՛չ հույները և ոչ ալ հայերը նախակրթարաններ ունեին: Օսմանյան մեծազոր ինքնակալներեն

Սուլթան Սելիմ Գ-ի բարեհաճ արտոնությամբ, 1789-ին դպրոցներ բացվեցան Կ.Պոլսո մեջ։ Այս առիթով թերևս ավելորդ չէ հիշել թե՝ մանչերու հանրային առաջին հայ դպրոցը հաստատված է 1790-ին Գում-Գաբու։ Երախտագիտությամբ հիշենք նաև այս առաջին դպրոցին հիմնադիր բարերարը, Միրիճանյան Մկրտիչ ամիրան, զոր հետո ժողովրդին երախտագիտությունը պատվեց ՇՆՈՐՀՔ անվանակոչությամբ։

Փեշտիմալճյանի մանկության ժամանակ՝ հայ մանուկները կուսանեին ՄԱՆԿԱՏՈՒՆԵՐՈՒ, ՎԱՐՊԵՏ-ՏՈՒՏՈՒՆԵՐՈՒ, ԽԱՆԵՐՈՒ, ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ և կամ եկեղեցիներու խուցերուն մեջ։ Պատանի Փեշտիմալճյանն ալ ստացավ իր ուսումը հավանորեն եկեղեցիի մը ԽՈՒՑԻՆ մեջ, աշակերտելով Էջմիածնի միաբան Թեոդորոս սարկավագին»։

Այն ժամանակ ավանդվող առարկաներն էին.

ա) հայերեն, բ) կրոն, գ) գիր, դ) թվաբանություն (թուրքերեն), ե) երգեցողություն

(Տե՛ս՝ «Մասիս» 1893 թ., «Մանկության հիշատակներ»)

1907 թ., մայիսի 19, N 26

Շարադրվում է կաթոլիկ-լուսավորչական դավանաբանական պայքարը. «Հռովմեական հայերու մեջ երկու կուսակցություններ կային ԱԲԲԱՅԱՆՆԵՐԸ և ԳՈԼԵՃՅԱՆՆԵՐԸ»։

1907 թ., մայիսի 26, N 27

«Օրինակի համար Տ. Մեսրոպ քահանա ԱՆՈՒՆՆ չորս սեռ կուտա (արական, իգական, անորոշ և չեզոք)։ Փեշտիմալճյան բոլորովին կը վերցնե անունին սեռը։ Քահանան ԱՆՈՒՆԻ երեք տեսակ կը ճանչնա [Նախատիպ (հիմա արմատ), ածանցյալ և փաղառյալ]։ Փեշտիմալճյան միայն երկուք. (նախատիպ և ածանցյալ)։ Փեշտիմալճյան Տ. Մեսրոպ քահանայի նշանակած 27 տեսակ մակբայները 13-ի իջեցուցած է, 16 տեսակ շաղկապները՝ 12-ի, 10 տեսակ միջարկությունները՝ 6-ի»։

«Այն օրերուն քերականության ուսումը մեծ կարևորություն ստացած էր. ծնողներ հպարտ կը զգային ինքզինքնին՝ երբ իրենց զավակները սկսեին քերականության դաս առնել։ Ընտանեկան համախումբներու մեջ խոսակցության սիրելի նյութերեն մեկն ալ քերականականն էր։ Եթե իրենց մեջ գտնվեին երկու տարբեր կրթարաններու աշակերտներ, անմիջապես հրավեր կը կարդային այդ դեռատի ախոյաններուն՝ որ հանդես բերեն իրենց քերականական բոլոր հմտությունը։ Այս գրական պայքարին մեջ հաղթական աշակերտին հայրը գոհունակ դեմքով գովեստը կը կարդար իր զավակին անզուգական վարպետին ծովացյալ հմտության, և մյուս առավոտ զրեթե միշտ անվրեպ՝ ինքը անձամբ և կամ զավակին ձեռքով իր շնորհակալության ՀՆՉՈՒՆ ապացույցը կուտար քերականագետ ուսուցիչին։ Աշակերտները շատ անգամ իրենց դպրոցին, ուր կուսանեին և վարժապետին, որուն կաշակերտեին, պատիվը բերելու համար, զարմանալի հնարքներու կը դիմեին, օրինակի համար, նոր բառ մը կը կերտեին և երբ մրցման մեջ իրենց հակառակորդը նորակերտ բառին նշանակությունը չգիտնալով չկարենար պատասխանել, դյուրավ կը շահեին հաղթությունը։ ...Եթե փոքրիկներուն մեջ կար ԳԱՃԱՃՆԵՐՈՒՆ ՊԱՅՔԱՐԸ, մեծերուն մեջ ալ կար ՀԱԿԱՅԻՑ ՊԱՅՔԱՐԸ. աս՝ տեսակ մը տաղաչափական մրցում էր գլխավոր գրագետներուն կամ

վարժապետներուն մեջ: Կ'առաջարկվեր, օրինակի համար, տրված նյութի մը վրա քերթված մը հյուսել, որուն բառերը ԱՆԱՅԲ կամ ԱՅԲԱՀԱՎԱՔ ըլլային»:

(Այդպես էր գրել Վանանդեցի Գրիգորը: Նրան պատասխանել էր Ավետիս Պերպերյանը):

«Անցողակի դիտենք, որ այդ դարուն ամեն տաղաչափ՝ բանաստեղծ կ'ըսվեր: Այդ ժամանակի բանաստեղծությունը ընդհանրապես լուրջ և կրոնական էր, սովորաբար միջակ արտադրություններ՝ լեզվի, ներշնչումի և գաղափարի տեսակետով»:

(Բերվում է գործերի ցանկը)

«Մեր կրթական Տարեգրության մեջ հիշատակության արժանի կարևոր դեպք մը պատահած է 1828-ին: Պազարցի Կարապետ Պատրիարք, Սրբազումար Ժողովին հետ համախորհուրդ, կը կազմե առաջին անգամ ՈՒսումնական ժողով մը, որուն կ'անդամակցեին՝ քանի մը վարդապետներու հետ, ժամանակին նշանավոր վարժապետներեն ոմանք: Պե՞տք է ըսել, թե Գրիգոր Պատվելի ասոնց անհրաժեշտ խորհրդականը և գործակիցն էր: Առաջին անգամն էր, որ Պատրիարքարանը կը ջանար իր հսկողության տակ առնելու բոլոր կրթական հաստատությունները: Միայն ցավալի է դիտել հոս թե՝ ժամանակին կրոնական վեճերը կարևոր, ձեռնհաս անձերուն ժամանակը գրեթե բոլորովին գրավելով՝ արգելք եղած են հիշյալ ժողովրդին կրթական գեղեցիկ մտածումները գործի վերածելու, և ավելի արդյունավոր վիճակի մեջ դնելու կրթական հարկերը»:

Նույն 1828 թվականին ստեղծվում է Պեզեճյան վարժարանը:

1907 թ., հունիսի 16, N 30

«Միսիոնարական աշխատությունները սկսած են մեր մեջ 1831-են ետքը: Հայ եկեղեցիին բարձրագույն շրջանակներու՝ Միսիոնարներու հետ հարաբերությունը նախապես շատ բարեկամական եղած է: Կարապետ Պատրիարք շատ սիրալիր ընդունելություն մը կ'ընե Տոքթ. Կուտելի, երբ ան առաջին անգամ կ'այցելե (1831 թ.) և դարձյալ երկու տարի ետքը (1833 թ.)»:

1907 թ., հունիսի 23, N 31

Միսիոնարներու հետ այս բարեկամության վրա թշնամանքով են սկսում նայել:

«Փեշտիմալճյան բարեկամն էր Միսիոնարներուն՝ Տոքթ. Կուտելի և Տոքթ. Տուայթի, որոնց հետ սերտ հարաբերություն ունեցած էր մինչև իր մահը»:

(Տե՛ս՝ «Բյուրակն». «Ծագումը Բողոքականության ի հայս»)

«Առաջին Ավետարանականներու Հայտարարությունը»

«Փեշտիմալճյանի սկզբունքն էր ԱՌԱՆՑ ԱՆՋԱՏՎԵԼՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ԾՈՑԵՆ ԳՈՐԾԵԼ ՀՈՆ ԻՐ ԱՌԱՋԱԴՐԱԾ ԿՐՕՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

Աշակերտներից էին. Ֆիզիկա Պողոսը, Նիկողայոս Զորայանը, Թադևոս (հետո՝ Հովհաննես) Հյունքյարպեյենտյանը, Հովսեփ Վարդանյանը (Վարդան փաշա):

1907 թ. նոյեմբեր, N 46

Արդի հայերենը և իր շրջափոխության օրենքը

«Աշխարհաբարի ուսումը առաջին անգամ մեր դպրոցներուն մեջ մուտ կը գտնէ Իզմիրի մեջ, 1860-ի մոտերը, մեր առաջին աշխարհաբար գրողներուն մեկուն, Ստեփան Ոսկանի ձեռքով, և անկէ ետքը աշխարհաբարի տերականության պետքը կը սկսի զգալի դառնալ: Իրավ, անկէ առաջ, 1853-ին հրատարակված էր Ռուսինյանի ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ, բայց այն կարգ մը քմահաճ նորօրինակություններ կը կանոնադրեր լեզվին, և հետևաբար նպատակահարմար դասագիրք մը չէր և ընդունելություն չէր կրնար գտնել: Աշխարհաբարի առաջին կանոնավոր քերականության դասագիրքը կրնա համարվիլ բողոքական պատվելիի մը՝ Մ.Տ. Քիրեճյանի քերականությունը, հրատարակված 1864-ին: Անկէ տարի մը վերջ կ'երևեր Այտընյանի աշխարհաբար քերականության դասագիրքը, և անկէ ալ տարի մը վերջ, 1866-ին իր հոյակապ Քննական քերականությունը»: